



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

УКрЕР

350

1874

2004

ՀԱՅԿԱՆ ԱՐԱՄԻՆԻԱՆ ԱՊՏԱՆԻ ԿԱՆՈՆ

15. 11. 1874
Օրսի

ՀԱՄԱՐՈՏ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

Կարգադրելու էմ
Կարգադրանքի փոքր համար
(1874 թ.)

ՀԱՐԱԳՐԵՑ

Գոգարա Ներսիսյան
ՅՈՎՀԱՆՆԵՍ ՅԵՐ-ԱՐԲԱՀԱՄԵԱՆ

Կարգադրանք

Ի ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ



Համար
30/103

Կարգադրանք

ՈՒՍՏՈՎ (Դճելի վերայ)

ՎՃԱՆՆՈՒ ՑԵՐ-ԱՐԲԱՀԱՄԵԱՆ

9(47.925)
S-37

1874

Արամեան Կերոսիս

Սկիզբ

350

ՀԱՄԱՌՕՏ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

ԳՊԸՏԵՆՅՑ ՏՂՈՅ ՀԱՄԸՐ

ՀԱՐԱԳԵՑ

ՅՈՎՀՑ ՏԻՐ-ԱՐԲԱՀԱՄԵԱՆ

Ի ՏՊԸԳՐՈՒԹԻՒՆ

820



Պատկերի հանդեպ գրքին փառան և պայծառ հանձնարան հայրենեաց յերայ, զի հարազ գիրք նոցա պատրաստել և պահելով վանճառն ցեղէնի և պիտար յիշարարիտ՝ քիտապան ինչ գինը ստին ստնել նմա ի պարտոց իւրեանց և յերասանց խառնճաւիտան :

Ս. Վ. ԹԻՌՈՂՈՐԵԱՆ.

ՈՒՍՏՈՎ (Դճել զերայ)

ՏՊԱՐԱՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՏԻՐ-ԱՐԲԱՀԱՄԵԱՆ

1874.

38499 ան.

80857 5440100200

80857 80.08 808570004

80857000

808570000-0000-0000-0000

Дозволено Цензурою. Спб., 12 Сентября 1873 года.



4054
41
350.2004

л\$350

(21709.60) 9

ՅԱՌԱՋԱԲԱՆ

արամշնոյ արպագիրութեան .

ԱՋԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ Համառօտ դասագրքի կարօտութիւնը վաղուց տեսնելով՝ սիրով ձեռնարկեցի այնպիսի ձև տալ նորա, որ պատմութեան գլխաւոր գիտելիքն ամփոփուին մէջը և երկրորդական նիւթերով մեր դեռահաս մանկանց միտքը շճանրարեռնուին :

Եւ որպէս զի ո՛ր և էցէ աշակերտ մէ՛կ արբան մէ՛կ առանց դժ-
ւարութեան կարողանայ աւարտել այս դասագիրքը և Հայոց պատմութեան վերայ չափաւոր տեղեկութիւն ունենալ, նախ բոլոր պատմութիւնը քա-
ռան դաս բաժանեցի, այն մտքով որ եթէ շաքաթը մէ՛կ դաս անգամ սո-
վորի, դարձեալ մէկ տարուան մէջ քառասուն դասն ևս աւարտել կա-
րողանայ . և ապա՝ ամեն գլխոյն վերջը նոյն գլխոյ մէջ պատմածին Հա-
մառօտագոյն քաղուածքը դրի նոյն հարցական ոճովը, որպէս զի այն սեր-
տած դասերուն ծուծը միշտ տպաւորուած մնայ իւր մտքին մէջ :

Բայց թէ՛ որքան օգտակար կլինի իմ այս տեսակ յօրինուածը, —
ժամանակն ինքնին կորուչէ . առ ժամն ինձ բաւական առհասարակեայ է ոյն
բանիմաց Հայերուն խրախոյաները, որք ձեռագիրս տեսնելով՝ շուտով առ-
պազրել փութացուցին :


ԳՆՈՒՄ ԱՌԱՋԻՆ.

ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ

Հ Ա Յ Կ Ա Ն . Ջ Ա Ն Ց

ԴԱՍ Ա.

Հայկէն յինչև Արեւնայ.



Մեր ազգի սկիզբն երբ եղաւ և ուստի յառաջ եկաւ.

— Սկիզբը ջրհեղեղէն քիչ մի վերջն եղաւ, և Նոյ նահապետի Յաբէթ որդիէն յառաջացաւ:

Ո՛վ եղաւ մեր ազգի առաջին նահապետը.

— ՀԱՅԿ անունով քաջ մարդուն մէկը որ Յարեթի երրորդ սերունդն էր. վասն զի Յարեթի որդին էր Գամբը, Գամբրի որդին Թորգոմ և Թորգոմայ որդին ՀԱՅԿ:

Հայկայ ժամանակ ի՞նչ երեւելի անցք եղաւ Հայաստան.

— Նոյայ որդիքը Հայաստանի մէջ հետզհետէ բազմանալով ու երկիրը քիչ գարով իրենց, սկսան

ուրիշ տեղեր երթալ, որոց մէջ էր և Հայկ: Նոքա
 իւրեանց ճանապարհորդութեան ժամանակ երբ Բա-
 բելոնի Սեփար կոչուած մեծ դաշտը հասան՝ ամբար-
 տաւանութեամբ ուզեցին մէկ բարձր աշտարակ շինել
 այն տեղ, ուր Մատուած բարկանալով նոցա յան-
 զըզնութեանը՝ լեզուները խառնակեց:

Այն ժողովրդոց մէջ ո՞վ աւելի զօրաւոր էր.

— Բէլ կամ Նեֆրովն անունով պարծենկոտ մար-
 դուն մէկը, որ Վամայ թաւը՝ Վուշայ որդին էր:
 Սա ժողովրդոց մեծ մասը բռնութեամբ և խտա-
 մունքով իրեն հնազանդեցուց, և վերաները թագա-
 ւորեցն յետոյ՝ ուզեց Մատուծոյ տեղ պաշտուիլ:

Այն ժամանակ Հայկն ի՞նչ արաւ.

— Բեկայ ամբարտաւանութեանն ու յանդգնու-
 թեանը չդիմանալով՝ Հայաստան դարձաւ իւր երեք
 հարիւր քաջ մարդիկներովը, որ էին իրեն որդիքը,
 թոռներն ու նոցա ընկերացած հաւատարիմ ան-
 ձինքը:

Հայկ ի՞նչպէս սկսաւ իւր իշխանութիւնը.

— Հայաստան դառնալէն վերջը մէկ քաղաք շի-
 նեց ու Հայկաչէն անուանեց, և իւր խոհական կա-
 ռավարութեամբը բոլոր Հայաստանի բնակիչները սի-
 րով հնազանդեցընելով՝ տէր և գլուխ եղաւ ամենուն:

Բէլ երբ լսեց Հայկայ երթալն ի՞նչ արաւ.

— Պատգամաւոր յուղարկեց առ Հայկ որ դայ
 հպատակի իրեն, սպառնալով որ եթէ չհնազանդի՝
 տունով տեղով կը ջնջէ զինքը:

Հայկ ի՞նչ պատասխան տուաւ.

— Պատգամաւորը յետ դարձնելով՝ վեհանձնու-
 թեամբ մերժեց Բեկայ անիրաւ սպառնալիքը. և
 իւր քաջ տղայքը, ծառայքն ու հաւատարիմ
 մարդիկը հետն առած՝ Բեկայ բազմաթիւ զօրաց
 դէմ՝ Վանայ ծովուն մօտի ընդարձակ դաշտին մէջ
 պատերազմի պատրաստուեցաւ:

Պատերազմն ի՞նչպէս եղաւ և ո՞վ յաղթեց.

— Բէլ իրեն ուժին վերայ վստահանալով՝ քիչ
 զօրքով Հայկայ վերայ եկաւ. Հայկ դիմացն ելաւ
 և իրեններովը մէկտեղ այնպիսի քաջութեամբ պա-
 տերազմեցաւ, որ Բէլ զարհուրած ուզեց հետ դառ-
 նալ մինչեւ մնացեալ զօրաց օգնութեան հասնիլը.
 բայց Հայկ ժամանակ չորուսանելով՝ քաջեց իւր
 երեքթեան աղեղը և այնպիսի ուժով զարկեց
 Բեկայ կուրծքին, որ նետը նորա հագած երկաթի
 զրահէն անցնելով՝ կրօնրկէն դուրս ելաւ ու գետին
 խրուեցաւ:

Բեկայ մարմինն ի՞նչ եղաւ.

— Հայկ զմուսել տալով՝ տարաւ Հայաստանի

մէջ մէկ բարձր լեռան վերայ թաղեց, որպէս զի ամենքն եւս տեսնեն այն Աստուծոյ դէմ ապստամբած ու հպարտութեամբ լցուած մարդուն վերջը: Իսկ Բեկայ սպանուած տեղւոյն անուներ Գեղեցման կոչեց:

Բեկայ մահուանէն վերջը Հայկ ի՞նչ արաւ ու ո՞րչափ ապրեցաւ.

— Իսկոյն իւր բնակութեան տեղը դարձաւ և հայրաքար կառավարելով իւր տէրութիւնը՝ կարգեր կանոններ դրաւ, զանազան շինութիւններ արաւ, և 400 տարւոյ չափ ապրելէն վերջը ազգին իշխանութիւնը իւր Արմենակ կամ Արամանեակ որդւոյն յանձնելով խաղաղութեամբ մեռաւ:

Հայկայ ժամանակ ի՞նչ մասնաւոր բան պատահեցաւ Հայաստանի մէջ.

— Նոյ և իւր Նոյեմաբ կիներ վախճանեցան. յորոց առաջինը Նոյս լերին վերայ թաղուեցաւ, և երկրորդը՝ նոյն լեռան քովը, որ յետոյ Մարանդ, այսինքն Մայր անդ կոչուեցաւ, որ Ջեր Տայրն այնպէս է կը նշանակէ:

ԳԱՍ Բ.

Հայկայ յաջորդներէն մինչև Արամ.

Արմենակ ի՞նչ պէս մարդ էր և ի՞նչ գործեր արաւ.

— Հայկայ պէս քաջ ու հայրենասէր էր: Սա ուզեց որ Հայաստանի ամեն կողմը մարդաբնակ լինի. ուստի իւր Մանասաղ ու Խոտ եղբայրները Հարթ գաւառը թողուց ու ինքը Հայաստանի հիւսիսակողմը գնաց, ուր մէկ բարձր լեռան մօտ բնակութիւն հաստատելով՝ լեռը Արագած անուանեց և իւր բնակած տեղը՝ Արագածոպոյն:

Արմենակայ միւս եղբարց վերայ ի՞նչ կապամուտի.

— Նորա ևս Հարթ գաւառին մէջ սկսան զանազան քաղաքներ շինել, ինչպէս Մանասաղիկերաբլ, և հետզհետէ այնքան բազմացան որ հազարաւոր տարիներ ցեղերը շարունակուելով՝ իւրեանց անունովը Մանասաղեանք ու Խոտխոտանիք կոչուեցան: Սոցա պէս եղաւ նաև Արմենակայ Բաղ որդւոյն ցեղը, որ Բաղնիք ասուեցան:

Վանի տարի իշխեց Արմենակ, ո՞վ յաջորդեց նորա և ի՞նչ արաւ.

— Արմենակ քառասունևից տարի իշխեց և տէ-

րութիւնը իւր Արամայիս որդւոյն թողլով՝ խաղաղութեամբ մեռաւ: Արամայիս իւր հօրը հետեւելով իշխանութեան սկիզբները Արարատ գաւառին մէջ՝ Գեհազն զեափն մերձակայքը մէկ քաղաք շինեց, և իւր անունովը Արժառնի կոչեց, որ վերջը թագաւորանիստ եղաւ մինչեւ Հայկազանց իշխանութեան բարձուիլը: Իսկ զեար իւր Արատի թուին կոչմամբը Արատի կամ Արատի անուանեց:

Արամայիսի որդւոց վերայ ի՞նչ զիտելիք կայ.
— Կպատմեն թէ նորա որդւոց մէկը Շարս՝ սաստիկ շատակեր լինելուն պատճառաւ՝ Արամայիս Ախուրեան զեափն մօտ եղած պողաքեր դաշտերը յուղարկեց զինքը որ հանգիստ ապրի, որով բոլոր գաւառը նորա անուամբը Շարսի կոչուեցաւ:

Արամայիսին տեղն ո՞վ անցաւ և ի՞նչ կպատմուի վերան.

— Իւր Արատիս որդին, որ Արարատ լեռը Մասիս անուանեց: Սա երեք որդի ունէր. — Գեղամ, Փարսի և Յուսի անուններով, որոց հետ մէկտեղ Արարատ լեռան մերձակայքը երկու աւան շինեց՝ մէկ մէկէ միօրեայ ճանապարհի հեռաւորութեամբ, և Փառտիկն ու Յոյակին ընծայեց, որ յետոյ նոցա անուամբը Փարսիսիս ու Յուսիկիս կոչուեցան: Իսկ Գեղամը հետն առնելով՝ Արմաւիր դարձաւ. և

երեսուներկու տարի ազգին վերայ իշխելէն վերջը՝ տէրութիւնը Գեղամին յանձնեց ու մեռաւ:

Գեղամն ի՞նչ յիշատակի արժանի գործ արաւ.

— Սա քիչ ժամանակէն ազգին կառավարութիւնը իւր Հարսիս որդւոյն յանձնելով՝ զնաց Աւանայ ծովու եզերաց վերայ մէկ աւան շինեց և իւր անուամբը Գեղարտնի կոչեց. այս եղաւ պատճառ որ յետոյ ծովն ևս Գեղամայ ծով անուանեցաւ: Գեղամ այս տեղերը՝ իւր Արատի որդւոյն ընծայեց, և Արմաւիր գաւառը ժամօնակը մէկ նոր քաղաք շինեց Գեղամ¹ անունով, յորում և մեռաւ: Իսկ Միսակ այն տեղերը հետզհետէ շինութիւններով զարդարեց, որով բոլոր երկիրը նորա անունովը Արատիս կամ Արտիս² ասուեցաւ:

Հարմայի վերայ ի՞նչ կպատմուի.

— Սորա ժամանակ Հայաստանի շրջակայ ազգերը Հայոց խաղաղ տէրութեան դէմ թշնամանալով ու քանի մի տեղերուն տիրելով, Հարմա Արմաւիր քաղաքը քարէ պարիսպով պատեց, հոյակապ մարտկոցներ շինեց և երեսուներկու տարի իշխելէն ու Հայաստանը թշնամիներէն պաշտպանելէն յետոյ՝ տէրութիւնը իւր Արամ որդւոյն թողուց:

¹ Այս քաղաքը Գեղամայ Գործի թուր նորոգեց, որոյ անունովը յետոյ Գործի ասուեցաւ:

ԴԱՍ Գ.

Արամ և նորա Գաղաթիւնները.

Արամ ինչով անուանի եղաւ և ի՞նչ յաղթութիւններ արաւ.

— Արամ անուանի եղաւ իւր զանազան քաջութիւններովը, բնական խելացիութեամբն ու պատերազմի յարմարութեամբը, որով Հայկազանց մէջ ամենէն մեծանունը եղաւ: Սորա մեծամեծ յաղթութեանց առաջինն այս էր, որ երբ Հայաստանի մէկ մասին վերայ Մարաց կամ Մեդացոց Նի-Կար իշխանին բռնանալը տեսաւ, յիտուն հազար քաջ զօրք ժողովեց սաստիկ կոտորած արաւ, զՆիւքարը բռնեց Արմաւիր բերաւ և հրաման արաւ որ մէկ բարձր աշտարակի ծայրը հանելով՝ երկաթէ ցից զարնեն նորա ճակատը: Արամ Նիւքարի երկրին վերայ հարկ դրաւ մինչև Օպարազ լեռը, և երկրին կառավարութիւնը Միսակեանց յանձնեց:

Արամայ երկրորդ պատերազմը որո՞յ դէմ եղաւ.

— Բարեւազոց Բարդաճ իշխանին դէմ, որ քառասուն հազար հետևակ և հինգ հազար ձիաւոր զօրքով Հայաստանի վերայ վազեց. բայց քաջայաղթն Արամ յանկարծ վերայ հասնելով՝ թշնամոյն զօրքին

կէսը կոտորեց, կէսը հալածելով՝ Սորդուաց ազգին մէջը ցրուեց և զինքն ևս բռնելով սպաննեց:

Արրորդ յաղթութիւնն ի՞նչ կերպով կատարուի.

— Ապագովկացոց Պայասլն իշխանը լսելով որ Արամ քառասուն հազար զօրքով իւր երկրին մօտերն եկել է, և վախնալով որ Ապագովկիոյ ևս տիրէ, քոյր ուժովը Արամայ դէմ ելաւ. բայց Արամ սորա ևս սաստիկ կոտորածով հալածելէն ու մինչև Միջերկրական ծովուն կղզիները փախցընելէն վերջը բոլոր Ապագովկիոյ տիրեց, Մշակ անունով մէկ հայ մարզպան դրաւ այն տեղ, քաղաքին մէջ տասը հազար զօրք թողուց և հրաման հանեց որ տեղւոյն բնակիչները մեր լեզուն սովորելով հայերէն խօսին:

Մշակ մարզպանը Ապագովկիոյ մէջ ի՞նչ երևելի գործ արաւ.

— Մէկ քաղաք շինեց և իւր անունովը Մշակ անուանեց, որ Ապագովկացիք լաւ հնչել չկարողանալով՝ Մաժակ կասէին: Այս քաղաքն էր որ վերջը Տիգրան երկրորդի քրոջ որդին փոքր Միհրդատը նորոգելով ու ընդարձակելով՝ ի պատիւ Հռովմայեցոց Յուլիոս Կեսար ինքնակալին Աեսարիա անուանեց, որ հետզհետէ աղաւաղուելով՝ այժմ Պայտերի կամ Պայտերի կասուի:

Ապագադովկիոյ օրերէն վերջը Արամ ի՞նչ արաւ .

— Հայաստանը թշնամիներէն ապահովցած տեսնելով՝ սկսաւ նորա բարեկարգութեանը վերայ հոյ տանել և նոր նուաճած երկիրները հայրաքար խնամել . որով Արամայ քաջայաղթ անուներ օտար ազգաց մէջ այնքան տարածուեցաւ, որ մեր ազգը նորա անունովն սկսան Արմէն կամ Արմէնի (Արամեան) կոչել և մեր աշխարհը Արմէնիս :

Արամայ ժամանակ ո՞վ թագաւորեց Ասորեստանի մէջ .

— Նինոս : Սա իրմէ յառաջ եղած քաջերուն պատմութիւնը կարդալով՝ տեսաւ որ Բելայ սպաննողը մեր Հայկ նահապեան եղած է . ուստի թէև ի սկզբբան պատերազմի պատրաստեցաւ որ նորա յաջորդներէն առնու վրէժը, բայց Արամայ քաջութիւններէն վախնալով՝ յետ կեցաւ զիտաւորութենէն, միանգամայն և հետը բարեկամութիւն հաստատելու համար՝ մարգարտազարդ թագ յուղարկեց Արամայ :

Արամ ո՞րչափ ժամանակ իշխեց ու երբ մեռաւ .

— Յիսուէնութը տարի Հայաստան աշխարհը կառավարեց՝ տէրութեան սահմանները մեծամեծ քաջութիւններով ընդարձակեց, հայրենի լեզուն Ապագադովկիոյ մէջ տարածեց և իւր քաջահռչակ ու

պանծալի անունը մեր ազգի անուանը հետ աննահացընելէն յետոյ՝ տէրութեան իշխանութիւնը իւր Արամ որդւոյն յանձնեց ու Քրիստոսէ 1769 տարի յառաջ մեռաւ :

ԳԱՍ Գ .

Արայէն Ռնէլ Պարոյր .

Արայի վերայ ի՞նչ կ'պատմուի .

— Արա իւր հօրը նման հոյ տանելով Հայաստանի բարեկարգութեանը՝ շատ պատիւ ընդունեցաւ Նինոսէն . և իւր բնական աշխարհը (որոյ զխաւոր քաղաքն էր Արմաւիր) հետզհետէ այնքան շէնցուց որ իւր անունովը Արարայ կամ Արարայեան կոչուեցաւ : Սա իւր գեղեցկութեան համար Արամ Գեղեցիկ ասուեցաւ, և այն էր պատճառը որ Ասորոց Նինոս թագաւորի Շամիրամ անունով կիներ՝ իւր էրկանը մահուանէն վերջը՝ Արայի հետ կարգուիլ ուզելով, խոստացաւ նորա որ իրեն հետ մէկտեղ Ասորեստանի ևս թագաւորէ Արամ . բայց երբ վերջինս իւր առաքիլութիւնն ու ողջախոհութիւնը պահելով՝ յանձն չառաւ, Շամիրամ պատերազմի ելաւ Արային դէմ, և կռիւը անպրջած ժամանակ Արայն

զարնուեցաւ ու մեռաւ, թէև Շամիրամ պատուիրած էր իւր քաջերուն որ ողջ բռնեն զինքը:

Շամիրամ ինչ արաւ Հայաստանի մէջ.

— Մեր աշխարհի պողաբեր հողը, մաքուր ու զովարար օդը, աղբիւրներուն ու գետերուն շատութիւնն ու յստակութիւնը տեսնելով՝ ուզեց իրեն մէկ ամարանոց շինել. այս բանիս համար Աղթամարայ ծովուն եզերքն ընտրեց ու այնտեղ մէկ ամուր բերդաքաղաք շինել տուաւ Շամիրամայէրս անունով, որ յետոյ Վան կոչուեցաւ:

Հայոց իշխանութիւնը որո՞յ յանձնեց Շամիրամ.

— Արայի Ասորոս որդուն, որ երբ Ասորոց թագուհւոյն հետ միացած Շամիրամայ Անուան անունով ապստամբ որդւոյն դէմ պատերազմի ելան՝ երկուքն ևս յաղթուեցան ու մեռան:

Ո՞վ յաջորդեց Աարդոսի.

— Նորա Անուշան որդին, որ թէև իւր տասնևչորս տարեկան հասակին զերի ընկած էր Նինուասայ ձեռքը, բայց իւր սիրելի լինելովն ու բարեկամաց միջնորդութեամբը ազատեցաւ գերութենէն, եւ կաւ իւր հայրենեացը տիրեց, և վաթսուն տարի ազգը կառավարելէն վերջը մեռաւ:


Անուշանի տեղն ո՞վ անցաւ.

— Ինքն անդաւակ լինելով՝ Հայկայ ցեղէն մէկմէկու ետեէ զանազան անձինք իշխեցին մինչև Պարոյրի թագաւորելը, որոց անուները միայն գրուած են պատմութեան մէջ, և են. Պարէր, Աբթալ, Օսան, Փարնակ, Սուր, Հասանակ կամ Հոնակ, Վալարակ, Հայկակ առաջին, Աբթալ առաջին, Առնակ, Հասարչ առաջին, որ Հասարչան կամ Արարչ քաղաքը շինեց Վասպուրականի մէջ. այլ և Նորայր, Վարամ, Սար, Գարակ, Հրանդ առաջին, Լեյակ, Գլակ, Հօրոյ և Օարմայր:

Չարմայրայ վերայ ինչ կպատմուի.

— Սորա իշխանութեան ժամանակ Յունաց և Տրոյացոց մէջ պատերազմ բացուելով՝ Տրոյացոց Պրիամոս թագաւորը օգնութիւն խնդրեց Ասորեստանցոց Տիգրանոս թագաւորէն և մեր Չարմայր նահապետէն: Տեստմոս չկամենալով անձամբ պատերազմի երթալ, զօրքը մեր Չարմայրին յանձնեց, և սա իւր զօրաց հետ միացրնելով՝ Տրոյիս գնաց, ուր պատերազմն սկսուելուն պէս՝ թէև Հեկտորի հետ միացած մեծամեծ հարուածներ արին, բայց վերջը Յոյնք աւելի զօրաւոր գտնուելով՝ երկուքն ևս Աքիլլէսէն սպանուեցան:

222
4054
11501



350-2004
121709-69

Չարմայրէն յետոյ որչափ նահապետք նստան
 Հայաստանի մէջ .

— Տասներկու, որք նշանաւոր զործ չանելով՝ ա-
 նունները միայն զխտեմք պատմութենէն, այսինքն՝
 Շահարչ Բ, Պերճ Ե, Աբրահամ, Պերճ Բ, Բաղդ-
 Աբրահամ, Հոյ, Յոսափ, Աբրահամ Բ, Ապրակ,
 Փարսապալ Ե, Փարսափ Բ և Անյորդի: Վերջինս
 Փառնակ երկրորդի անհոգութենէն Ատրուոյ ձեռքն
 անցած քաղաքները կրկին զբաւեց ու 17 տարի Հայ-
 աստանը կառավարելէն յետոյ՝ տէրութիւնը իւր Պա-
 րայ որդւոյն թողուց, և ինքը Վրիստոսէ 748 տա-
 րի յառաջ մեռաւ:

ԴԱՍ Ե.

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Պարոյրէն ինչ Երոսանք արաջին.

Պարոյրին վերայ ինչ զխտելք կայ .

— Սորա ժամանակը Ատրեստանի մէջ Սարգա-
 նապաղ անունով մէկ անհոգ թագաւոր կար, որոյ
 իշխանութեան տակ էին Մարք, և որոյ վերայ կու-
 սակալ զբուսած էր Վարբակէս մեղացին: Այս կու-
 սակալը Սարգանապաղին դէմ ապստամբելով՝ դաշ-

նակից եղաւ մեր Պարոյր նահապետին ու Բաբելոնի
 Բեղէսի իշխանին հետ, և Անուէի տիրելէն վեր-
 ջը՝ երկուսին ևս թագ և թագաւորական զաւազան
 սուաւ. որով Պարոյր Հայկազանց իշխանութեան
 առաջին պատկաւոր թագաւորն՝ եղաւ՝ և 48 տա-
 րի թագաւորելէն վերջը՝ ազգին կառավարութիւնը
 իւր Հրաչեայ որդւոյն յանձնելով մեռաւ:

Պարոյրի ժամանակ ուրիշ ինչ պատահեցաւ .

— Ատրուոյ Սենեքերիմ թագաւորի Արթուրէի և
 Սահապար որդիքն իւրեանց հայրն սպաննելով՝ Հայ-
 աստան փախան, և յետոյ մեծամեծ նախարարու-
 թիւններ ձեռացան՝ Սահապարի կամ Սահապարի՝ որ-
 պէս նաև Արթուրի և Վահագնի անուններով:

Պարոյրէն յետոյ որոնք թագաւորեցին .

— Հրաչեայ, Փարսապալ Բ, Պարճոյճ, Սահապար,
 Փարսապալ և Հայկափ Բ: Վերջինս Բաբելոնացոց Ա-
 րուոզդոնտոր թագաւորին հետ միանալով Արուսա-
 ղեմի վերայ գնաց, և յաղթութեամբ վերադառնալու
 ժամանակ հետը մէկտեղ Հայաստան բերաւ Շահարչ
 անունով հրեայ իշխանը, որոյ Բաբելոնացի որդւոյն
 Ճիւղէն Բազրատունեաց նշանաւոր ցեղը յառաջացաւ:

1 Պարոյրէն առաջ թէև Հայք Ատրեստանի իշխանութեանը տակ
 չէին, բայց մեր ազգի նահապետները Բաբելոնի չէին կոչուած:

Ո՞վ յաջորդեց շայկակայ .

— Իւր որդին Լըրուանդ Ա, որոյ քրոջը հետ Վալարդէն իշխանը կարգուեցրով՝ Վասաղ զետոյն վերայ եղած Արտիմէդ քաղաքին տեղը Վալարդէն աւանը շինեց, որ յետոյ Վաղարշ Թագաւորը նորոգեց և Վաղարշապատ անուանեց : Այս Լըրուանդը միայն 4 տարի Թագաւորելով՝ Սակաւկէաց ասուեցաւ :

ԴԱՍ Զ.

Տեփրան ասաջինէն թեւէ շայկակայնց Ռաֆառուրու-
րու-թեան վերջանալը .

Ո՞վ էր Տեփրան ասաջին և ի՞նչ նշանաւոր գործեր արաւ .

— Լըրուանդայ որդին, որ շայկակայնց մէջ աշխարհակալութեան կողմանէ ամենէն երեւելի Թագաւորը կհամարուի : Սա շայկայ ու Արամայ նման հայրենասիրութեամբ լըրուած՝ շրջակայ ազգաց տիրեց, և Յոյները նուաճելով ընդարձակեց իւր տէրութեան սահմանները . Ժողովրդեան մէջ կարգ կանոն դրաւ և զինուորական դասը կրթութիւններով բարեկարգեց :

Սարաց Աժդահակ Թագաւորն ինչո՞ւ Թշնամացաւ Տիգրանայ հետ և ի՞նչ արաւ .

— Պարսից Աիւրուս Թագաւորին հետ բարեկամութեան դաշինք ղենելուն համար Թշնամացաւ . բայց տեսնելով որ քաջութեամբ պիտի չկարողանայ Տիգրանայ դէմ ելնել, առ երեսս բարեկամ ձևացաւ . նորա Տեփրանուհի քոյրը խարդախութեամբ կնութեան առաւ, որուն իւր սրտի չարութիւնը յայտնելով՝ ուզեց հաւատացնել Թէ նորա Տիգրան եղբոր Աիւրուսին հետ միանալուն պատճառն այն է, որ իւր (Աժդահակայ) փառացը նախանձելով կուզէ Սարաց Թագաւորութիւնը յափշտակել . ուստի պէտք է եղբորդ կեանքը մէկ կերպով վերցնելու հնարքը գտնես, ասաց, որ մեր կեանքը ասպահովայ . ասպա Թէ ոչ՝ տիկնութենէ կը ձգեմ զքեզ :

Տիգրանուհին կատարեց Աժդահակայ կամքը .

— Ոչ . վասն զի նա Թէև ի սկզբան առ երեսս ուրախութեամբ յօժարացաւ, բայց յետոյ Աժդահակայ չար դիտաւորութիւնը հաւատարիմ մարդկանց ձեռքով ծածկաբար խնայուց իւր Տիգրան եղբորը, և սա խոհեմութեամբ պատերազմն ուշացրելով՝ նախ իւր Տիգրանուհի քոյրը Աժդահակայ ձեռքէն ազատեց, և ասպա Աիւրուսի հետ մէկտեղ Սարաց աշխարհը մտնելով՝ անձամբ սպաննեց զԱժ .

դահակ, որով կատարեալ հատուցումն եղաւ նորա սոսկալի խորհրդոյն :

Աժդահակէն յետոյ Տիգրան ի՞նչ արաւ և երբ մեռաւ .

— Աժդահակայ Անուշ անունով առաջին կինը, որդիքն ու Մարաց աշխարհէն բերած տասը հազար զերինները Հայաստանի Արարատ նահանգին մէջ բնակեցուց, յորոց սերեցան Վաչագապոսն և կամ Մուրացան կոչուած ցեղը : Իւր շինած Տեփրանակերտ (Տիարակերտ) քաղաքը Տիգրանուհի քրոջն ընծայեց, յորմէ Ռոբան կամ Ռոբանիկ ասուած ազատ ցեղը յառաջացաւ . և 45 տարի հեռատեսութեամբ ու խոհեմութեամբ Հայաստանը կառավարելէն վերջը՝ Քրիստոսէ 520 տարի յառաջ վախճանեցաւ :


Ո՞վ էր Վահագն և ի՞նչ կատմուի վերան .

— Տիգրան առաջնոյ երեք որդւոց կրտսերը, որ իւր քաջութիւններուն համար ժամանակակիցք վերան շատ երգեր յօրինեցին, և Վրացիք նորա արձանը կանգնելով՝ երկար ժամանակ զինքը պաշտեցին : Սորա ցեղը Վահանի կամ Վահանի կոչուեցաւ :

Վահագնէն յետոյ որո՞նք թագաւորեցին .

— Որդւոց որդի յաջորդելով՝ թագաւորեցին Արտան, Ներսէհ, Օսրէհ, Արփոս և Բայփոս, որոց վե-

րայ մանաւոր պատմութիւն չկայ : Բայցամէն վերջը թագաւորեց Վահ, որ Համիրամակերտ քաղաքը նորոզելով՝ իւր անուամբը Վան կոչեց : Սորա յաջորդն եղաւ Վահէ, որ Աղեքսանդր մակեդոնացւոյն զէմ՝ պատերազմած ժամանակը մեռաւ :



ԴԱՍ Է .

ԿՈՒՍԱԿԱԼՔ .

Մեհրանէն թիւն Արոսապոյ վերջէն .

Վահէէն յետոյ որո՞նք իշխեցին Հայաստանի .

— Մակեդոնացւոց կամ Ասորւոց թագաւորներէն յուղարկուած իշխանները, որ Արտան կասուէին : Սոցա մէջ առաջինն եղաւ Մեհրան, որ հինգ տարի Հայաստան կենայէն վերջը՝ Աղեքսանդրի Պերսիկոս զօրապետը յետ կանչեց զինքը, և տեղը՝ Նեոպոլիս անունով մէկ իշխան յուղարկեց, որ իւր չար բնաւորութեամբը մեծ նեղութիւն տալով Հայոց, Արոսապոյ անունով Սիւնեաց քաջ նախարարը՝ Վապադովկացւոց թագաւորի Արիթէոս որդ-

ւոյն խորհրդովն ասպտամբեցաւ Մակեդոնացւոց տէրութենէն ու «Նէոպտղոմէոսի դէմն ելնելով՝ զինքը Հայաստանէն հալածեց:

Պերդիկկաս Ադուարդայ ասպտամբութիւնը լսելով ի՞նչ արաւ.

— Իսկոյն Ասպաղովկիոյ Ե-ճէնէս կուսակալը յուղարկեց, որ բռնութեամբ հնազանդեցընեւ չկարողանալով՝ մարդ յուղարկեց Ադուարդայ որ կրկին ընդունէ զՆէոպտղոմէոս, և տարուէ տարի նորա ձեռքովը տրուի Մակեդոնացւոց՝ Հայաստան աշխարհին հարկը:

Ադուարդ ընդունեցան Եւմենեսի առաջարկութիւնը.

— Այո. վասն զի այնուհետև «Նէոպտղոմէոսը իբրև Ադուարդին երկրորդը կեցաւ Հայաստանի մէջ, մինչև որ Եւմենէսէն ասպտամբելով՝ պատերազմին մէջ սպանուեցաւ. յետ որոյ Ադուարդ միապետ մնաց և 33 տարի իշխելէն վերջը մեռաւ:

Ադուարդէն յետոյ որո՞նք իշխեցին Հայաստանի.

— Հրանոս և Արտաշատ: Վերջինս Սելևկիացւոց (Ստորւոց) Անտիոքոս Գ. թագաւորէն ասպտամբելով՝ սկսաւ ինքնազլուխ տիրել Հայաստանի. բայց երբ

Անտիոքոս շատ զօրքով Հայաստանի վերայ եկաւ, Արտաւազ ընծաներ յուղարկեց ու սիրտն առնելով խոստացաւ հարկը վճարել. և այնպէս 50 տարի իշխելէն վերջը մեռաւ:

Արտաւազին տեղն ո՞վ դրուեցաւ կուսակալ.

— Արտաշիս և Օւհերայոս հայ իշխանները, որք Հռովմայեցւոց օդնութեամբը Սելևկիացւոց դէմ ապրտամբելով՝ Օւհերայոս ֆոքը Հայոց վերայ թագաւորեց, իսկ Արտաշիս Մեծ Հայոց վերայ, ուր Արտաշատ քաղաքը շինեց:

Արտաշիս միշտ ինքնազլուխ մնաց.

— Այ. վասն զի Անտիոքոս Գ. թագաւորելուն պէս պատերազմի ելաւ Արտաշիսայ վերայ և բռնութեամբ հարկադրեց սովորական հարկը տալ Սելևկիացւոց: Արտաշիսէն յետոյ իշխեց Հայաստանի՝ իւր որդին Արտաշատը՝ վերջին կուսակալը, որ տասը տարի իշխելէն յետոյ Պարթևաց Արշակ թագաւորէն յաղթուեցաւ:



ՔԱՂՈՒԱԾՔ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ՀԱՅԿԱԶԱՆՑ ԻԾԽԱՆՈՒԹԵԱՆ.

ԴԱՍ Ը.

Հայկէն մինչև Պարոյրի Ռաֆայիլի.

Ո՛վ եղաւ մեր ազգին նախահայրը .

— ՀԱՅԿ, որ Թորգոմայ որդին էր կամ Նոյ նահապետի թոռան թոռը: Սա Բաբելոնի աշտարակաշինութեան ժամանակ Բեւայ յանդգնութիւններուն համբերել չկարողանալով, իւր որդիքն ու թոռուքը առաւ Հայաստան գարձաւ, ուր յիսուն տարի նահապետութիւն անելով Քրիստոսէ 2026 տարի յառաջ մեռաւ:

Արմենակայ վերայ ի՞նչ կպատմուի.

— Արփնա՛! որ իւր Հայկ հօրը պէս քաջ ու հայրենասէր էր, Արմաւիր քաղաքը շինեց, Հայաստանի ամէն կողմը շէնցուց, և իւր Մանասուկ ու Խոր եղբայրները այլ և այլ տեղեր յուղարկեց քաղաքներ շինելու:

Արմենակէն մինչև Արամ որո՞նք իշխեցին.

— Երբ Արմենակ մեռաւ, տեղն անցաւ իւր որդին Արամայիս: Սորա յաջորդն եղաւ Ամասիա, որ Արարատ լեռն իւր անունովը Մասիս անուանեց: Իւր տեղն անցաւ Գեղամ որդին, որ Սեանայ ծովակը՝ Գեղամայ ծով անուանեց: Գեղամայ յաջորդն եղաւ Հարմա, որ զանազան շինութիւններ արաւ Հայաստանի մէջ և տերութիւնը Արամ որդւոյն թողւով մեռաւ:

Արամայ վերայ ի՞նչ գիտելիք կայ.

— Արամ հայրենասէր ու քաջ լինելով՝ Հայաստանը այնպէս բարեկարգեց, որ բոլոր մերձակայ ազգերը մեր աշխարհին վերայ նախանձելով՝ հետզհետէ պատերազմի ելան նորա դէմ. բայց ամենքն ևս յաղթուեցան. վասն զի Արամ՝ Մարաց Նիւբար իշխանը բռնելով՝ Արմաւիր քաղաքին մէջ ցից զարկաւ ճակատը, Բաբելոնացոց Բարշամ իշխանն սպաննեց և կա-

պաղովկացոց Պայսապիս իշխանը հալածեց ու նորա երկրին տիրելով՝ հրաման տուաւ ընտելիներուն հայերէն խօսելու, որով Արամայ քաջութեանց համբաւը մինչև հեռաւոր տեղեր երթալով՝ մեծամեծ թագաւորը անգամ սկսան վախնալ իրմէ, ինչպէս Ասորոց Նինոս թագաւորը, որ Արամայ յաղթութիւնները լսելով՝ մէկէն մարգարտազարդ թագ յուղարկեց ու բարեկամութիւն հաստատեց հետը:

Ինչո՞ւ օտարազգիք մեր ազգը Արմէն կամ Էրմէնի և մեր երկիրն Արմենիա կանուանեն.

— Վասն զի Արամայ ժամանակն սկսան ճանաչել մեր ազգը և հետեւապէս մեր երկիրը:

Արամէն մինչև Պարոյր որո՞նք իշխեցին.

— Արամայ յաջորդն եղաւ իւր որդին Արա Գեղեցիկ, յետոյ կարգոս, Անուշաւան և այլն, ընդ ամենայն մինչև Պարոյր 35 նահապետք (1769—748), որք ամենը մեկտեղ 1021 տարի իշխեցին: Սոցա շատին անունը և քանի մի հատին համառօտ պատմութիւնը միայն գիտեմք:

ԴԱՍ Թ.

Պարոյրէն մինչև Հայկազանց Ռաֆայիլի

Հայկազանց տերութեան առաջին թագաւորն ո՞վ եղաւ.

— Պարոյր, որ Մարաց Վարդակէս իշխանէն թագ և թագաւորական գաւազան ընդունեցաւ: Սորա ժամանակ Հայաստան փախան Ասորոց Սենեբերիմ թագաւորի որդիքը, յորոց Աբդուսնի՛տ և Սոնատուս՛տ մեծ նախարարութիւնները ձեւացան:

Պարոյրէն մինչև Տիգրան որո՞նք թագաւորեցին.

— Հրաչեայ, Փառնաւազ երկրորդ, Կոռնակ, Փաւոս, Հայկակ երկրորդ և Երուանդ առաջին (700—565), որոց վերայ պատմութիւն չունե-

նայով՝ միայն այսքանս զիտեմք, որ Հայկակ երկրորդը Բաբելացոց Նաբոլոդոնոսոր թագաւորին հետ Երուսաղէմն առնելու համար նիզակակցութիւն անելով՝ յաղթութեամբ վերադարձած ժամանակը՝ Հայաստան բերաւ Շաֆթար անունով հրեայ իշխանը, որոյ Բագարատ որդիէն Բագրատունեաց ցեղը յառաջացաւ:

Տիգրան առաջինն ո՞վ էր:

— Երուանդ առաջնոյ որդին, որ իւր վառ հայրենասիրութեամբը, զարնազան քաջութիւններովն ու ժողովրդոց և զինուորաց մէջ արած բարեկարգութիւններովը Հայկազանց ամենէն երևելի թագաւորն եղաւ: Սա շինեց Տիգրանակերտ քաղաքը և իւր Տիգրանուհի բրոնզ ընծայեց, որ Մարաց Աժդահակ թագաւորի կինն էր:

Վաչագանէն մինչև Վաչէ քանի՞ թագաւորք եղան:

— Ութը թագաւորք, այսինքն Վաչագան, Առաւան, Ներսէս, Չարէզ, Արմոգ, Բայդամ, Վան և Վաչէ [520—328], որ Աղէքսանդր Մակեդոնացիէն յաղթուելով մեռաւ և Հայկազանց տէրութիւնը վերջացաւ:

Վաչագան և Վան թագաւորաց վերայ ի՞նչ կպատմուի:

— Վաչագանը իւր Տիգրան հօրը պէս զարմանալի քաջութիւններ անելով՝ վրան շատ երգեր յորինեցին, և Վրացիք նորա արձանը կանգնելով աստուծոյ տեղ պաշտեցին: Իսկ Վան այսու միայն անուանի է, որ Շամիրամակերտ քաղաքը նորոգելով՝ Վան անուանեց:

Հայկազանց թագաւորութենէն յետոյ որո՞նք կառավարեցին մեր Հայաստան աշխարհը:

— Մակեդոնացոց կամ Ասորոց թագաւորներէն յուզարկուած իշխանները, որք կուսակալ կասուէին [325—149]: Սորա ութը հատ եղան, որք իւրեանց կուսակալութեան միջոցին, այսինքն 177 տարուան մէջ Պաասներէ զատ օգուտ չտուին Հայոց:

Հայկազանց տէրութիւնը քանի՞ տարի բլեց, ո՞րքան տիրապետք ու կուսակալներ ունեցաւ և երբ վերջացաւ:

— 1749 տարի բլեց, 59 տիրապետք և 8 կուսակալներ ունեցաւ ու Քրիստոսէ 150 տարի յառաջ վերջացաւ:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԳ

ՔԱԳԱՆՈՐՈՒԹԻՒՆ

ԱՐՇԱԿՈՒՆԵՆՑ

ԴԱՍ Ժ.

Վաղարշակէն մինչև Արշակ աստուծոյն:

Արշակունեաց թագաւորութիւնն յուճմէ՞ սկսաւ.
— Արշակ անունով Պարթև թագաւորէն սկսաւ, որ Սելևկիացոց կամ Ասորեստանեաց յաղթեց, և Պարթևաց թագաւորութեան սահմանները հետզհետէ ընդարձակելով՝ եկաւ Հայաստանի ևս տիրեց, երկրին բնակչաց վերայ իւր Վաղարշակ եղբայրը թագաւոր դրաւ (Քրիստոսէ 149 տարի յառաջ), որով Արշակունեաց թագաւորութիւնն սկսաւ:

Վաղարշակ ի՞նչպէս սկսաւ իւր թագաւորութիւնը.

— Արշակայ պատուէրին համաձայն պատերազմի եղաւ Հայաստանի հիւսիսային-արևմտեան կողմն և

դած ազգաց դէմ, և յաղթութեամբ դառնալէն վերջը Մծբին քաղաքի մէջ դրաւ ակոռը, որ Ասորոց երկրին ու Հայաստանի մէջտեղերը կրնին: Աղարշակ այն պատերազմին մէջ Հայոց քաջութիւնն ու տիրասիրութիւնը տեսնելով՝ իրեն ազնիւ բարբովը՝ բնական հետաքրքրութիւն ունեցաւ նոցանախնեաց պատմութիւնը կարդալ և իմանալ. բայց Հայաստանի մէջ չգտնելով այն պատմութիւնը, Մար Աբաս Ապրիմ անունով ասորի ուսումնականը յուզարկեց Նինուէ, ուր Աղարշակայ եղբօր մեծին Արշակայ հրամանաւը գնաց Մար Աբաս տեղւոյն թագաւորական գրատան մէջէն մեր ազգի պատմութիւնը քաղեց ու Հայաստան բերաւ:

Աղարշակ այնուհետեւ ի՞նչ կարդադրութիւններ արաւ.

— Մեր ազգի ծագմանն ու որպիսութեանը վերայ ստուգութեամբ տեղեկանալէն վերջը՝ զանազան բարեկարգութիւններ արաւ, այսինքն.

Ա, Հայաստանի այլևայլ սահմաններու և քաղաքաց մէջ կոսակալ, քասասոր, էրասար և Գրագիւր նշանակեց.

Բ, Բագարաս իշխանին Արշակունի թագաւորաց թագադիր կարգեց.

Գ, Բանանիք իշխանին հանդերձապետ նշանակեց.

Դ, Խոռխոռունեաց տոհմէն սպառազէն թիկնապահներ յօրինեց.

Ե, Գաս իշխանին արքունի որսորդ կարգեց.

Ջ, Արսի ժամանակ իւր առջևէն արծուէկիրք կամ արծիւ տանողներ նշանակեց՝ որոց տոհմը Արծրունի կոչուեցան.

Լ, Արսորդաց վերայ վերակացուք սահմանեց, որք որսացուած բաղէներն ու հաւերն ընդունելով՝ Հանունի կոչուեցան.

Ը, Գինիներուն վերայ Գին անունով իշխանը մասնաւոր տակառապետ նշանակեց, որոյ ցեղը Գանունի ասուեցաւ.

Թ, Տիգրանուհոյ ազատ ցեղէն արքունի դրան պահանջողաց վերայ չորս սպառազէն անձինք որոշեց.

Ժ, Իւր երկրորդը սահմանեց լինել Մարաց Ագահակ թագաւորի ցեղէն մէկը, որով Մարացան, այսինքն Մարաց Գէր կամ Ալեապպալունի կոչուած ցեղն որոշուեցաւ:

Աւրիշ ի՞նչ յիշատակի արժանի գործ արաւ Աղարշակ.

— Իւր թագաւորութիւնը ճշմարտութեամբ և

արդարութեամբ զօրացընելու համար երկու անձինք ընտրեց, յորոց մէկուն իշխանութիւն տուաւ որ երբ ինքը (Վաղարշակ) անիրաւ դատաստան կամ հրաման հանէ, իսկոյն իմացընէ թագաւորին տուած հրամանին անիրաւութիւնը. իսկ միւսին իրաւունք տուաւ որ տէրութեան մէջ զանուած չարագործները պատժելու մասին՝ թագաւորին անհոգ եղած ժամանակը՝ իրաւունք ունենայ իւր միտքը ձգելու: Այլև որդւոց մէջէն միայն անդրանիկը պահեց արքունեաց մէջ, և մնացեալները Հաշտենից զաւառն յուղարկեց:

Վաղարշակ քանի՞ տարի թագաւորեց և ո՞ւր մեռաւ:

— Քսաներկու տարի թագաւորեց, և տէրութեան կառավարութիւնը իւր Արշակ որդւոյն յանձնելով՝ Սծբին քաղաքին մէջ խաղաղութեամբ մեռաւ:



ԴԱՍ ԺԱ.

Արշակ առաջինէն ինչև Տեգրան երկրորդ.

Արշակ առաջնոյն վերայ ի՞նչ կ'պատմուի.

— Սա իւր Վաղարշակ հօր խելացի կառավարութեանը հետևելով՝ տէրութիւնը առաւել ևս բա-

րեկարգեց. Աովկաս լեռան կողմերէն Հայաստան գաղթող Բուլղարները՝ մեծ խնամքով ընդունեց ու Բասեն գաւառին մէջ բնակեցուց, որով նոցա Վրացի իշխանին անունէն, բոլոր զաւառը Վանահայաստանեցաւ:

Արշակ որո՞ց դէմ պատերազմեցաւ և ե՞րբ մեռաւ.

— Հայոց տէրութենէն ապստամբած պոնտացիներուն դէմ պատերազմեցաւ, զորս Արշակ քաջութեամբ հնազանդեցընելէն վերջը, Աւ ծովուն եղերաց վերայ մէկ կոթող տնկեց՝ իւր յաղթութեանը նշան. և տասներեք տարի թագաւորելէն վերջը մեռաւ.

Ո՞վ էր Արթուշէս առաջին և ի՞նչ կ'պատմուի վերան.

— Արշակ առաջնոյ որդին էր, որ բնութեամբ կրտրիճ, պատերազմող ու աշխարհակալութիւն սիրող լինելով՝ Յունաստանի և բոլոր Փոքր Ասիոյ տիրեց: Մինչև Արտաշեսի օրերը՝ Պարսից թագաւորները աթոռով, պատուով ու մեծութեամբ առաջինը կը համարուէին, և Հայոցը՝ երկրորդ. բայց Արտաշես Պարսկաստանի մէկ մասին տիրելով՝ նոցա Արշական թագաւորն իւր երկրորդն արաւ, իւր անունովն ու պատկերովը ստակ կոխել տուաւ Պարսկաստանի մէջ

և իւր արքունիքը շինեց այնտեղ : Տեփրան անունով որդին՝ Վարաժ կոչուած իշխանին յանձնեց որ պատերազմական կրթութեանց վարժեցընէ զինքը . իսկ Արտաշատն աղջիկը Միհրդատայ հետ կարգեց, որ Պարսկաց Վարնհ թագաւորի նախարարաց ցեղէն էր և Վրաց բզնաշխ (Գաշա), և որուն բոլոր Պոնտոսի բնակչաց վերայ կուսակալ զրաւ :

Արտաշեսի զօրաց վերայ ի՞նչ կպատմուի .

— Խորենացին կասէ թէ արևելքէն ու արևմուտքէն այնչափ զօրք ժողովեց, որոց և ոչ թիւը գիտէր . ուստի երբ Արտաշեսի հրամայած ժամանակը այսպիսի բազմութեամբ մէջմէկ քար ձրզէին՝ բլուր կձևանար, և երբ ամենքը միասին նետ նետէին՝ արևը խախտուելով բոլոր գետինը շուք կկնէր :

Արտաշեսի այդչափ զօրք ժողովելուն պատճառն ի՞նչ էր .

— Նորա աշխարհակալութեան հոգին . վասն զի այն անհամար զօրացը զլուխ կեցած՝ գնաց բազմութեամբ բոլոր Յունաստանի տիրեց, որով շրջակայ ազգաց սիրաշ մեծ վախ ձգեց : Յետոյ Միջերկրական ծովուն մէջ շատ նաւերով կղզիներու տիրեց, և մեծ փառքով ու պատուով Հայաստան դարձաւ, հետը բերելով Յունաստանի մէջ գտած Արտեմիս,

Հերակլ և Ապոլոն կուռքերուն պղնձէ արձանները, զորս իւրեանց քուրմերուն հետ մէկտեղ Արմաւիր յուղարկեց :

Արտաշեսի վերջն ի՞նչ եղաւ .

— Քսանեհինգ տարի թագաւորելէն յետոյ՝ յայտնի չէ թէ ի՞նչ պատճառաւ նորա զօրաց մէջ խռովութիւն ընկնելով՝ զինքն սպաննեցին :

ԻԱՍ ԺԲ.

Տեփրան երկրորդ և նորա Կալուստիանոսը .

Ո՞վ յաջորդեց Արտաշեսի և ի՞նչ արաւ .

— Նորա որդին Տեփրան երկրորդ, որ իւր հօր մահուան պատճառաւ ապստամբած Յայները իւր քեռայր Միհրդատայ հետ միացած՝ Գնքստին նուաճեց, Ասորոց երկրին տիրեց և նոցա Աելինէ թագուհին սպաննեց . վասն զի Ասորիները կը զրգռէր որ Տիգրանէն ապստամբին :

Հրեայք երբ լսեցին Աելինէի սպանուիլն ի՞նչ արին .

— Հրեայք Աելինէի սպանուիլը լսելով՝ վախցան որ Տիգրան Հրէաստան ևս երթայ պատերազմելու .

ուստի դեսպան յուղարկելով՝ շատ ընծաներ սուլին Տիգրանայ որ զթայ իւրեանց և չարիք չանէ շրէից և նոցա թագուհւոյն : Այս բանիս համար մասնաւոր աղաչանք արին Տիգրանայ նաև Բաղրատունիք, և Տիգրան խոստացաւ փաս չհասուցանել նոցա :

Նուովմայեցիք ինչո՞ւ թշնամացան Միհրդատայ հետ և ի՞նչ արին .

— Այն պատճառաւ որ Միհրդատ Կապադովկիոյ իշխելէն վերջը՝ Նուովմայեցւոց տերութենէն կարգուած Արիոբարզան թագաւորը Կապադովկիայէն հալածեց, և իւր Աբիարթ որդին թագաւոր դրաւ նորա տեղը : Այս բանիս համար Կապադովկացիք Նուովմայեցւոց ապաւինեցան, և նոքա Անուսիս նով քաջ զօրապետը յուղարկեցին, որ Կապադովկիա հասնելուն պէս Արիարթին ու սորա Պարթևոս զօրապետը փախուց և Արիոբարզանն նորէն թագաւորեցուց :

Միհրդատ այս որ լսեց ի՞նչ արաւ .

— Տիգրանայ օգնութեամբը Նուովմայեցւոց դէմ շատ անգամ պատերազմ՝ անելով՝ երբեմն յաղթեց՝ երբեմն յաղթուեցաւ . բայց երբ նորա Փարսակէս անունով փառամուլ ու ինքնահաւան որդին՝ Միհրդատայ Կաստոր զօրապետին հետ աստամբելով

Նուովմայեցւոց կողմն անցան, Միհրդատ բերդին մէջ անօդնական մնալով՝ ինքզինքն սպաննեց :

Պունգէոսի Նուով դառնալէն վերջը Տիգրան ի՞նչ արաւ .

— Նուովմայեցիներէն վրէժն առնելու համար զընաց Միջագետաց նորէն տիրեց ու Պարսակէս զօրապետը Ազիպտոս փախուց . բայց տեսնելով որ Նուովմայեցիք դարձեալ Ասորոց ու Միջագետաց տիրելով իւր վերան կուգան, և ինքը չկրնար ձերութեանը պատճառաւ դիմադրել նոցա, նախագահութեան պատիւը Պարսից Արշէլ թագաւորին տուաւ, յորմէ օգնութիւն առնելով՝ Նուովմայեցւոց զօրքը ցրուեց և նոցա Արտաշէս զօրապետն սպաննեց :

Տիգրանայ ձերութեան ժամանակ ո՞վ եղաւ Նայոց սպարապետ .

— Ուշտունեաց Բարզափրան անունով քաջ նախարարը, որ Նայոց և Պարսից բանակին ընդհանուր հրամանատար կարգուեցով՝ բոլոր Ասորոց երկրին տիրեց : Յետոյ Նրէաստան գնաց Բարզափրան Անտիոնոսին հրաւիրանօքը, և նորա խոստացած պարգևին համար՝ նախ Նրէաստանի իւրկանոս թագաւորը մեծամեծ դաշինքներով կանչեց, խարդա-

խութեամբ բռնեց որ Անտիգոնոս կարողանայ թագաւորել, յետոյ շիւրկանոսի ինչքը կողպտեց, և Գնէլ անունով քաջ զօրավարը շատ զօրաց հետ մէկտեղ Արուսաղէմ թողուց, և շիւրկանոս թագաւորն ու բազմաթիւ շրեաներ դերի առած շայաստան դարձաւ:

Արուսաղէմը շատ ժամանակ շայոց ձեռքը մնաց.

— Ոչ. վասն զի շոտլմայեցիք նորէն զօրք յուզարկեցին, որով շայերը երբեմն յաղթեցին երբեմն յաղթուեցան, մինչև որ շոտլմայեցիք բոլորովին տիրեցին շրէաստանի:

Տիգրան սրչափ տարի թագաւորեց ու երբ մեռաւ.

— Յիսուռուչորս տարի թագաւորեց. և 85 տարեկան հասակին՝ թագաւորութիւնն իւր Արտաւազդ որդոյն յանձնելով՝ Քրիստոսէ 35 տարի յառաջ մեռաւ:

ԴԱՍ ԺԳ.

Արտաւազդէն մինչև Աեգայ.

Արտաւազդ առաջինն ինչպէս արաւ իւր թագաւորութիւնը.

— Շատ անհոգ կերպով. վասն զի Տիգրանայ քաջութեանը չհետևելով ինքզինքն կերուխումի և դրօսանաց տուաւ, որով շոտլմայեցիք յարմար միջոց գտնելով՝ իւրեանց Անտիգոնոս զօրավարին ձեռքովը բոլոր Ասորեստանի և ուրիշ տեղերու տիրեցին:

Արտաւազդայ վերջն ինչ եղաւ.

— Արտաւազդ իւր դաշնակից Անտոնինոսի դէմ ծածուկ Պարսից օգնութիւն անելով, Անտոնինոսը խաբէութեամբ բռնեց զինքը և շղթայակապ Ազխատոս տարաւ հետը, ուր երեք տարիէն վերջը՝ Աղէոպարս թագուհւոյն հրամանաւը զլիսատուեցաւ:

Արտաւազդայ բռնուելէն վերջը շայք ինչ արին.

— Արշաճ անունով խելացի անձը թագաւորեցուցին, որ Տիգրանայ եղբորորդին էր: Սա տեսնելով որ բաւական սրատրաստութիւն չունի շոտլմայեցւոց դէմ ելնելու, միտքը դրաւ որ հաշտութիւն խօսի.

բայց երբ Հայերը չյօժարացան, Հռովմայեցւոյ դէմ պատերազմի ելաւ, յորում շատ քաջութիւններէն վերջը՝ Անտոնինոսէն յաղթուեցաւ ու Պարսկաստանն փախաւ :

Արշամայ յաղթուելէն վերջը Հայաստանն ի՞նչ վիճակի մէջ մնաց .

— Անտոնինոս Հայաստանի տիրելով՝ երեք մասն բաժանեց զՀայաստանն, և Ստորին Հայաստանի վերայ իւր Աղեքսանդր որդին թագաւորեցուց, Վերին Հայաստանը Մարաց թագաւորին յանձնեց և Փոքր Հայաստանը Պոնտոսի Պողեմոն թագաւորին տուաւ :

Հռովմայեցիք շատ ժամանակ տիրեցին Հայաստանի .

— Երեք տարւոյ չափ միայն . վասն զի Արշամ Պարսից օգնութեամբը նախ՝ Մարաց դէմ պատերազմեցաւ ու Վերին Հայաստանը նուաճեց, և ապա զՀռովմայեցիքը Ստորին և Փոքր Հայաստանէն քշելով՝ մինչև Աեսարիա տիրեց . որով Վերին Հայաստանը Պարսից ձեռքն անցաւ, և Ստորին ու Փոքր Հայաստանը՝ Արշամայ :

Ինչո՞ւ համար Արշամ հարկատու եղաւ Հռովմայեցւոց .

— Արտաւազդայ երկու որդիքն ազատելու հա-

մար, որ գերի էին ի Հռովմա : Արշամ այս բանիս համար ի սկզբան դեսպան յուղարկելով ի Հռովմա, Օգոստոս կայսրէն խնդրեց որ յետ տայ Արտաւազդայ որդիքը . բայց երբ խնդիրքն ընդունելի չեղաւ, խոստացաւ տարուէ տարի հարկ տալ, և այնու ազատեց զիրենք :

Ի՞նչպէս եղաւ որ Արտաւազդայ որդին Վերին Հայաստանի թագաւորեց .

— Վերին Հայաստանի ժողովուրդը Պարսից բռնութիւններէն ձանձրանալով՝ Օգոստոս կայսեր դիմեց, և սա նոցա խնդրանայր զիջանելով՝ Արտաւազդայ որդին Տիգրանը թագաւորեցուց, որ Փոքր Տիգրանն ասուեցաւ, Վերին Հայաստանի թագաւորութիւնը 59 տարի տւեց, յետ որոյ Երեսնայ երկրորդը Ստորին Հայոց թագաւորութեանը հետ միցուց :

Ուրիշ ի՞նչ արաւ Արշամ և ե՞րբ մեռաւ .

— Մէկ քաղաք շինեց Արշամաշատ անունով . և քսանինը տարի թագաւորելէն յետոյ տէրութիւնը իւր Աբգար որդւոյն թողլով՝ մեռաւ :

ԴԱՍ ԺԴ.

Աբգար և նորա գործերը.

Աբգար ինչով անուանի եղաւ, և հեան ինչուն թշնամացաւ շերովդէս.

— Աբգար անուանի եղաւ իւր իմաստուն կառավարութեամբն ու հեղ բնաւորութեամբը, որով Աստուծոյ անուանեցաւ շայերէն, որ օտարաց աղաւաղելովը Աբգար ասուեցաւ: Մորա թագաւորութիւնը նշանաւոր է մեր պատմութեան մէջ Վրիստոսի Տեառն մերոյ շրէաստանի Ռեթղեհէմ քաղաքին մէջ ծնանելովը:

Ի՞նչ պատճառաւ շուովմ գնաց Աբգար և ինչուն աթորը Մծբին քաղաքէն Եդեսիա փոխադրեց.

— շերովդեսի կուսակցաց ամբաստանութիւններէն ինքզինքն արդարացընելու համար գնաց շուովմ իսկ աթորը փոխադրելուն պատճառն այս էր. Օգոստոսի մահուանէն վերջը՝ երբ նորա Տիբերիոս որդեգիրը թագաւորեց, Աբգար ինդակցութեան դեսպան յուղարկեց նմա. բայց նա փոխանակ դեսպանները պատուելու՝ պատժեց, որով Աբգար սաստիկ բարկացած՝ շուովմայեցիներէն ապստամբիլ մտածեց.

ուստի և աթորը Եդեսիա փոխադրելով՝ քաղաքին բաց տեղերը ամրացուց ու պատերազմի պատրաստւեցաւ:

Աբգարու այս դիտաւորութեանը ի՞նչ արգելք եղաւ.

— Պարսից Արշաւիր թագաւորին մահը, որոյ տղոց մէջ խռովութիւն ընկնելով՝ զիրենք հաշտեցընելու համար Պարսկաստան գնաց Աբգար, և հոն այնպիսի սաստիկ բորոտութիւն ստացաւ, որ բժիշկները չկարողացան առողջացընել:

Աբգար ի՞նչպէս ճանաչեց Վրիստոսի աստուածութիւնը.

— Իւր Երուսաղէմ յուղարկած հայ դեսպանաց պատմելովը, որ շերովդեսի Աբգարու վերայ արած ամբաստանութեանց պատճառաւ՝ Երուսաղէմ բնակող շուովմայեցոց Մառինոս զօրապետին յուղարկուած էին Աբգարու կողմէն, որ Վրգար արդարացընեն: Այն դեսպանները շրէաստանի մէջ Վրիստոսի արած հրաշագործութիւնները տեսնելով՝ եկին պատմեցին Աբգարու, որով իսկոյն հաւատաց Վրիստոսի աստուածութեանը, ասելով թէ՛ «Այն Վրիստոս ասուած հրաշագործ անձը՝ կամ երկնքէն իջած Աստուած է, և կամ Աստուծոյ որդի. վասն

զի չկայ աշխարհիս մէջ այնպիսի մէկը՝ որ մեռածները կենդանացնել կարողանայ՝:

Արգար ի՞նչպէս բժշկուեցաւ իւր բորոտութենէն.

— Իւր բոլոր յոյսը Վրիստոսի գերմարդկային կարողութեանը վերայ դնելով՝ Արգար թուղթ գրեց և իւր Անանի սուրհանդակին ձեռքով առ Վրիստոսս յուղարկեց՝ աղաչելով որ Հայաստան զայ զինքը բժշկելու: Վրիստոս Արգարու հաւատոյն վերայ ուրախութիւն ցուցուց, և գրաւոր պատասխանւոյն մէջը խոստացաւ իւր համբառնալէն յետոյ աշակերտներէն մէկը յուղարկել, որ քիչ ժամանակէն եկաւ, և էր Թադեոս առաքեալը: Սա երբ իւր ձեռքն Արգարու վերայ դրաւ, իսկոյն թագաւորին բորոտութիւնը սրբեցաւ. յետոյ մկրտեց զթագաւորն ու բոլոր Ադեսիացիքը, և իւր տեղը եպիսկոպոս դնելով՝ թագաւորի Ադրէ անունով խոյրարար կամ թագ կարողը, ինքը գնաց որ Հայաստանի միւս տեղերն ևս քարոզէ քրիստոնէական հաւատքը:

Անանի սուրհանդակը մինակ գնաց Արուսաղէմ:

— Ոչ. Արգար Անանիի հետ ուրիշ դեսպաններ ևս յուղարկեց, որոց մէկն էր Յովհաննէս անունով պատկերահանը: Սա Հրէաստանի մէջ Վրիստոսի

հետ տեսնուելէն վերջը՝ շատ աշխատեցաւ նորա պատկերն օրինակել, բայց չկարողացաւ. ուստի և Վրիստոս իւր քովը կանչեց զինքը ու ձեռքը դաստառակ կամ մաքուր կտաւ առած՝ երեսին վերայ բռնեց և իսկոյն տպաւորեցաւ նորա աստուածային ու լուսաւոր դէմքը: Վեսպանները մեծ ուրախութեամբ դարձան Հայաստան, և Վրիստոսի թըղթիցն հետ Արգարու բերին այն անձեռագործ պատկերը, որուն Արգար խոնարհութեամբ և հաւատով երկրպագելէն վերջը հրամայեց մեծ զգուշութեամբ պահել:

Բժշկուելէն վերջը Արգար ի՞նչ յիշատակ արժանի գործ արաւ.

— Արեք տարի ևս իբրև առաջին քրիստոնէայ թագաւոր ապրելով՝ Հռովմայեցոց Տիրերիոս կայսեր, և Պարսից ու Ասորոց թագաւորներուն մէկ թուղթ գրեց, որոց մէջ Վրիստոսի աստուածութիւնը ցուցուց. և ընդ ամենայն 38 տարի թագաւորելէն յետոյ սրբութեամբ մեռաւ ու Ադեսիոյ մէջ թաղուեցաւ:

Ի Ա Ս Ժ Ե .

Անանէն Քիչև Արքարէն երկրորդ .

Արքարէն յետոյ Հայաստան ի՞նչ վիճակի մէջ մնաց .

— Թագաւորութիւնը երկու բաժանուելով՝ մեծ խռովութիւն ընկաւ ազգին մէջ . վասն զի Արքարու որդին Անանէ Աղեւսիոյ մէջ Թագաւորեաց ու Քարձեալ կռապաշտութիւն սկսաւ . իսկ Սանատրուկ՝ Արքարու քեռորդին Հաւարշանի մէջ Թագաւորեաց և կողէր բոլոր Հայոց վերայ տիրել :

Անանէ ի՞նչպէս մեռաւ և Սանատրուկ ո՞րպէս Հասաւ իւր նպատակին .

— Աղեւսիոյ արքունի պալատը նորոգել տալու ժամանակ երբ շինութեան վարը կանգնած՝ Անանէ հրաման կանէր կձեայ սիւն մի կանգնեցընել, յանկարծ սիւնը վերան ընկաւ ու սպաննեց զինքը . որով Սանատրուկ յարմար միջոց գտնելով՝ զօրք ժողովեց ու Աղեւսիոյ վերայ գնաց : Աղեսացիք որ ըստ մեծի մասին քրիստոնեայ էին, դեսպան յուղարկեցին առ Սանատրուկ ասելով՝ որ սիրով կընդունին զինքը եթէ իւրեանց քրիստոնէական հաւատքին չդիպչի : Սանատրուկ երդմամբ խոստացաւ, բայց քաղաքին

տիրելէն վերջը իւր երդումը ստելով՝ Արքարու արուզաւակներն սպաննել տուաւ, աղջկունքը Հաշտենից գաւառը յուղարկեց և Հեղինէ կինը՝ Միջագետաց Խառան քաղաքը : Յետոյ Հաւարշանի մէջ Թագէոս և Բարթողիմէոս առաքեալները նահատակեց, որպէս նաև իւր Սանդուխտ աղջիկն ու Արզուհի Քոյրը :

Սանատրուկ ի՞նչ երևելի գործ արաւ .

— Թագաւորանիստ քաղաքը որ երկրաշարժէ աւրուած էր, շատ զեղեցիկ կերպով նորոգեց, քաղաքին մէջտեղը իւր արձանը կանգնեց և արձանին ձեռքը մէկ դրամ դրաւ, իմացընել ուղելով ժողովրդեան թէ քաղաքի նորոգման պատճառաւ Սանատրուկի բոլոր գանձն սպառեցաւ և հնաց Տին : Այս մնաց մին խօսքէն առած է, կասեն, քաղաքն իւր Մծիկն անունը :

Սանատրուկ ի՞նչ կերպով մեռաւ, և ո՞վ անցաւ նորա տեղը .

— Արեսունչորս տարի Թագաւորելէն յետոյ մէկ օր որսի գնացած ժամանակ նետէ զարնուելով մեռաւ, յետ ուրոյ նախարարաց հաւանութեամբը Արտանոյ երկրորդը Թագաւորեց, որ թէպէտ Թագաւորական ցեղէ չէր, բայց մօրը կողմանէ Արշակունի էր :

Երուանդ Թագաւորներուն պէս ի՞նչ արաւ .

— Իւր Թագաւորութիւնն ապահովցրնելու համար բոլոր Սանատրկոյ ցեղը մեռցրնել տուաւ, որոց մէջէն Արտաշէսը միայն ազատեցաւ Սմբատ Բագրատունեայն ձեռքովը Պարսկաստան փախչելով :

Երուանդ Արտաշեսի Պարսկաստան փախչելը լսելով՝ ի՞նչ արաւ .

— Երուանդ կասկածելով որ Արտաշէս Պարսից օգնութեամբը Հայոց տէրութիւնը իւր ձեռքէն չբայտատակէ, Թագաւորութիւնը զօրացրնելու համար՝ Միջագետքը Հռովմայեցոց տուաւ, որով ինքը Վերին և Ստորին Հայոց վերայ միանգամայն Թագաւորեց, և աթոռը Արմաւիր փոխադրեց . այլ և զանազան շինութիւններ արաւ, որոց մէջ երեւելին էր Երոստաշատ քաղաքը :

Արտաշէսն ի՞նչ կերպով Թագաւորեց .

— Պարսից Վարես Հ Թագաւորի օգնութեամբը Սմբատ Բագրատունին Արտաշէսին հետ մէկտեղ Երուանդայ դէմ ելաւ, ու մեծամեծ կոտորած անելէն ու Երուանդն սպաննելէն վերջը Հայաստանի տիրեց, և Սանատրուկի Թագը Արտաշէսի զուխը դնելով՝ Թագաւոր դրաւ ամենայն Հայոց :

ԴԱՍ ԺԶ.

Արտաշէս երկրորդէն ինչ Երոստաշ .

Արտաշէս Թագաւորելէն յետոյ ի՞նչ արաւ .

— Իւր բարերարացը երախտագիտութիւն ցուցրնելով՝ զՍմբատ Բագրատունին ընդհանուր սպարապետ կարգեց, որուն ծանրագնի ընծաներ տուաւ ու Պարսից Վարես Հ Թագաւորին յուղարկեց ի շնորհակալութիւն և ի փոխարէն նորա արած բարեացը . Արտաշէս քաջ զօրապետը՝ որ պատերազմի ժամանակ Երուանդէն ապստամբելով Արտաշէսի կողմն անցած էր, Թագաւորի երկրորդն անուանեց, և Վիսակայ որդի «Ներսէսը» նահապետ կարգեց «Վիսակայեան» (Վիսակայեան) մեծ նախարարութեանը . վասն զի պատերազմի ժամանակ Վիսակ զԱրտաշէս ազատելու համար դէմքին կէսը կորսնցրնելով մեռել էր :

Արտաշէս ի՞նչ բարեկարգութիւններ արաւ Հայաստանի մէջ .

— Արտաշատ քաղաքը մեծամեծ շինութեամբ զարդարելով՝ աթոռն այն տեղ փոխադրեց : Այլև այլ տեղերէ զաղթականներ հրաւիրելով ու առանձնաշնորհութիւններ տալով նոցա՝ բոլոր Հայաստանը բազմամարդ արաւ : Երկրագործութեան վերայ

ազգին մէջ այնպիսի սէր ձգեց, որ Արտաշեսի ժամանակ Հայաստանի մէջ շատ քիչ գեախն կրանուէր որ մշակուած չլինէր: Գլխութեանց և արուեստից վարժարաններ բացու և ժողովրդեան յառաջադիմութեան վերայ մեծ խնամք ունեցաւ, որովք ոչ միայն իւր ազգին սիրելի եղաւ, այլ և իւր շրջակայ ազգացը նախանձելի:

Արտաշէս որո՞ց հետ պատերազմեցաւ.

— Ալանաց: Սքա ուրիշ լեռնականաց հետ միացած Հայաստանի վերայ յարձակեցան. բայց Արտաշէս յաղթեց և նոցա Սալէն անունով արքայորդին գերեց, Սաթենի քոյրը Սալէնի՛ Արտաշեսին աղաչելով՝ սիրտը վաստրկեցաւ. որով Արտաշէս հաշտութիւն անելով՝ արքայորդին արձակեց և իրեն թագուհի արաւ զՍաթինիկը:

Արտաշէս ե՞րբ և ո՞ւր մեռաւ.

— Հռովմայեցոց դէմ ապստամբելէն ու դարձեալ հաշտուելէն յետոյ՝ Սարաց կողմերը գնացած ժամանակը հիւանդացաւ, և իսկոյն Բախոսիւնի ասուած աւանը դարձաւ, ուսկից չկարողանալով աւելի յառաջ երթալ՝ քառասունեւմէկ տարի թաղաւորելէն վերջը մեռաւ:

Ո՞վ յաջորդեց Արտաշէսի.

— Իւր որդին Արտաշէսի եղբոր, որ զբօսասէր և անկարգ կեանք անցուց: Սա երկու տարի թագաւորելէն յետոյ, մէկ օր որսի մէջ կատաղաբար ձին վազըննելու ժամանակ խոր վիհի (փոսի) մէջ ընկաւ ու կորսուեցաւ:

Տիրան առաջնոյն վերայ ի՞նչ կպատմուի.

— Տէրան իւր Արտաւազը եղբորը պէս անհոգ ու անկարգ կեանք անցընելով՝ տէրութեան կառավարութիւնը Արտաշէսի անունով իշխանին յանձնեց ու ինքը Ալեկեաց գաւառը քաշուեցաւ, ուր մէկ օր բարձր լեռանց տակ զբօսելու ժամանակ՝ ձիւնի մեծ կտոր մի ընկաւ վերան ու խղդեց զինքը:

Ո՞վ յաջորդեց Տիրանայ.

— Տէրան Գ, որ Տիրանայ փոքրիկ եղբայրն էր: Սա Պարսից Պերոս թագաւորին հետ միանալով՝ թէև ի սկզբան Հռովմայեցոց յաղթեց և նոցա Սեւերիանոս զօրավարն սպաննեց, բայց յետոյ Փոքր Հայոց տիրելու մտք՝ Միջագետաց կողմերը գնացած ժամանակ մէկ կնոջ շողոքորթութիւններէն խաբուելով գերի բռնուեցաւ, մինչև որ Հռովմայեցոց Պերոս անունով փոխարքայն եկաւ, իւր թըշնամիներուն յաղթեց, ու Տիրանայ վերայ խղձա-

ով նորէն թագաւորեցուց զինքը Հայոց վերայ՝ ընդ իշխանութեամբ Հռովմայեցուց :

Ո՛վ էր Վաղարշ :

— Տիգրան Գ-ի որդին, որ Վաղարշաւան քաղաքը շինեց, Վարդգէս աւանը սրբապով պատեց և անունը Վաղարշապատ դրաւ : Սորա թագաւորութեան քսաներորդ տարին Հիւսիսային ազգերը, այսինքն Խաչիքի և Բասիլի տաւած սարմատացիներն սկսան բազմութեամբ Հայաստան վազել, որով Վաղարշ դիմացներն ելնելով՝ սաստիկ կոտորած արաւ. բայց մեղք որ թշնամիները փախչելու ժամանակ երբ Հայոց զօրքը նոցա ետեէն ընկած կըքէին այն վայրենի ազգերը, Վաղարշ թշնամեաց նետերէն զարնուելով մեռաւ :

ԳԼԱ ՅԵ.

Մեծն Խոսրով և նորա գործերը :

Ո՛վ յաջորդեց Վաղարշայ :

— Իւր որդին Խոսրով արաւելն, որ Մեծ կոչուեցաւ : Սա իւր հօրը մահուան վրէժն առնելու համար Հիւսիսային ազգաց կամ Սարմատացուց վերայ

պատերազմի ելաւ, բոլորովին ընկճեց զիրենք. յետոյ նոցա նշանաւոր ցեղերէն հարիւրէն մէկ պատանդ առաւ, իւր քաջութեան յիշատակը պահելու համար՝ յունարէն գրով արձան կանգնեց և այնպէս փառաւոր յաղթութեամբ Հայաստան դարձաւ : ‘Նոյնպիսի յաղթութիւն արաւ նաև Անտոնինոս Արարկալը կայսեր՝ ‘Նիկոմիդիայէն յուղարկած Հռովմայեցի զօրացը դէմ :

Պարսից Արտաշիր թագաւորն ինչո՞ւ համար աշխատեցաւ զԽոսրով սպաննել :

— Սասանայ որդի Արտաշիրը երբ Պարսից Արտաշիրն անունով Արշակունի թագաւորն սպաննեց ու ինքը թագաւորեց, Խոսրով խռովեցաւ, պատերազմի ելաւ Արտաշիրի դէմ ու յաղթելով՝ մինչև Հնդկաստան փախուց զինքը, որով բոլոր Պարսկաստանի տիրելով՝ Ատրպատականի մէջ մէկ քաղաք շինեց Գաւլքեթ անունով (այսինքն Գաւլքեթ Արտաշիր) : Իսկ Արտաշիր փորձով տեսնելով որ Խոսրովը կենդանութեան ժամանակ չպիտի կարողանայ Պարսկաստանը նորէն ձեռք բերել, իւր երկրորդն անել խոստացաւ այն մարդուն, որ Հայաստան երթալով զԽոսրով սպաննէ : Անակ Պայհաւունին, — որ Արտաշիրի նախարարաց մէկն էր, — յանձն առնելով Հայաստան եկաւ, ու այնպէս ձեւացուց որ

իբր թէ Արտաշրի բռնութիւններէն փախած է, որով ամենուն սիրելի լինելով՝ մեծ պատուով բնակեցաւ Վաղարշապատ մայրաքաղաքին մէջ, ուր նորա Ոգոհի կինը մէկ որդի ծնաւ, որ Գրեհոր կոչեցաւ և յետոյ մեր ազգի Ղուսաորիչն եղաւ :

Անակ ի՞նչպէս սպաննեց Ղոսորով .

— Մէկ օր որսի ելած ժամանակ՝ Անակ իւր եղբորը հետ խօսք դրած՝ նետով զարկին ու սաստիկ վիրաւորեցին Ղոսորով . թաղաւորի թիկնապահներն խմանալով՝ երբ զիրենք բռնել ուղեցին, նոքա փախչելու ժամանակ դետն ընկան խեղդուեցան : Խոսորով դեռ չմեռած, հրաման տուաւ որ Անակայ ընտանիքը բոլորը թրէ անցնեն, յորոց երկուքը միայն ազատեցան . մէկը Սորէն՝ որ Պարսկաստան փախուցին, և միւսը նորածին Գրեհորը, որ աստուածային մասնաւոր խնամքը Սորէն զայեակին ձեռօքը Աեսարիա քաղաքը տարուեցաւ :

Գրիգորն ի՞նչ եղաւ Աեսարիոյ մէջ .

— Իւր սանտուին խնամքը մեծնալով՝ Մարիամ անունով քրիստոնեայ օրիորդին հետ ամուսնացաւ, և երկու որդի ունեցաւ Վրթանէս և Արեհայիկէս անունով : Արեք տարիէն յետոյ Գրիգոր և Մարիամ փոխադարձ հաւանութեամբ բաժանուեցան մէկ-

մէկէ և առանձին վանքեր գնացին ճգնելու, որոց հետեւեցաւ նաև Արիստակէս . իսկ Վրթանէսն ամուսնանալով՝ նոյնպէս երկու որդի ունեցաւ Գրեհորի և Յոսի անուններով :

ԴԱՍ ԺԸ.

Տրդատ և Խոսորով երկուքը .

Խոսորովի մահուանէն յետոյ Արտաշիրն ի՞նչ արաւ .

— Ընդ որ շայաստանի տիրելէն վերջը Խոսորովուցեղը ջնջել տուաւ, յորոց միայն Տրդատն ու իւր Խոսորովեհորէնք քոյրը՝ Արտաւազդ Մանդակունուոյն և Օտայ Ամատունուոյն ձեռքովը ազատեցան : Տրդատը նախ Աեսարիա տարուեցաւ ու վերջը ձուովմ, ուր զանազան քաջութիւններ անելով՝ մեծ պատուոյ հասաւ :

Արտաշիր ի՞նչպէս վարուեցաւ շայոյ հետ և սրջալի տիրեց շայաստանի .

— Արտաշիրն ընդհանրապէս շայոյ նախարարը պատուով պահեց, բայց ի Մանդակունեաց ցեղէն, որ զՏրդատը ձուովմ փախցընելուն համար՝

զիրենք թրէ անցընել տուաւ: Յետոյ Արտաշէսի տնկած սահմանազլխի քարերուն վերայի արձանագրութիւնները աւրել տալով՝ Արտաշիր իւր անունը գրել տուաւ պարսկերէն. և այնպէս քսան տարի ևս Հայոց վերայ թագաւորելէն վերջը մեռաւ ու տեղն անցաւ իւր Շապուհ որդին:

Տրդատ ի՞նչպէս տիրեց իւր հայրենի ժառանգութեանը.

— Տրդատ Հռովմայ մէջ մեծամեծ քաջութիւններ անելէն վերջը՝ Վիտիզեմտիանոսէն մեծարուելով՝ Հռովմայեցի զօրքով Հայաստան յուղարկուեցաւ, որ զայ իւր հայրենի աթոռը ժառանգէ: Չարու ժամանակ Տրդատ երբ Աեսարիա հասաւ, իսկոյն իմացոց նախարարներուն իւր գալուստը, և նոքա ելան Աեսարիա գնացին, ուր փառաւոր ընդունելութիւն անելով՝ Մքատ Բազրատունւոյն ձեռքովը կրկին անգամ թագ դրին զըւսը, որով բոլոր Հայաստան ուրախացաւ:

Տրդատն ո՞ւր իմացաւ Չրիգոր Ղուսաւորչի քրիստոնեայ լինելն և ի՞նչ արաւ.

— Տրդատ Աեսարիայէն ելնելէն յետոյ երբ Եկեղեցաց գաւառը գնաց Անահտայ շնորհակալութիւն անելու, այնտեղ տեսաւ որ Չրիգոր Ղուսաւորչը

ճշմարիտ քրիստոնեայ և Անակայ որդին է. ուստի շատ չարչարելէն յետոյ զինքը խոր վիրապի մէջ ձգել տուաւ: Իսկ իւր բարերարներուն, այսինքն Արտաւազդ և Օտայ նախարարներուն հազարապետութեան պատիւը տուաւ:

Ուրիշ ի՞նչ կպատմուի Տրդատայ վերայ.

— Այնուհետև Տրդատ Պարսից Շապուհ թագաւորին դէմ պատերազմի ելաւ, յաղթեց նորա ու մինչև Ատրպատական աշխարհը փախուց զինքը: Յետոյ քրիստոնեաները հալածելուն ու Հռիփսիմեան կուսանքը նահատակելուն համար՝ Տրդատ Աստուծոյ մէ պատժուելով՝ խոզի կերպարանք փոխեցաւ ու վայրենիի պէս եղաւ:

Որո՞յ ձեռքով բժշկուեցաւ Տրդատ.

— Սրբոյ Հօրն մերոյ Չրիգորի Ղուսաւորչին, որ 14 տարի վիրապին մէջ կենալով՝ Աստուծոյ հրաշիւքը տակաւին ողջ մնացած էր: Սա Տրդատայ Խոսրովիդուխտ քրոջ երազին պատճառաւ վիրապէն հանուելով՝ բժշկեց զՏրդատ և նոյն պատժին վիճակուող բոլոր նախարարները. յետոյ Աեսարիա յուղարկուեցաւ, ուր Ղեոնդիոս հայրապետէն արքեպիսկոպոս ձեռնադրուեցաւ, ուսկից դառնալէն յետոյ Վրիստոսի Տեառն մերոյ անունը քարոզելով՝

բոլոր ժողովուրդը մկրտեց ու Լջմիածնայ մայր եկեղեցւոյն հիմը դրաւ :

Տրդատ քրիստոնէութենէն յետոյ ի՞նչ մասնաւոր գործ արաւ .

— Հռովմայ Սեղբեստրոս հայրապետին ձեռքովը Առստանդիանոս թաղաւորին քրիստոնէայ դառնալը լսելով՝ ուրախակցութեան գնաց Ս. Լուսաւորչին հետ մէկտեղ, ուսկից վերադառնալէն յետոյ՝ Հայաստանը Պարսից և Հիւսիսային ազգերէն սաշարւած դանելով՝ քաջութեամբ սատերազմեցաւ և զամենքն ի փախուստ դարձուց :

Տրդատայ վերջն ի՞նչպէս եղաւ .

— Տրդատ նախարարաց անկարգութիւնները տեսնելով՝ թաղաւորութիւնը թողուց ու Լուսաւորչայ ճգնարանը քաշուեցաւ : Նախարարները քանի մի անգամ խնդրեցին իրմէ որ դայ նորէն թաղաւորէ . բայց երբ Տրդատ յանձն չառաւ, թունաւորելով մեռուցին զինքը :

Ո՞վ յաջորդեց Տրդատայ և ի՞նչ արաւ .

— Իւր որդին Խոսրով երկրորդ, որ թոյլ ու անհոգ լինելով՝ յիշատակի արժանի գործ չունեցաւ, և միայն Պարսիք քաղաքը շինեց ուր արքունիքը փոխադրեց :

Խոսրովու ժամանակ ո՞վ աւելի անուանի եղաւ Հայաստանի մէջ :

— Վահան Ամարունի անունով քաջ զօրավարը, որ մեծ յաղթութիւն արաւ Շապհոյ և Սարնա տացւոց դէմ :

ԴԱՍ ԺԹ.

Տիրան և Արշակ .

Ո՞վ յաջորդեց Խոսրովու .

— Իւր որդին Տիրան երկրորդ, որ Ս. Վ ըթանեսի հետ Ա. Պոլիս գնաց, և կայսեր հաճութեամբ Հայոց թաղաւոր կարգուելով՝ վերադարձաւ Հայաստան : Տիրանայ բացակայութեան ժամանակ Պարսից Շապուհ թաղաւորի Ներսէհ եղբայրը անթիւ զօրքով Հայաստան եկաւ որ թաղաւորէ Հայոց, բայց Արշակի Ամանարականը նախարարաց հետ մէկտեղ զխնայն ելնելով՝ Պարսից բոլոր բանակը ցրուեց :

Տիրան ի՞նչպէս արաւ իւր թաղաւորութիւնը .

— Տիրան Հայաստան դառնալէն վերջը իրեն անկարգ գործողութիւններովը իւր անունը արատաւորեց, և Շապհոյ հետ արած դաշանցն ու երդմանը հակառակ՝ Յուլիանոս որպայտի ոգնեց, որ Պարսից

դէմ պատերազմի կերթար, ուստի և Պարսից Շապուհ թագաւորը Յունաց դէմ պատերազմի գնացած ժամանակ Հայաստանի սահմաններէն անցնելով՝ խարէութեամբ իւր մօտը հրաւիրեց զՏիրան և աչքերը փորել տալով Ասոր աւանը յուղարկեց զինքը. բայց վախնալով որ Հայերը վրէժխնդիր չըլինին իւր այնպիսի տմարդութեանը՝ Տիրանայ Արշակ որդին թագաւոր դրաւ Հայոց վերայ:

Արշակ երկրորդն ինչպէս կառավարեց իւր տէրութիւնը.

— Տիրանէն աւելի անկարգ ու անհոգ կերպով, ուստի ազգին թշուառութեանց գլխաւոր պատճառ և յառաջացուցիչ եղաւ: Մեծն Ներսէս Ս. հայրապետը իրեն ժամանակակից լինելով՝ Արտաշէս զնաց և Վաղէնտիանոս կայսեր բարկութիւնը իջեցուց, որ Հայերը Պարսից ծառայութիւնէն ազատընելու համար զեսպաններ յուղարկած էր Արշակայ, և սա արհամարելով յետ դարձուցած էր:

Արշակայ վերայ ուրիշ ինչ կպատմուի.

— Արշակ իւր Տրդատ եղբոր Գնէլ որդւոյն հարստութեան վերայ նախանձելով՝ անիրաւութեամբ սպաննել տուաւ և նորա Փարսանջե՛՛ս ամուսինը իրեն երկրորդ կին առաւ, յորմէ Ուլիդիտայ (Արշակայ

առաջին կինը) թունաւորուելով մեռաւ: — Արշակ մէկ քաղաք շինեց Արշակաւան անունով, և հրաման հանեց որ այնտեղ փախչող յանցաւորները պատժէ ազատ համարուին. որով թէպէտ քիչ ժամանակի մէջ քաղաքը բազմամարդ եղաւ, բայց նախարարներն այն հրամանին դէմ բարկանալով՝ Շապուհոյ օգնութեամբ Արշակաւանը կործանեցին և Արշակը փախուցին, որ զնաց և Վրացիներէն օգնութիւն զանելով՝ նախարարաց դէմ ելաւ, և երկու տարւոյ չափ պատերազմեցաւ: Այն միջոցները Վաղէս կայսրն ևս լսելով որ Արշակ օգնել է Շապուհին Յունաց դէմ պատերազմած ժամանակը, նորէն շատ զօրք յուղարկեց Հայաստան:

Արշակ այն ձախորդութեանց մէջ ինչ հնարք մտածեց.

— Վարձեալ սուրբ Ներսէսին ապաւինեցաւ, և սա մեծ դժուարութեամբ նախարարները թագաւորին հետ հաշտեցուց: Յետոյ Արշակայ Պարսից որդին պատանդ առած Արտաշէս զնաց, բայց Վաղէս կայսրն Արիտեսան լինելով՝ դաշինքը չընդունեց և աքսորել տուաւ զսուրբ Ներսէսը: Արշակ լսելով սուրբ Ներսէսի քշուիլը, նորէն առաջուան պէս սկսաւ անկարգութիւններ անել. անիրաւ տեղը Արաւ

սարականաց ցեղը ջնջել տուաւ, յորոց միայն Ապան-
դարատ իւր տղոցը հետ փախչելով ազատեցաւ:

Արշակայ վերջն ի՞նչ եղաւ.

— Շապուհը հայ նախարարաց Արշակայ դէմ
ունեցած ատելութիւնը տեսնելով՝ շատ զօրք յու-
ղարկեց Հայաստան, որոց հետ միացան դժբաղդա-
բար նոյն խակ նախարարները, և այն աստիճան զԱր-
շակը նեղեցին, որ սա Պարսից անձնատուր եղաւ, և
Շապուհէն յանդիմանուելով՝ Անյուշ (անյիշելի)
բերդը յուղարկուեցաւ:

Շապուհ ի՞նչ կերպով աշխատեցաւ Հայերն
արեւապաշտ անելու.

— Սեհրո՞ժան Արթրոնի և Վահան Մամիկնեան
ազգութաց նախարարներուն թագ խոստանալով՝ շատ
զօրք տուաւ նոցա որ երթան իւրեանց համազգիքն
արեւապաշտ անեն: Սորա իւրեանց փառասիրութե-
նէն աչքերը մութ կոխած՝ բազմատեսակ չարիք հա-
սուցին Հայոց, զորս Արշակ լսելով՝ յուսահատեցաւ
և անձնասպանութեամբ մեռաւ:

ԴԱՍ Ի.

Պապ և Վարապրապ.

Հայերն ի՞նչ կերպով ազատեցան Մեհրու-
ժանայ բռնութիւններէն.

— Մեծին Վերսեսի աշխատութեամբը, որ աքսո-
րանքէն դառնալով մինչդեռ Վ. Պոլիս էր, լսեց Հայ-
աստանի խեղճութիւնները և աղաչեց Թէոդոս կայ-
սեր՝ որ քրիստոնէութիւնը Պարսից և Մեհրուժա-
նայ դէմ պաշտպանելու համար՝ Պասը թաղաւոր
դնէ Հայոց վերայ և Յունաց զօրքով Հայաստան
յուղարկէ, որք եկին Մեհրուժանն ու Պարսիկները
քշեցին:

Այս պատերազմի ժամանակ ի՞նչ արաւ Մե-
ծրն Վերսես.

— Վպատ լերին վերայ ելաւ ու բազկատորած ա-
ղօթքի կեցաւ. և որովհետև արեւը Հայոց բանակի
դիմացէն լինելով՝ զիրենք կնեղէր, սրբոյն աղօթքո-
վը ամպ մի եկաւ արեւը ծածկեց. նոյնպէս նաև մէկ
հակառակ քամի փչելով՝ Պարսից նետերը իւրեանց
վերայ դարձուց, յորոց սիրտ առած Հայ զօրավար-
ները և մասնաւորապէս Ապանդարատ և Մամիկնեան
ու Մուշէլ Մամիկնեանը այնպիսի քաջութեամբ

սկան ջարդել զՊարսիկները, որ նոցա չորս մասին մէկը հազիւ փախչելով ազատեցաւ :

Եւն ստակալի կոտորածին ժամանակ Մեհրու-
ժան ի՞նչ կանէր .

— Մեհրուժանայ ձին վիրաւորուելով՝ երբ նա Պարսից զօրաց հետ փախչել կաշխատէր, Միւստ Բաղրատունին հասաւ բռնեց զինքն ու «Որովհետեւ Հայոց Թագաւոր կուզէիր լինել, ահա ես կը պատկեմ զքեզ իմ հայրենական իշխանութեամբս» ասելով՝ երկաթէ շամփուր մը պսակաձև կլորցուցած ու աստիկ տաքցուցած Մեհրուժանայ գլուխը զլաւ ու այնպէսով մեռուց, որով այն ազգատեաց, փառամու ու շահասէր մարդը՝ արժանապայել փոխարէն գտաւ իւր անթիւ չարեացը :

Պատերազմէն յետոյ Պապ Թագաւորն ի՞նչ գործողութիւններ արաւ .

— Յունաց զօրքը առատ պարգևներով յետ դարձուց, և նոցա Տերենտիանոս զօրավարին շատ ընծաներ տալով՝ Հայաստանի մէջ բնակեցուց : Յետոյ Պապ խօսք տուաւ սուրբ Ներսեսին որ այնուհետեւ հաւատարմութեամբ ծառայէ Եստուծոյ, և խօսք առաւ նախարարներէն որ հաւատարիմ մնան իւրեանց Թագաւորին, որով խաղաղացաւ մեր Հայաս-

տան աշխարհը : Սակայն մեհր իւր այն խաղաղութիւնը երկար չուեց . վասն զի երբ սուրբն Ներսէս սկսաւ Պապայ չարութիւններն ու անկարգութիւնները յանդիմանել, Պապ ձանձրացաւ նորա սքանչելի խրատներէն, և ծածուկ թոյն տալով՝ զրկեց զՀայաստան այն բազմարդէն հայրապետէն, որոյ հայրազուծ խնամքը բոլոր Հայաստան միակերպ կկայելէր :

Պապայ վերջն ի՞նչպէս եղաւ .

— Սուրբ Ներսեսի մահուանէն վերջը՝ իրեն ամբարտաւանութեամբը կուրացած՝ Յունաց Թէոդոս կայսրէն ապստամբեցաւ : Թէոդոս լսելով մեծ զօրք յուղարկեց Տերենտիանոսի որ Պապայ դէմ պատերազմի, Տերենտիանոսն ալ զօրաց հասնելուն պէս պատերազմի ելաւ, բռնեց զՊապ և շղթաներով կապած Վ. Պոլիս յուղարկեց, ուր կայսրը գլխատել տուաւ զինքը :

Ո՞վ յաջորդեց Պապայ .

— Վարպապոս անունով Երշակունի իշխանը, որ իրեն զարմանալի քաջութիւններովը երևելի եղած էր Յունաց մէջ : Վարազդատ զեռ Թագաւոր չեղած՝ մի անգամ հինգ Լոնդրարտացիի դէմ ելնելով՝ մէկմէկու ետեւ հինգն ևս մենամարտութեամբ

սպաննեց. մէկ բերդի վերայ վաղելով 17 հոգի նե-
տահար արաւ մեռուց ու ինքը չմնասուեցաւ. այլ
և թագաւոր հաստատուելէն յետոյ՝ երբ Յունաց
զօրքով Հայաստան կուգար, ճանապարհին ասորի
աւաղակաց հանդիպեցաւ, որք Նփրաա գետէն ան-
ցընելով՝ վերայի կամուրջի տեղ դրուած գերանը
գետը ձգեցին որ Ալարազգասէն աղատին, բայց վերջինս
սաստիկ բարկանալով՝ այն ՉՉ կանդուն լայնութիւն
ունեցող գետի վերայէն մէկ շնչով ցաթկեց, որով
աւաղակներն խկոյն զէնքերը ձգեցին ու անձնատուր
եղան Ալարազգասայ :

Ալարազգաս ինչո՞ւ Յունաց իշխանութենէն
ապստամբեցաւ .

— Յոյն զօրավարաց Հայաստանի մէջ արած
բռնութիւնները տեսնելով՝ չկարողացաւ համբերել,
և Շապհոյ օգնութեամբը ապստամբել ուզեց. սա-
կայն լսելով որ կայսրն իմացել է իւր ապստամբու-
թեան խորհուրդը, Ա. Պոլիս գնաց որ ինքզինքն
արդարացընէ. բայց կայսրը բարկութենէն առանց
անգամ տեսնելու՝ խկոյն Թուրխա (Նալանդիս) կըղ-
զին քշել տուաւ զինքը :

ԳԱՍ ԻԱ .

Արշակ Գ, Ալաղարշակ Բ և Խոսրով Գ.

Ալարազգասէն յետոյ ի՞նչ փոփոխութիւն
եղաւ Հայաստանի մէջ .

— Այսքը Պապայ երկու որդիքը, այսինքն Ալ-
շակն ու Ալաղարշակը թագաւոր դրաւ Հայոց վերայ,
որպէս զի եթէ մէկն ապստամբի, միւսը հաւատա-
ւիմ մնայ :

Այս երկու թագաւորներն ո՞ւր դրին իւրեանց
աթոռները .

— Արշակ Գ-ուն դրաւ իւր աթոռը, իսկ Ալա-
ղարշակ Նրիզա, որ և թագաւորութեան տարին
չլքնեցած մեռաւ :

Ալաղարշակայ մահուանէն յետոյ Հայաստանի
վիճակն ի՞նչ եղաւ .

— Պարսից Շապուհ թագաւորը լսելով որ մեծն
Թէոդոս վախճանել ու տեղը նորա Արկադէոս որ-
դին յաջորդել է (որ տկար մարդ էր), հետը հաշ-
տութիւն արաւ, որպէս զի Հայաստանի մէկ մասը
Պարսից հարկատու լինի. ուստի հաշտուելէն վերջը
որոշեցին որ Հայաստանի արևելեան մասը Պարսից

իշխանութեան տակ լինի, արևմտեանը — Յունաց . այս պատճառաւ Արշակ երրորդ՝ որ Հայաստանի արևելեան մասին կ'թագաւորէր, չուզէց անհաւատ Պարսից իշխանութեան տակ մնալ, Յունաց մասն անցաւ ու աթոռը Արիզա (Արզնիկայ) քաղաքը փոխադրեց, ուր շատ նախարարք գաղթեցին Պարսից մասնէն :

Արշակ երրորդին տեղը Պարսիկները զո՞վ թագաւորեցուցին իւրեանց մասին մէջ .

— Արշակունեաց ցեղէն Խոսրով անու՛նով մէկը :

Արշակայ և Խոսրովու պատերազմին պատճառն ի՞նչ էր .

— Նախարարաց անկարգութիւնը, որք Յունաց բաժինէն Պարսից մասն անցնելու ժամանակ՝ Արշակայ գանձը յափշտակեցին ու Խոսրովու տարին: Արշակ աղաչանքով ուզէց իւր գանձը, բայց երբ Խոսրով մտիկ չարաւ, պատերազմ բացուեցաւ մէջերնին, յորում՝ Արշակ յաղթուեցաւ ու քիչ ժամանակէն մեռաւ :

Ո՞վ յաջորդեց Արշակայ .

— Արշակայ տեղ մէկ յոյն կոմս դրաւ կայսրը, և Պարսիցն հայ իշխանին սպարապետ կարգեց :

Այս բանիս վերայ Յունաց բաժնի Հայ իշխանները նեղանալով՝ իւրեանց մէջը միաբանեցան և Խոսրովու մօտ գնացին . Խոսրով ալ յարմար միջոց համարելով՝ կայսեր խոստացաւ Յունաց մասին հարկն ևս տալու, որով երկուց մասանց միանգամայն թագաւորելով՝ բոլոր Հայաստանի տիրեց Խոսրով :

Շապուհ ինչո՞ւ համար Խոսրովու վերայ յուղարկեց իւր Արտաշիր որդին .

— Նախարարներէն ոմանք անձնական թշնամութիւն ունենալով Խոսրովու հետ, գնացին սուտ ամբաստանութիւն արին Շապուհ, որ իբր թէ Խոսրով ապստամբիլ կուզէ Պարսից իշխանութենէն . ուստի և Շապուհ շատ զօրքով իւր Արտաշիր որդին պատերազմի յուղարկեց :

Խոսրով ի՞նչպէս բռնուեցաւ Արտաշիրէն .

— Նախարարաց կողմանէ օգնութիւն չգտնելով՝ հարկադրեցաւ անձամբ Արտաշիրի մօտ գնալու, որ բանին խկութիւնը հասկացնէ իրեն . բայց Արտաշիր առանց հետն անդամ տեսնուելու՝ շղթայի զարկած Անյուշ բերդը յուղարկեց զինքը, և Խոսրովու տեղը՝ նորա Վրաստանէն եղբայրը թագաւորեցուց :

ԴԱՍ ԻՔ.

Վրաստանի և նորա գործերը.

Վրաստանացուհի ինչպէս արաւ իւր թագաւորութիւնը.

— Վրաստանացուհի ուսումնասէր, հանդարտ ու խոհեմ բնաւորութիւն ունենալով՝ խաղաղութեամբ ու խելացի կերպով կառավարեց մեր Հայաստան աշխարհը: Սա Պարսից Արման թագաւորին հետ մտերմութեամբ վարուելով՝ այնչափ սիրելի եղաւ նորա, որ Արման՝ Վրաստանացուհին հաճոյանալու համար՝ սորա Խոսրով եղբայրը Անյուշ բերդէն հանեց ու Պարսկաստանի մէջ մեծ պատուով պահեց:

Վրաստանացոյ ժամանակ ինչ ուսումնասիրան յառաջադիմութիւն արաւ մեր ազգը.

— Ս. Սահակ և Ս. Մեսրոպ տեսնելով ազգին խաղաղութիւնը և Վրաստանացոյ ուսումնասիրութիւնը՝ Հայոց նշանադրերը հնարելու աշխատեցան, որով Ս. Մեսրոպ մեծամեծ դժուարութեանց յաղթելէն վերջը՝ երկնային տեսիլքով հայկական նշանադրերը հնարեց: Նա առաջին անգամ Սողոմոնի առակաց գիրքը թարգմանելով՝ երբ ըստ ամենայն մասանց յաջողած գտաւ իւր ձեռնարկութիւնը,

Սամուսատ քաղաքէն Հայաստան դարձաւ. և Վրաստանացուհի սրբոյն Սահակայ հետ միացած՝ Մեսրոպայ ձեռքով դպրոցներ բացաւ ու հայերէն մատենադրութեան ոսկեդարին հիմունքը ձգեց:

Այն դպրոցներու աշակերտաց մէջէն որոնք եղան անուանի.

— Մեր երանելի թարգմանիչները, որոց համար ժամանակին պատմիչները „տրամախոհք, քաջուշեղք, փափկալիանդք, երկարողիք, կատարեալ և ամենայարմար“ անունները կուտան: Սոցա թիւը Խորենացին վաթսուն էր, կասէ, յորոց մեզի հասածներուն անունները սքաւ են. Յովսէփ Վայոց Չորէն, Յովհան Խոսրովանող, Ղևոնդ երէց Վանանդեցի, Խնննի Աղբաբցի, Արեւոն, Մուշէ Տարոնեցի, Տէրայր Խորձենացի, Յովսէփ Պաղնացի, Յովհան Լիւղեցացի, Խնովտ, Վասնան, Լեւոն, Թարսէն, Պաննի, Արշակ Արշարունի, Ղալաբէն, Մովսէս Խորենացի, Մամբրէ վերջանող, Վասննի Անյուշ, Պետր Ստրոգիլոս, Յովհան Մանրակոնի, Լեւոն, Ղալաբ Փարպեցի, Լեւոն Անդեղացի և այլն, որք ըստ մեծի մասին Լեւոնի, Անարիա, Աղեքսանդրի, Աթէնք, Հովմ և Բիւղանդիոն քաղաքները ճանապարհորդելով ու կրթուելով, ամեն տեղ արժա-

նաւոր սրտիւ ու մեծարանք գտան և ժամանակին
գիտուններուն մէջ հռչակաւոր եղան :

Վճամշապուհ հրչափ ժամանակ թագաւորեց .

— Վասնեմէկ տարի թագաւորեց . և իւր հեռա-
տես գործունէութեամբը՝ մեր անուանի թագաւորաց
կարգն անցաւ :

ԴԱՍ ԻԳ.

Խոտորով Պ-էն Դինը Արշակունեաց Լագա-սրո-Բեան
վերջանալը .

Ռ՜վ անցաւ Վճամշապուհ տեղը .

— Նորա Արտաշէս որդին տակաւին փոքր լինե-
լով՝ զարձեալ Խոտորով թագաւորեց երկրորդ ան-
գամ, որ մէկ տարիէն վերջը մեռաւ :

Խոտորովի մահուանէն յետոյ Հայաստան ինչո՞ւ
տակնուվերայ եղաւ .

— Վասն զի Յազկերտ ուզելով որ Հայերը կրա-
կապաշտ անէ, իւր Շապուհ որդին Հայոց թագա-
ւոր դրաւ :

Յազկերտի այս խորհուրդն առաջ դնաց .

— Ոչ, վասն զի քիչ ժամանակէն Յազկերտ հի-
ւանդացաւ ու մեռաւ . իսկ Շապուհ երբ Պարսկաս-
տան դնաց որ հօրը թագաւորութեան աթոռը ժա-
ռանդէ, արքունեաց սպասաւորներէն սպանուեցաւ :
Նոյն միջոցները նախարարք Շապուհ մահը լսելով՝
նորա թողած զօրաց վերայ վազեցին ու լաւ կոտո-
րած անելէն յետոյ փախուցին Հայաստանէն . բայց
Պարսից Վճամ թագաւորէն վախնալով՝ շուտով
ցրուեցան և իւրեանց բերդերը քաշուեցան :

Խոտորովի տեղ ո՞վ թագաւորեց Հայոց վերայ .

— Վճամ մեր ազգը բաւական նեղելէն յետոյ՝
երբ տեսաւ որ առանց մէկ զլխի չկրնար Հայաստա-
նի սովորական հարկը ժողովել, նախարարաց հեռ
հաշտուեցաւ ու Վճամշապուհ որդին Արտաշէս եր-
կրորդը Հայոց վերայ թագաւորեցուց, որ տասնե-
ութը տարեկան էր :

Արտաշէս ի՞նչպէս արաւ իւր թագաւորութիւնը .

— Թոյլ ու անհոգ կերպով . ուստի նախարարնե-
րը նորա անկարգութիւններէն ձանձրանալով՝ ուզե-
ցին ինդրել Վճամէն որ Հայոց թագաւորութիւնը
վերցնէ ու տեղը մէկ Պարսիկ մարդկան դնէ :

Նախարարաց այս անմիտ խորհրդոյն դէմ կե-
ցող չեղանք .

— Սուրբն Պահակ շատ աշխատեցաւ նախարա-
րաց միտքը փոխել, որ յետ կենան իւրեանց ազգա-
կործան դիտաւորութենէն, բայց նոքա իւրեանց
տղիտութենէն աչքերնին մուծ կոխած՝ բանի տեղ
չդրին սրբոյն աղաչանքը :

Արշակունեաց թագաւորութիւնն ի՞նչպէս վեր-
ջացաւ .

— Վճամ նախարարաց խնդիրքը լսելով՝ Պարս-
կաստան կանչեց Ս. Սահակն ու Արտաշէսը : Վեր-
ջինս թէև Ս. Սահակայ պաշտօնաւորութեամբը ինք-
զինքն արգարացուց, բայց Վճամ Հայոց թագա-
ւորութեան այնպիսի դիւրին կերպով վերցուիլը ի-
րեն ձեռնտու տեսնելով՝ զՍ. Սահակը բանտ դրաւ,
զԱրտաշէսն ալ աքսոր յուղարկեց, ուր երեք չորս
տարի ապրելէն վերջը մեռաւ . որով Արշակունեաց
Հզօր թագաւորութիւնը 580 տարի տևելէն յետոյ՝
Քրիստոսի 428 թուականին վերջացաւ :

Մ Ա Ր Զ Պ Ա Ն Բ .

ԴԱՍ ԻԴ .

Վ Է Կ Ի Կ ր շ ա պ ու Կ Է Է . Վ Է Կ ր Կ ան ան ց պ ա ր Է ր ա պ Է ր .

Արշակունեաց թագաւորութիւնը վերցուելէն
յետոյ ո՞վ կիշխէր Հայաստանի .

— Պարսից թագաւորէն յուղարկուած այլևայլ
իշխաններ, որք Ժարդուան (փոխարքայ) կասուէին, և
որոց առաջինը Վ Է Կ Ի Կ ր շ ա պ ու Կ Է Է Է եղաւ : Սա բնու-
թեամբ խաղաղասէր և ազնիւ մարդ լինելով՝ շատ
լաւ կառավարեց Հայաստանը տասնևչորս տարի :

Վ Է Կ Ի Կ ր շ ա պ ու Կ Է Է Է յետոյ ո՞վ դրուեցաւ մարդ-
պան .

— Յազկերտ՝ Հայոց սիրտը վաստրկելու համար՝
Սիւնեաց Վ Է Կ Ի Կ ր շ ա պ ու Կ Է Է Է անունով փառասէր, անկիրթ ու
ազգատեաց իշխանը դրաւ մարդպան, որ իբրև հայ՝
փոխանակ ազգին ուրախութեանն ու երջանկու-
թեանը առիթ լինելու, Հայաստանի թշուառու-
թեանցը մեծապէս պատճառ եղաւ :

Այն միջոցները Յազկերտ ի՞նչ հնարք բանեցուց շայերն արևապաշտ անելու .

— շրաման հանեց որ շայք իրեն զօրք տան . որպէս զի կարողանայ ազգին երևելի զօրավարները հեռացրնել ու մնացածները դիւրաւ արևապաշտ անել . ուստի և շայերը խորհուրդ արին ու Յազկերտին անհաւատարմութեան կասկած չտալու համար՝ նախարարաց ու քահանայից հետ մէկտեղ բաւական զօրք յուղարկեցին Պարսկաստան : Յազկերտ երկու տարի շոնաց դէմ պատերազմելէն վերջը՝ երբ չկարողացաւ յաղթել՝ Պարսկաստան դարձաւ ու սկսաւ յորդորել եւ ստիպել նախարարներուն որ արևապաշտ լինին : Նախարարները դէմ կեցան Յազկերտի, ոմանք ևս իւրեանց զօրացը հետ նահատակուեցան, ինչպէս՝ Վարդէպին, Ապով՝ Վանանի ու Մանուկէր Ուշտունի : Միւս նախարարներուն ևս շատ ստիպեց Յազկերտ, բայց չկարողացաւ նոցա մտքի հաստատութիւնը խախտել :

Նախարարաց Պարսկաստան եղած ժամանակը շայաստանի մէջ ի՞նչ նոր բան եղաւ .

— Յազկերտի կողմանէ Վենչապոսի անունով մէկ մարդպան եկաւ, որ շայերը դարձրնելու համար շատ նեղութիւններ սուսաւ նոցա . բաց յայնմանէ Յազկերտ հրովարտակ զրեց ամենայն շայոց՝ հրա-

մայելով որ կամ թղթոյն պատասխանը տան և կամ Պարսից կրօնքն ընդունին : Այն պատճառով Յովսէփ կաթողիկոսը ազգին միաբանութեամբը հրովարտակին ազգու պատասխանը զրեց և թագաւորին հրամանը քաղցրութեամբ մերժեց :

Այն պատասխանին վերայ Յազկերտ ի՞նչ արաւ .

— Խորամանկութեամբ հրաման զրեց որ ազգին մեծամեծ նախարարները Պարսկաստան երթան, որոց տեղ հասնելուն պէս՝ խիղջն բանտ դնել սուսա զիրենք, ու սկսաւ ստիպել որ կամ հաւատքնին ուրանան ու իրենց առաջին պատուոյն հասնին և կամ մահուան դատուարտուին :

Նախարարները Յազկերտի այս խաբէութեանը դէմ ի՞նչ հնարք բանեցուցին .

— Տեսնելով որ իւրեանց մեռնելէն վերջը շայաստան ոտքի տակ պիտի երթայ, առ երեսս կատարեցին թագաւորին հրամանը, երկրպագութիւն արին արևու և շատ մոզերով շայաստան դարձան :

Շայք մոզերուն դալը լսելով ի՞նչ արին .

— Սուրբ Վեռնիկի և նորա հետ միացած քահանայից՝ առաջնորդութեամբը մոզերուն վերայ վազեցին և ի նոցանէ շատերը մեռցրնելով ու վիրաւորելով՝ մնացածները հալածական փախուցին շայաստանէն :

Մոզերուն հալածուելէն յետոյ Պարսկաստանէն դարձող նախարարներն ի՞նչ արին.

— Վարդան՝ որ Պարսկաստանի մէջ առ երեսս միայն ուրացել էր քրիստոնէութիւնը, եկաւ Յովսէփ կաթողիկոսին ոտքն ընկաւ ու թողութիւն խնդրեց իւր ականայ ուրացութեանը: Իսկ Վասակ, որ սրտանց ուրացած էր, չուզեց որ մոզերը հեռանան Հայաստանէն, ուստի ստութեամբ համոզեց քահանաները, որ նոյն միջոցին դէմ չկենան մոզերուն, որպէս զի Յազկերտին առաջը յանցաւոր չը լինին, ու յետոյ կամաց կամաց դուրս հանեն զիրենք:

Վասակայ խորհուրդն ի՞նչ հետեանք ունեցաւ.

— Նախարարները թէև ի սկզբան համոզուեցան, բայց վերջը տեսնելով որ հետզհետէ կրակապաշտութիւն կհաստատուի Հայաստանի մէջ ու Վասակ Պարսից հետ միացած չարիք կհասցընէ Հայոց, վրան վաղեցին՝ Պարսիկները փախուցին ու զՎասակը բռնեցին. բայց նորա սաստիկ աղաչելուն ու աւետարանով երդուելուն համար նորէն ազատ թողուցին զինքը:

Յազկերտ ուրիշ ո՞ր ազգը կուզէր արևապաշտանել.

— Աղուանից ազգը, զորս դարձընելու համար շատ

մոզեր յուղարկեց նոցա երկիրը. բայց Աղուանք Պարսից դիմադրել չկարողանալով՝ Հայերէն օգնութիւն խնդրեցին, որով Հայք հարիւր հազարի չափ մարդիկ՝ ժողովեցան Շահապիվան քաղաքը և երեք դունդ բաժնեցին բոլոր զօրքը, այսինքն՝ առաջին դունդը, որ Պարսից դէմ պիտի կենար՝ Ներշապուհ Արծրունի յանձնեցին, երկրորդը՝ Վարդանին արւին, որ Աղուանից օգնութիւն գնաց. իսկ երրորդ դունդը Վասակին յանձնեցին, որ զՀայաստանը պահպանէ:

Վարդան և Վասակ ի՞նչպէս կատարեցին իւրեանց զօրապետութիւնը.

— Վարդան Աղուանք երթալով՝ Պարսից զօրքը փախուց, մոզերը ջարդեց, կրակատունները կործանեց ու համարձակ քրիստոնէութիւնը պաշտել տուաւ այնտեղ: Սա մինչդեռ այնպիսի քաջութիւններով Հայաստանի փառքը կաւելցընէր, անզգամ Վասակը հաւատքն ուրացած նորէն սկսաւ եկեղեցիներն աւրել ու կրակապաշտութիւն մնցընել Հայաստանի մէջ, որ Վարդան լսելով խիտն Հայաստան դարձաւ, և Վասակայ ու նորա հետ ուրացողներուն մեծ ջարդ տուաւ:

Յազկերտ Վարդանայ արածները լսելով ի՞նչ արաւ.

— Մինչնէրսէն անունով պարսիկ սպարապետը յուղարկեց շատ զօրքով որ գայ պատերազմը լմնցրնէ :

Հայք այս պատերազմի ժամանակ ի՞նչ արին .

— Ալարզանայ հրամանաւր վաթսուն հազար հոգի ժողովեցան և պատերազմի պատրաստուեցան Աւարայր զիւղին մերձակայքը : Պատերազմն սկսուելուն պէս՝ թէպէտ մեծ քաջութիւններ արին Ալարզանանք, բայց երբ սուրբ Ալարզանը քաջութեամբ զարնուելով մեռաւ, Պարսիկները յաղթեցին Հայոց, որով այն օրուան մէջ հաւատքի և հայրենեաց վերայ մեռնող քրիստոսազէն զինուորաց թիւը 1036 հոգւոյ հասաւ . իսկ Պարսից կողմանէ 3544 հոգւոյ (451):

Ասասիայ վերջն ի՞նչ եղաւ .

— Իւր համազգեացը ամեն տեսակ չարիք հասցրնելէն յետոյ՝ Հայերը արեւապաշտ անել չկարողանալուն համար՝ յանցաւոր գտնուեցաւ Յաղկերտի առջև, որոյ հրամանաւն իսկ Ասասիայ իշխանութիւնն ու հարստութիւնը առնուեցաւ ու ինքն ալ բանտ դրուեցաւ, յորում որդնտուելով մեռաւ :

ԳԱՍ ԻՆ.

Արարի՞պար, Ատրվշնասպ և Ահահանայ պատերազմը .

Ալարզանանց պատերազմէն յետոյ Հայաստանի մէջ ո՞վ մարդպան դրուեցաւ .

— Արարի՞պար պարսիկը : Սա Յաղկերտի հրամանաւր բոլոր նախարարները բռնեց Պարսկաստան յուղարկեց, որք 4 տարի բանտը կենտլէն վերջը Շրճշապահ իշխանին աղաչանքովը բանտէն ազատեցան, և Յաղկերտի մահուանէն յետոյ նորա Պերոզ որդւոյն ութը տարի ծառայելով՝ Ատրվշնասպ մարդպանը Հայաստան զարու ժամանակ՝ զիրենք ևս հետը մէկտեղ Հայաստան բերաւ :

Ո՞վ էր Ահահան և ի՞նչ կպատմուի վերան .

— Ահահանը մեծին Ալարզանայ Հմայեակ եղբօր մեծ որդին էր, որ իրեն քաջութեամբն ու խոհեմութեամբը սիրելի եղած էր Պարսից մեծամեծներուն ու Պերոզայ : Երբ Պարսկաստան գտնուող ազգութեաց նախարարները նախանձեցան և չարախօսութիւններ արին նորա վերայ, Ահահան իմնացաւ որ ի զմէր տեղը պիտի մտանուի անօրինաց ձեռքը, ինչպէս իրմ առաջ շատ նախարարներ, իսկոյն իրեն քովի Հայերուն հետ մէկտեղ Պարսից բանա-

կէն զատուեցաւ և Ատրվշնասպայ զօրաց վերայ յարձակելով բաւական մարդ ջարդեց. յետ որոյ շայք իւրեանց մարզպան ընտրեցին զՍահակ Բաբրայանին և ընդհանուր սպարապետ կարգեցին զՍահան Սոփիանեանը :

Պերոզ երբ Վահանայ ամստամբութիւնը լսեց ի՞նչ արաւ .

— Ատրվշնասպայ ձեռքը շատ զօրք տուաւ ու դարձեալ շայաստան յուղարկեց, ապապրելով որ Վահանը կենդանի բռնեն. բայց քաջն Վահան՝ Յովհան Սանդակունին հետն առած՝ իւր սակաւաթիւ զօրօքը Պարսից զօրքը ջարդեց ու զԱտրվշնասպ մարզպանն ալ սպաննեց : Պերոզ այս բանիս վերայ բարկանալով մէկմէկու ետեւ երեք հազարապետ յուղարկեց Վահանայ դէմ, բայց Վահան քաջութեամբ պատերազմելով՝ մեծամեծ կոտորածներ արաւ իւր սակաւաթիւ մարդիկներովը, մինչև որ Պերոզի մահուանէն վերջը՝ նորա յաջորդ Վահաբը անունով Պարսից թագաւորն իրաւացի ճանաչելով Վահանայ ապստամբութիւնը՝ հետը հաշտուիլ ուզեց, և Նիխոր անունով խաղաղասէր մարդը յուղարկեց Վահանայ հետը խօսելու :

Շաշտութիւնն ի՞նչպէս եղաւ .

— Երբ Նիխոր շայաստան եկաւ և Վահանայ հետ տեսնուելով՝ խնդրեց թագաւորի կողմանէ խաղաղ և հնազանդ մնալ Պարսից թագաւորութեանը, Վահան երեք պայման առաջարկեց, այսինքն . ա) որ քրիստոնէութիւնը ազատ պաշտուի շայաստանի մէջ ու Պարսիկներն ամենեւին չխառնուին . բ) որ արժանաւոր և հաւատարիմ մարդիկ միայն պատուոյ հասնին և գ) որ մինչև երկու կողմի պատճառները չիմացուին՝ դատաստան չըկտրուի : Նիխոր այն պայմանները երդմամբ յանձն առաւ, և թագաւորը՝ Վահանայ առաջարկութիւնները զովելով՝ զինքը տեսնել ցանկացաւ, որով Վահան Պարսկաստան գնաց, մեծ պատուով ընդունեցաւ և շայոց ազգին սպարապետ կարգուելով շայաստան վերադարձաւ :

Վահան ի՞նչպէս կատարեց իւր սպարապետութեան պաշտօնը .

— Խոհեմութեամբ և հեռատեսութեամբ . ուստի և քիչ ժամանակէն ինքը մարզպան դրուեցաւ շայոց վերայ և նորա Վահաբ եղբայրը՝ սպարապետ :

Վահան որչափ ժամանակ մարզպանութիւն արաւ և ո՞վ դրուեցաւ նորա տեղը .

— Ղսանեվեց տարի ամենայն բարեմասնութեամբ կառավարեց շայաստանը : Նորա տեղը անցան հետ-

զհետէ նախ՝ Վահանայ Վարդ եղբայրը, և ապա Բարդան պարսիկը, Մեծ Գնունի նախարարը, Գենշապուհ պարսիկը, Վշնասլահրաժ, Վարապրապ և Սուրեն Ղեկեր: Վերջինս հաւատոյ կողմանէ շատ նեղութիւն սուսաւ Հայոց:

Այս միջոցները ի՞նչ նշանաւոր բան եղաւ Հայաստանի մէջ.

— Եղիվարդեցի Մնկէս կաթողիկոսը Հայոց սուսմարը նորոգելով՝ նոր թուական հաստատեց 551-ին, ուսկից սկսեալ մինչև ցայժմ 1323 տարի է:

ԴԵՍ ԻԶ.

Վարդան Բ-էն Տիգր Սեփապ Բաղճայաղի.

Վարդան երկրորդն ինչո՞ւ զՍուրեն Ղեկեր մարզպանն սպաննեց.

— Իւր Մանուէլ եղբայրը՝ Սուրենի հրամանաւ սպաննուելուն համար, որ Վարդան բարկանալով զօրք ժողովեց Գուին քաղաքի վերայ վաղեյ՝ զՍուրենը սպաննեց, Պարսիկ զօրքը ցրուեց և Հայաստանի կառավարութիւնը իւր ձեռքն առաւ:

Պարսից Խոսրով թագաւորը երբ Վարդանայ արածը լսեց ի՞նչ արաւ.

— Երկու անգամ զօրք յուղարկեց Հայաստան. առաջին անգամը յաղթուեցաւ, բայց երկրորդ անգամը յաղթող գանուելով՝ Վարդան Ս. Պոլիս փախաւ, ուր օգնութիւն առնելով Յուստինիանոս կայսրէն՝ դարձեալ Պարսից դէմ ելաւ. սակայն երկու կողմէն շատ կոտորած անելէն յետոյ՝ նորէն Պարսից ձեռքը մնաց Հայաստանը, յորում Միհրանը (Ղեկերի որդի) վերջին պարսիկ մարզպանն եղաւ, տասնեհինգ տարի խաղաղութեամբ կառավարելով Հայաստանը:

Միհրան պարսիկ մարզպանութեան ժամանակ՝ Հայաստանի Յունաց բաժնին մէջ ի՞նչ պատուհեցաւ.

— Խոսրով Մեծին Հայաստանի տիրելէն վերջը՝ զօրք յուղարկեց նաև Փոքր Հայաստան, որ Յունաց ձեռքն էր. ուստի և Յունաց Տիրերիոս կայսրը՝ Մաւրետիոս (Սորիկ, որ մօրը կողմանէ հայ էր) զօրասպետը յուղարկեց շատ զօրքով Պարսից դէմ, որ եկաւ Պարսիկները հալածեց ու զՄուշեղ Մամիկոնեան Հայոց քաջ սպարաբապետը, — որ Յունաց և Պարսից պատերազմներուն մէջ անուանի էր, — դուքս կարգեց այնպէս:

Մուշեղ կարողացաւ իւր դքսութիւնը խաղաղութեամբ անել .

— Ոչ . վասն զի Խոսրով դարձեալ զօրք յուղարկեց Փոքր Հայաստան, սաստիկ պատուիրելով որ Հայաստանի Տարոն գաւառը հիմնայատակ անեն ու զՄուշեղը գերելով՝ շղթայակապ իւր դիմացը հանեն :

Մուշեղ Պարսից գալը լսելով՝ ի՞նչ հնար մտածեց .

— Մուշեղ տեսնելով որ իւր ծերութեան պատճառաւ պիտի չկարողանայ Պարսից դէմ ելնել, իւր Վահան (որ քաջութիւններուն համար՝ Պայլ Վահան կասուէր) ազգականին խնդրեց, և սա պատերազմն իւր վերան առաւ, յորում իբրև հաւատոյ պատերազմ՝ յոյսն Աստուծոյ վերայ դրած՝ զարմանալի խորամանկութեամբ ու ճարտարութեամբ վեց հազար պարսիկ կոտորեց իւրեանց Միհրան և Վարշիր զօրազլուխներուն հետ :

Վահան ի՞նչպէս կոտորեց այն վեց հազար Պարսիկները .

— Խորամանկութեամբ մարդ յուղարկեց Միհրանայ՝ խոտանալով որ զՄուշեղը Պարսից կմտանէ թէ որ իրեն տան Տարոնոյ երկիրն ու Մուշեղայ

հարատութիւնը : Միհրան իսկոյն հաւանեցաւ, և Վահան Միհրանայ մօտ գնալով՝ 4000 Պարսիկ զօրք առաւ որ երթայ Մուշեղը բռնէ : Այն զօրաց հետ երբ Վահան Խարձ զիւղը հասաւ, 50 հոգի թողուց այնտեղ և մնացեալը Օձ քաղաքը յուղարկեց, ապապրելով այն 50 զինուորաց որ երբ ինքը մարդ յուղարկէ իրենց իւր նշանովը պատերազմին յաջողութեանը համար, իսկոյն Միհրանին խնայրնեն ու անկէց ուրիշ զօրք առնելով իրեն դան : Յետոյ Օձ քաղաքի զօրացն ալ պատուիրեց որ զէնքերը հագուսաներուն տակը պահելով՝ բարեկամական կերպով քաղաք մտնեն, և երբ ինքը նըշան տայ՝ անինայ կոտորեն քաղաքացիքը : Այս կերպով քաղաք մնացուց այն զինուորները, և ինչպէս որ առաջուց որոշած էր, այն աներուն մէջ բաժնեց զիրենք, ուր պահուրտած սպառապէն Հայերը՝ Պարսից ներս մտածներուն պէս՝ վրանները կրվազէին ու կը խղզէին : Այն զինուորներն այս կերպով կոտորելէն յետոյ, Վահան մարդ յուղարկեց այն 50-ին որ շուտով երթան 2000 հոգի ալ օգնութեան բերեն, որոց մինչև գալը՝ Պարսիկ զօրաց հագուստները քաղաքացւոց հագցուց, ու քաղաքին մուտքին վերայ կարգաւ շարել տուաւ, և երբ այն 2000 Պարսիկները մօտեցան, հրաման տուաւ պարսկա-

զգեստ հայ զինուորներուն որ յաղթական փող կար-
նելով քաղաքը մտնեն, որով այն 2000 հոգին ալ
ուրախութեամբ ետենեբն քաղաք մտան, և Հայ-
երը զիրենք մէջ առնելով շարաչար կոտորեցին :
Յետոյ Վահան Միհրանայ քով գնաց և մէկ ու-
րիշ խորամանկութեամբ մնացեալ երկու հազարն
ու Միհրանը սպաննեց :

Վահան, ուրիշ ինչ քաջութիւններ արաւ
և երբ մեռաւ .

— Արովհեստե Վահան՝ Միհրանայ ասննապիւրն
սպաննեին յառաջ՝ Միհրանայ բերնեն թուղթ
գրել տուած էր Պարսից Վարշիր զօրավարին որ
3000 զօրք առած՝ երեք օրէն իրեն կայ առանց
ուշանալու . Վարշիրը եկաւ : Վահան ալ պարակա-
զգեստ Հայ զօրքերովը գիմնացն ելաւ, և նոցա ան-
պատրաստ գտնուած ժամանակը՝ բոլորը թրէ անցը-
նել տուաւ, յորոց հազիւ թէ 40 հոգի փախչե-
լով աղատեցան, և գնացին եղած կոտորածը խոս-
րովու պատմեցին : Եյս բանիս խորովը բարկացած՝
թէպէտ առաջինէն աւելի զօրք տուաւ Միհրանայ
Վախտանի հօրեղբոր ձեռքը և Վահանայ դէմ ու-
ղարկեց, բայց Վահան՝ իւր քաջութիւնն ու կեն-
դանի հաւատքը դէնք ու օգնական առնելով՝ երեք

չորս անգամ սաստիկ ջարդ տալով Պարսից՝ փա-
ռաւոր յաղթութիւններ արաւ, յետ որոյ այն ան-
ընդհատ պատերազմներէն տկարացած՝ ցանկալի մա-
հուամբ մեռաւ :

Ա՞յ յաջորդեց Վահանայ .

— Իւր Սքառ հայրենաւեր որդին՝ որ հօրը քա-
ջութեանցը ժառանգորդ եղաւ, Պարսից դէմ ան-
պարտեքի քաջութեամբ պատերազմելով՝ նոցա չորս
նշանաւոր զօրավարներն սպաննեց և ուրիշ շատ
քաջութիւններ արաւ, որոց համար Բաղճայաղի
կոչուեցաւ :

Սքառայ տեղն ո՞վ անցաւ .

— Հայ նախարարաց խնդրանօքը՝ Պարսից խոս-
րով թագաւորը մարդպան դրաւ զՎահանի Սահա-
րունին, որ քսաննչորս տարի իշխելէն վերջը՝ թըշ-
նամեաց մասնութիւններուն պատճառաւ Պարսիկ-
ներէն կասկածելով՝ Արատանդնուպոլիս փախաւ :

Վահանունոյ տեղն ո՞վ դրուեցաւ մարդպան .

— Վարդապիւրոյ՝ Սքառ Բաղճատունոյ որդին,
որ եօթը տարի մարդպանութիւն անելէն յետոյ՝
Ատրպատականի մարդպան Սոսոսոս պարսիկէն վախ-
նալով (որ զինքն սպաննել ու Հայաստանի մարդ-
պանութիւնը ձեռք առնուլ կուզէր), Յունաց Հե-

բակ կայսեր մօտ գնաց: Իսկ Ռոստոմ ոչ միայն իւր նպատակին չհասաւ, այլ և զրկուեցաւ իւր իշխանութենէն՝ Պարսից թագաւորութիւնը Արաբացւոց ձեռքն ընկնելուն համար:

Ինչպէս եղաւ որ Վաւիթ Սահառունին կիրապաղատ կարգուեցաւ.

— Եզր կաթողիկոսը Պարսից տէրութեան Արաբացւոց հետ ունեցած խռովութիւնները տեսնելով՝ Յունաց շերակ կայսրէն խնդրեց որ մէկ իշխան կարգէ շայաստանի մէջ. և կայսրն զՎաւիթը յուզարկեց՝ կէրապաղատ (մեծ իշխան) անուանելով: Բայց հազիւ թէ երեք տարի անցաւ, նորէն շայերը Վաւիթ Սահառունոց դէմ ելան ու բոլորովին քշեցին շայաստանէն:

Վաւիթէն յետոյ ի՞նչ արին նախարարք.

— Մէկ տարի առանց իշխանի մնալով՝ միսեանց պատուոյն նախանձեցան և մէկմէկու դէմ թշնամացան, որով Պարսիկներէն ի զատ շագարացիք (Արաբացիք) ևս սկսան շայաստանի վերայ վազել:

Շագարացւոց դէմ ո՞ր նախարարները պատերազմեցան.

— Թէոդորոս Ուշտունին ու Վահան Սահարակունը, որք ութ հազար զօրքով թշնամեաց դէմ ե-

լան: Սոցա հետ միացաւ դժբաղդարար Սահառունը: Անձեացին իրեն զօրքը. որ պատերազմի ժամանակ երկչտութեամբ ու վատութեամբ թշնամեաց կողմն անցնելով՝ իւր ազգայնոց դէմ պատերազմեցաւ, որով շագարացիք շայոց զօրավարներն իւրեանց զօրաց հետ ջարդելէն յետոյ՝ շայաստանի ներսերը վազեցին ու մեծամեծ փնասներ հասուցին բնակչաց: Վուին քաղաքի մէջ ևս տասներկու հազար մարդ կոտորեցին, և այլևայլ տեղերէ երեսունհինգ հազար հողի ժողովելով գերի տարին Վամասկոս:

Այս սոսկալի կոտորածէն յետոյ ո՞վ եղաւ կիրապաղատ.

— Ներսէս երրորդ կաթողիկոսին միջնորդութեամբ Յունաց Արտանդ կայսրը կիրապաղատ նշանակեց Վարադախրոց Բագրատունին, որ առաջ մարզպան էր, և որ մէկ տարիէն յետոյ մեռնելով՝ տեղն անցաւ իւր որդի Ամբատը:

ԳԵՍ ԻԷ.

Մեքայայ կերպարապատմենէն թիւն Բագրատո-
նեայ Բագատորմեան սկիզբը.

Սմբատայ ժամանակ ի՞նչպէս էր Հայաստանի
վիճակը.

— Սմբատ թէև խակբան Թէոդորոս Աշտուճուոյն
օգնութեամբը բոլոր այլազգիները վանեց Հայաստա-
նէն. սակայն երբ Հազարացիք նորէն անթիւ բազ-
մութեամբ Հայաստան եկան և Այրարատ գաւառի
մէջ մեծ կոտորած արին, նախարարները նոցա ան-
թիւ զօրաց դէմ կենալն անհնարին տեսնելով՝ մէ-
ջերը խորհուրդ արին և շատ ընծանելով դիմաց-
ներն ելան, խոստանալով հարկատու լինել նոցա և
Յունաց հպատակութենէն հեռանալ:

Ա՛յլ յաջորդեց Սմբատայ.

— Համապատոյ Մաթիսնեանը, որ քիչ ժամանա-
կէն նորէն Յունաց հնազանդելով՝ կայսրէն կիրա-
պաղատ կարգուեցաւ: Մտիրապետը լսելով՝ Գամնա-
կոսի մէջ եղած բոլոր Հայ պատանդները թրէ ան-
ջընել տուաւ: Յետոյ դարձեալ հնազանդեցան
Հայերը, որով Համազասպայ մեռնելէն վերջը՝ տե-
ղը պատրիկ դրուեցաւ իւր Գրեկոս եղբայրը:

Գրեկոր սրբան ժամանակ իշխեց և ս՛վ յա-
ջորդեց իրեն.

— Բասնեչորս տարի իշխելէն վերջը Կաղրայ
պատերազմին մէջ մեռաւ. յետ որոյ Հայաստանը
երկու տարի անտէր մնալով սակնուվրայ եղաւ, մին-
չև որ Աշտ Բագրատոնի զօրանալով՝ թշնամիներ
ըր վանեց Հայաստանէն և Հազարացւոց հետ խա-
զաղութեան պայման դնելով՝ հարկատու եղաւ նոցա:

Աշտոյ պատրիւթեան ժամանակ Հայաստան
ի՞նչ վիճակի մէջ էր.

— Շատ ողբալի վիճակի մէջ. վասն զի Յոյնք
խնննալով որ Հայերը Հազարացւոց հարկատու և-
զիւ էն, շատ զօրք յուղարկեցին, մեծամեծ աւեր-
մունք արին և զՆերսէս Կամնարականը կիրապա-
ղատ կարգելով՝ իւրեանց տեղը դարձան: Իսկ Հա-
զարացիք ընդհակառակն՝ լսելով որ Հայերը Յու-
նաց հնազանդել են, իրենք ևս շատ վնասներ հա-
տուցին, միանգամայն և սխան Հազարացի ոստիկան-
ներ յուղարկել Հայաստան, որոց առաջինն եղաւ
Աբրահամ. յետոյ Մեհճայ, Կալճ, Ալէք և այլն,
որք մէկմէկէ աւելի չարք հասուցանելով՝ Հայաս-
տանի բնակչաց նիւթական ոյժը քամեցին:

Այն խեղճութեանց դէմ ի՞նչ դարման մտա-
ծեցին Հայերը.

— Հայ ոստիկանի ժամանակ նախարարները խրնդրեցին ամիրապետէն, և նա պատրիկ դրաւ զՌաֆայէլայ Ռաֆրայիսիւնին. բայց քիչ ժամանակէն փոխելով՝ տեղը Ապուսէթի այլազգին յուղարկեց: Ապուսէթ զալուն պէս՝ զՌազարատը բռնեց ու Վամանկոս յուղարկեց, ընդ որ Հայերը բարկացան ու Ապուսէթը բռնելով սպաննեցին (849):

Ամիրապետն Ապուսէթի սպանուելը լսելով ի՞նչ արաւ.

— Բողա անունով ոստիկանը յուղարկեց շատ զօրքով, որ ստիկալի կատաղութեամբ եկաւ Հայաստանը արիւնլուայ արաւ, և իւր տեղը Շէի պարսիկը ոստիկան դնելով՝ զԱշտ Արծրունին, զԱմրատ սպարապետն և ուրիշ շատ Հայեր հետը մէկտեղ գերի տարաւ, որք Հագարացոց բռնութիւններէն ոմննք իւրեանց հաւատքն ուրացան և շատերը նահատակուեցան, ինչպէս նաև Ամրատ սպարապետը՝ որ Խոսրովանող ասուեցաւ:

Հագարացոց այս արշաւանքէն յետոյ, Հայաստան ի՞նչ վիճակի մէջ մնաց.

— Վառն տազնապի մէջ. բայց մեր ազգի զերութեան 431 տարին լրանալով, և Աստուած իւր անհուն ողորմութեամբը կերպով մի մեր ազգը մի-

թարել ուզելով՝ Բագրատունեաց ցեղէն Աշտ անունով հեռատես նախարարը հանեց, որ իւր ազգասէր, ազնիւ և լմաստուն բնաւորութեամբը ամենուն սիրելի ու պատկառելի լինելով՝ Բագրատունեաց թագաւորութիւնը կանգնեց և մեր ազգը անօրինաց բռնութիւններէն ազատեց:



ՔԱՂՈՒԱԾԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ԱՐՁԱՎՈՒՆԵԱՑ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ.

ԴԱՍ ԻՔ.

Վաղարշապէի ինչև Սէթի Խոսքով .

Արշակունեաց թագաւորութիւնն ինչ կերպով սկսաւ .

— Պարթևաց երկրորդ Արշակ թագաւորը քրիստոսէ 149 տարի յառաջ Հայաստանի տիրելով՝ Հայոց թագաւոր դրաւ իւր Վաղարշակ եղբայրը, ուսկից Արշակունեաց թագաւորութիւնն սկսաւ :

Վաղարշակ ինչպէս թագաւորեց և ո՞վ անցաւ նորա տեղը .

— Մծրին քաղաքն աթոռանիստ անելով՝ շատ բարեկարգութիւններ արաւ Հայաստանի մէջ, և մեր ազգը շափազանց սիրելուն նշան Վար Աբաս անուամով ասորոյն ձեռքով Հայկազանց տերութեան պատմութիւնը բերել տուաւ Նիսուէի գրաստունէն, որով ամենայն բան կարգալէն ու իմանալէն յետոյ Հայկազանց նշանաւոր ցեղերուն առանձին առանձին պաշտօններ տուաւ : Իւր տեղն անցաւ որդին՝ Արշակ առաջին, որ Հօրը սէս բարեկարգութիւններ անելով՝ շատ տեղերու տիրեց :

Արտաշէս առաջինն ո՞վ էր, ի՞նչ արաւ ու ի՞նչպէս մեռաւ .

— Արշակ առաջինոյ որդին . իւր աշխարհակալութեանը կողմանէ Արշակունեաց ամենէն քաջ ու անուանի թագաւորը, որ Յունաստանի, Փոյր Ասիոյ և Պարսկաստանի տիրեց : Սա Յունաստանէն Արտեմիս, Հերակլ և Ապոլոն կոչոց արձանները բերաւ Հայաստան, և Պարսից թագաւորն իւր երկրորդն անելով՝ իւր անունովն ու պատկերովը ստակ կրիսել տուաւ Պարսկաստանի մէջ : Չնայելով որ Արտաշէս այնքան քաջ էր, շատ ցաւալի վերջ ունեցաւ նա . վառն դի իւր զօրաց մէջ յանկարծակի խռովութիւն ծագելով՝ սպանուեցաւ :

Տիգրան երկրորդին վերայ ի՞նչ դիտելիք կայ .

— Տիգրան երկրորդը իւր Արտաշէս Հօրը պէս աշխարհակալութեանց սէր կապելով՝ ապստամբ Յոյները վերստին նուաճեց, Ասորեստանեայց

դէմ պատերազմեցաւ ու նոցա Սելինէ թագուհին սպանեց, այլ և Երուսաղեմի տիրեց, ուր շատ զօրաց Հեռ Գնել զօրավարը թողոց : Յետոյ Մէհրդատայ պատճառաւ (որ Արտաշէս առաջինը Պոնտոսի կուսակալ դրած էր) Հռովմայեցոց Հեռ պատերազմելով՝ Տիգրան ոչ միայն իւր նախագահութիւնը Պարսից տուաւ, այլ և ինչ ժամանակէն Երուսաղէմ ևս Հռովմայեցոց ձեռքն անցաւ :

Ո՞վ յաջորդեց Տիգրանայ .

— Իւր որդին Արտաւազդ առաջին, որ պատերազմի յարմարութիւն շունեալով՝ Հռովմայեցիք շատ քաղաքներ առին ձեռքէն : Սորա տեղն անցաւ Արշամ, որ Պարսից Արշէգ թագաւորին օգնութեամբը Հռովմայեցիքը Հայաստանէն քշեց և Ասորոց երկրին մէկ մասը նորէն ձեռք ձգեց : Այս պատճառաւ Արշէգ վերին Հայոց 1 տիրեց . իսկ Արշամ՝ Սասրին Հայոց, ևս և Ասորոց մէկ մասին :

Արշակայ յաջորդն ո՞վ եղաւ .

— Իւր Աբար որդին, որ քաջութիւններէն զատ նշանաւոր է բոլոր աշխարհէս մէջ իրիւր առաջին բրիտանեայ թագաւոր . ուստի և իրաւամբ արժանի քրիստոսի տուած այն երանինն որ Աբարաւ թիցթի պատասխանին սկզբը գրեց անելով . « Երանի՛ իցէ այնմ, որ հաւատայ յիս, իբրև ոչ իցէ նորա տեսալ զիս, — այսինքն . Երանի՛ այն մարդուն, որ իմ հրաշքները շտեմած՝ կհաւատայ ինձ » :

Արգաթէն յետոյ որ՞նք թագաւորեցին .

— Անանէ և Սանատրուկ, որ երկուքն ևս նորէն կապալտ եղան : Անանէ՛ Եգիպտոյ պալատը նորոգելու ժամանակ, վրան մէկ սիւն ընկաւ ու մեռաց զինքը . իսկ Սանատրուկ բրիտանեկոյ դէմ հալածանք ճանելով՝ թաղէնս առաքեալն ու Ս. Սանդուխտ կոյսը (որ իւր աղբիկն էր) մեռցնել տուաւ : Ինքն ալ 34 տարի թագաւորելն վերջը՝ որսի գնացած ժամանակ նետէ զարնուելով մեռաւ :

(1) Վերին Հայք խոսքն Սէթի, Արցի, Փոյրաստան, Ուրտ, Գուրտ և Տայ . իսկ Սասրին Հայք—Բաբել Հայտ, Զարբոր Հայտ, Աշինի, Տարսիսի, Միտ, Կարգայտ, Պարսիսայտ, Ասպարսիս և Արարտիան յիւրեպիցի :

Ո՛չ էր Երուանդ երկրորդ և ինչպէս թագաւորութիւն արաւ .

— Արշակունեաց ցեղէն էր , որ թագաւորելուն պէս՝ բոլոր Սանա-տրկոյ ցեղը մեռցընել տուաւ , ըստ ի Արտաշէսէն , որ Սմբատ Բագրատունեոյն ձեռքովը Պարսկաստան փախաւ , և յետոյ Պարսից օգնութեամբը Հայաստան գաւով՝ զԵրուանդն սպաննեց :

Արտաշէս երկրորդն ինչ արաւ .

— Երբ Աւանոց թագաւորը պատերազմի ելաւ , Արտաշէսը յաղթեց , և նորա Սաթրապի արքայորդին գերի արաւ . բայց երբ նորա Սաթրապի քրտնիկ աղաչեց , Արտաշէս զՍաթրապիկը թաղուհի արաւ Հայոց , և Աւանոց Սաթրապի արքայորդին գերութենէ ազատեց :

Արտաշէսէն յետոյ որո՞նք թագաւորեցին .

— Արտաւազդ երկրորդ , Տիրան առաջին և Տիրան երրորդ , որք նշանաւոր դործ չունեցան . յետոյ թագաւորեց Աշտարէ , որ Աշտարշաւանը շինեց , Վարդգէսաւանը պարսպապատ անելով՝ Վաղարշապատ կոչեց , և Սարմատացոց պատերազմն մեջ մեծ կոտորած անելէն վերջը մեռաւ :



Ի Ա Ս Ի Թ .

Մէծին Խոսարովո լազաւորելէն մինչև Արշակունեաց լազաւորութեան լէրջմանալը .

Ո՛չ էր Մեծն Խոսարով .

— Վաղարշայ որդին , որ բաջ , քաղցրարարոյ և հայրենասեր էր : Սա իւր հօր սպանութեան վրէժն առնելու համար , Սարմատացոց վերայ վազեց , սաստիկ կոտորած արաւ և բոլոր ժողովրդէն հարիւրէն մեկ պատանդ առաւ : Հայաստանի մեջ գանձազան շինութիւններ արաւ , Հոռովմայեցոց Անտոնինոս կայսեր պատերազմի ելած ժամանակը յաջող դիմադրութիւն արաւ և նորա զօրաց շատը կոտորելով փախտական գարձուց . այլ և Պարսից Արտաշէր թագաւորը Պարսկաստանէն հալածեց :

Խոսարովի վերջն ինչ եղաւ .

— Պարսից թագաւորը՝ Անակ անունով մեկը յուշարկեց Հայաստան , որ եկաւ խարդախութեամբ ինքնիրը բարեկամ՝ ձեռացոց Խոսարովու , և մէկ օր որսի ելած ժամանակը սպաննեց զինքը : Այս պատճառաւ հայ զինուորները Անակն ու նորա ընտանիքը բռնելով կոտորեցին արևն զիրենք , բայց ի մէկ տղայէն , որ իւր Սոփիա ծծմօր Աեսարիա փախցընելովն ազատեցաւ , և յետոյ մեր ազգի Լուսաւորին եղաւ :

Խոսարովու մահուանէն վերջը Արտաշէր ինչ արաւ .

— Արտաշէր իսկոյն եկաւ Հայաստանի տիրեց ու Խոսարովու որդեցոց կոտորեց , բայց ի Տրդատէն ու նորա Խոսարովիդուխտ քոյրէն , որ փախելով ազատեցան : Տրդատը Հռոմ գնաց ու 27 տարիէն վերջը Հռոմմայեցի զօրաց հետ Հայաստան գարձաւ և վերստին ձեռք բերաւ իւր հայրենի ժառանգութիւնը :

Տրդատոյ թագաւորութեան վերայ ինչ կատարուի .

— Տրդատ զՀայաստանը այլազգի թշնամիներէն ազատելէն յետոյ՝ իւր տերութեան ներքին բարեկարգութեանցը պարտապէցաւ , Քրիստոնէից գէմ , որ Թադէոս և Բարթողոմէոս առաքելոց քարոզութեամբը (39-48) շատցած էին Հայաստանի մեջ , — մեծամեծ հալածանք հանեց , մինչև որ նոյն կրօնից մեծ քարոզիչ ու արժանապէս Հայաստանեայց Լուսաւորիչ կոչուած անձին երկնային զօրութեանէն յաջութեցաւ , և իւր բոլոր ժողովրդոցը հետ մկրտուելով՝ քրիստոնէայ եղաւ : Յետոյ Աստանդիանոս թագաւորին Քրիստոսի հաւատալը լսելով՝ Լուսաւորին հետ մեկտեղ ուրախակցութեան գնաց Հռոմ , ուսկից դառնալէն յետոյ Պարսից և Հիւսիսային ազգաց զօրքը հալածեց Հայաստանէն , և սպա ինքզինքն ազօթիքի տալով՝ Լուսաւորչայ ճղնարանը քաշուեցաւ , ուր քիչ ժամանակէն մեռաւ :

Տրդատէն մինչև Առամշապուհ որո՞նք թագաւորեցին .

— Խոսարով երկրորդ , Տիրան երկրորդ , Արշակ երկրորդ , Պապ , Վաւրազդաս , Արշակ երրորդ , Վաղարշակ երկրորդ և Խոսարով երրորդ , որք ընդհանրապէս իւրեանց թուրքութեամբը , փառասիրութեամբն ու կարճատեւութեամբը Արշակունեաց թագաւորութեան անունն արատաւորեցին : Խոսարովու անգն անցաւ իւր Առամշապուհ եղբայրը , որ իւր ազգասիրութեամբն Արշակունի թագաւորաց մեջ գոգիւլիներէն մեկն եղաւ . վասն զի սուրբ Սահակն ու սուրբ Մեսրոպը Առամշապուհէն ձեռնուրութիւն դրաւ :

նելով՝ Հայերէն տառերը հնարելու աշխատեցան, ու դպրոցներ ընձառնելով՝ ազգին ուսումնական կենդանութիւն տուին. բայց մե՛զք որ Վաստիպահայ մեծնէլէն՝ վերջը Հայաստանը՝ դարձեալ անկարգութեաց ենթարկուելով՝ քիչ ժամանակէն Արշակունեաց թագաւորութիւնը վերջացաւ:

Արշակունեաց թագաւորութենէն վերջը որո՞ք իշխեցին Հայաստանի.

— Նախ Պարսից թագաւորներէն յուղարկուած մարգարաններ (428—632), յետոյ Յունաց կայսրներէն նշանակուած Հայ կիւրապաղապաններ (632—693) և ապա Հագարացոց ամիրսպիաններէն կորդուած ոստիկաններ (693—859):

Պարսիկ մարգարանաց ժամանակ ի՞նչ նշանաւոր դործ եղաւ Հայաստանի մէջ.

— Վարդանանց պատերազմն, եղաւ՝ Պարսից Յազկերտ թագաւորի անիրաւ հրամանին դէմ, որ բռնութեամբ կուզէր զՀայերն արեւապաշտ անել. ուստի և Մեծն Վարդան 60 հազար հայ ժողովելով՝ պատերազմի ելաց, յորում Հաւատոյ և Հայրենեաց համար 1036 հոգի նահատակուեցան Աւարայր դաշտին մէջ:

Կիւրապաղապաններու և ոստիկաններու ժամանակ Հայաստան ի՞նչ գրութեան մէջ էր.

— Շատ խեղճ գրութեան մէջ. վասն զի Յունաց իշխանութեան տակ եղած ժամանակ՝ Հագարացիք կջնային մեր երկիրը յախշտակել, իսկ Հագարացոց ժամանակ — Յոյնք. և եթէ պատահէր այնպիսի մեջոց որ օտար թշնամի չունենար Հայաստանը, ընտանի թշնամութիւններն ու խռովութիւնները միշտ անպակաս կլինէին, ինչպէս որ Դաւիթ Սահառունայ կիւրապաղապանութենէն վերջն եղաւ:

Հայոց մեկմէկու հետ ունեցած ատելութեանց պատճառն ի՞նչ էր.

— Գլխաւորապէս տգիտութիւնը, յորմէ յառաջ կուզայ փառամուրութիւնն ու ետակնութիւնը:



ՊԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՔԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ.

Բ Ե Գ Ի Բ Ե Տ Ո Ւ Ն Ե Ե Յ

ԳԱՍ Լ.

Աշոօ Բաֆրայիտնի և Միքայ առաջին.

Աշոտ ո՞վ էր և ի՞նչպէս հասաւ թագաւորական փառքի:

— Միքատ Խոտատլանողի որդին էր, որ իւր բաւեպաշտութեամբը, իմաստութեամբն ու քաջութեամբը Հայաստանի իշխանաց մէջ սակաւագիւտ ծաղկի նման վայելելով՝ բոլոր Հայոց ուշադրութիւնը իւր վերայ դարձուց, այնպէս որ նախարարները Գէորգ կաթողիկոսին հետ խորհուրդ արին և միարանութեամբ ամիրսպետին հաւստարիմ հարկատուութիւն խոտանալով՝ խնդրեցին որ Հայոց թագաւոր դնէ զԱշոտը: Ամիրսպետը նախարարաց խնդիրը կատարելով՝ արքայական թագ և ծիրանի

յուզարկեց Աշոտին, որ Յունաց Վասիլ կայսրը լսելով՝ մէկ թագ ևս ինքը պարգևեց:

Աշոտ ինչպէս արաւ իւր թագաւորութիւնը.

— Նախանձնիկ խոհեմութեամբ. վասն զի թագաւորելուն պէս՝ իսկոյն Հայոց առաջուան զինուորական ու քաղաքական կարգերն ու կանոնները նորոգեց. հիւսիսային ապստամբ ազգերը հետզհետէ նուաճեց, ինչպէս նաև Գուգարացիքն ու Ուտէայիքը: Յետոյ Ղևոն կայսեր հետ սերտ բարեկամութիւն հաստատելու համար Առստանդնուպոլիս գնաց, ուսկից վայելուչ պատուով Հայաստան դառնալու ժամանակ՝ Շիրակ գաւառին մէջ ծանր հիւանդացաւ ու 71 տարեկան հասակին վախճանեցաւ, քսանևեկեց տարի իշխանութիւն անելէն ու հինգ տարի թագաւորելէն վերջը:

Աշոտին ո՞վ յաջորդեց.

— Իւր որդին Սմբատ ասաջին: Սա թագաւորական աթոռը Բաղարանէն Շիրակսեան փոխադրելով՝ քաղաքը պայծառացուց և Ս. Փրկիչ եկեղեցին կանգնեց, յորում և թագաւոր օծուեցաւ Գեորգ կաթողիկոսէն: Սմբատ իւր հօրը պէս քաղցրաբարոյ լինելով՝ Հազարացոց ամիրապետէն ու Յունաց Ղևոն կայսրէն թագ ու ոսկեզարդ հագուստներ ընդունեցաւ:

Սմբատ առաջինը որո՞ց դէմ պատերազմեցաւ.

— Հայաստանի փառացը վերայ նախանձող ու մեր երկրին խաղաղութիւնը վրդովող այլազգիներուն դէմ պատերազմեցաւ Սմբատ ու մեծամեծ քաջութիւններ անելով՝ Աբխազ և Յուսուփ օստիկաններուն, Միջազեոսաց Ահմատ սպարապետին և Ազերացոց (Չերքեզաց) Առստանդին թագաւորին յաղթեց:

Սմբատայ յաղթութիւններէն վերջը ի՞նչ նոր խռովութիւն ընկաւ Հայաստանի մէջ.

— Գաղիկ Արծրունին՝ որ Սմբատայ քեռորդին էր և Վասպուրականի իշխան, թագաւորէն խընդրեց որ Նախիջևան քաղաքն իրեն տայ՝ իբրև հայրենի ժառանգութիւն. բայց որովհետև թագաւորն իւր ձեռագրովը՝ Սմբատ Սխաակեանին ⁽¹⁾ ընծայած էր Նախիջևանը, խոստացաւ մէկ ուրիշ քաղաք տալ իրեն: Գաղիկ այս բանիս վերայ թագաւորին հետ աւրուեցաւ, գնաց Յուսուփին հետ միաբանեցաւ և սկսաւ զանդատել Սմբատայ զրկանաց մասին: Յուսուփ ալ Հայոց մէջը երկպառակութիւն ձգելու մտքով՝ զԳաղիկը թագաւոր դրաւ Վասպուրական աշխարհին, որով Գաղիկ նախարարներէն շատը

(1) Այս Սմբատ Սխաակեանը՝ Գաղիկ Արծրունու քեռայրն էր:

իւր կողմը որսարով՝ Մեքատայ դէմ պատերազմեցաւ և երկու կողմէն մեծամեծ կոտորած եղաւ :

Յուսուփ ի՞նչպէս տիրեց Հայաստանի .

— Գաղիկ Արծրունուն հետ միացած՝ Մեքատայ դէմ ելաւ, որոց կողմն անցան նախարարաց շատը . և Մեքատ անօգնական մնալով՝ Գուգարաց երկիրը փախաւ, ուր բազմութիւն զօրք ժողովելով՝ իւր Աշոտ և Մուշեղ որդւոցը յանձնեց որ Յուսուփի դէմ երթան : Բայց մեղք որ Մեքատայ որդիքը մինչդեռ մեծամեծ քաջութիւններով թշնամեաց յաղթելու վերայ էին, Սևորդիները ⁽¹⁾ տիրանենգութեամբ թշնամեաց կողմն անցան, և Մեքատայ զօրքը հարկադրուեցան փախչելու, որով Յուսուփ առանց դժուարութեան տիրեց Հայաստանի :

Մեքատ ո՞ւր դնաց և ի՞նչպէս անձնատուր եղաւ Յուսուփին .

— Մեքատ տեսնելով որ ամենայն կողմանէ անօգնական մնացած է, իւր սակաւաթիւ մարդիկներովըր Կապոյտ ամրոցը քաշուեցաւ . իսկ Յուսուփ՝ երբ տեսաւ որ իւր զօրքը բերդի մարդիկներէն ջարդուելու

(1) Սևորդիքը՝ Հայոց առանձին տոհմ էին Ուտեաց աշխարհէն մէջ, որ իւրեանց Սև կոչուած պապին անունովը Սևորդի ասուեցան :

վրայ են նոցատ եղը՝ հայ զօրքերը յառաջ քաշեց, որով Մեքատ Հայոց մէկզմէկ չկոտորելուն պատճառաւ՝ անձնատուր եղաւ Յուսուփին, երդմունք առնելով անկիցոր իրեն անձին փասն չանէ :

Մեքատայ վերջն ի՞նչ եղաւ .

— Վիչ ժամանակէն Յուսուփ իւր երդումը սրտելով՝ անտանելի չարչարանք տուաւ Մեքատայ հաւատքէն խախտելու մտքով, բայց նա վեհանձնութեամբ ընդդիմանալով՝ 24 տարի թագաւորելէն վերջը՝ 914 թուականին հաւատոյ և հայրենեաց համար սրբութեամբ նահատակուեցաւ Գողթն դաւառի Երնջակ ամրոցին դիմացը :

Յուսուփին քովի ապստամբ նախարարներուն վերջն ի՞նչ եղաւ, և Հայաստան ի՞նչ վիճակի մէջ մնաց .

— Յուսուփ նոցա բազմութիւնը տեսնելով՝ վախցաւ, ու ոչինչ պատճառներով մէկ մասը յայտնի սպաննել տուաւ, միւս մասը խեղդամահ արաւ, և աւելի նշանաւոր մասը թուհաւորելով մեռուց, զորս Գաղիկ Արծրունին տեսնելով՝ զղջացաւ իւր արածներուն վերայ, և վախնալով որ մէկ օր ինքն ալ այն նախարարաց սոսկալի վախճանին վիճակուի, յարմար միջոց գտաւ և իւր Գուրգէն եղբօրը հետ

Վասպուրական աշխարհը փախաւ (1) : Չինի որոց
Յուսուփ ամենայն կողմանէ միամտելով՝ Պարսիկ
պահագասները թողուց շայաստանի մէջ, և ինքը
բաղմնութիւ գերիներով Պարսկաստան դարձաւ :



ԴԱՍ ԼԱ.

Աշոօ Երկրորդ և Աբաս.

Ո՛վ էր Աշոտ Երկրորդ և ի՞նչ կպատմուի
վերան .

— Աշոտը Աբաս առաջնոց որդին էր, որ իւր
հօր ստակալի մահը լսելով՝ իսկոյն վեց հարիւր մար-
դով Յուսուփի թողուցած պահագասն զօրաց դէմ
ելաւ, ու սաստիկ կատրած անելով՝ շայաստանէն
հալածեց . այլ և զանազան տեղեր մեծ ջարդ տա-
լով՝ թշնամեաց սիրտը փախ ձգեց, և այս քաջու-
թիւններուն համար Աշոօ Արշալի ասուեցաւ :

(1) Գաղիկէն յետոյ Վասպուրականի մէջ թագաւորեցին հետոցհե-
տէ իւր որդին Աշոտ Գերենիկ՝ 16 տարի, յետոյ սորա փոքր եղբայրը
Համազասպ Ապուսահ 19 տարի, Համազասպին յաջորդեցին իւր երեք
աղայքը՝ Աշոտ, Գուրգէն և Սենեքերիմ : Վերջինս սիլութացոց բռնու-
թիւններէն ազատուելու համար՝ 1021-ին Վասպուրականը Յունաց տուաւ
և տեղը Սերաստիոյ դաւառն առաւ Յոյներէն : Սերաստիոյ մէջ Սենեքերի-
մին յաջորդեցին Առովմ և Աբուսահ 19, որոց մահուանէն յետոյ 1080-ին
բուլբոլովին վերջացաւ Արծրունեաց թագաւորութիւնը :

Շայք Աշոտոյ քաջութիւնները տեսնելով՝ ի՞նչ
արին .

— Այլևայլ կողմերէ եկին քովը ժողովեցան, և
915-ին իւր հօր տեղը թագաւորեցուցին . բայց մեղք
որ քիչ ժամանակէն շայաստանի խաղաղութիւնը
վերտոլելով՝ նախարարներէն ոմանք դարձեալ սկսան
մէկմէկու հեռ կռուիլ, ու մինչև թագաւորին դէմ
եղներով պատերազմիլ, որով Յուսուփ զօրացաւ և
շայաստանի վերայ վաղելով՝ մեծ արիւնհեղու-
թիւններ արաւ :

Շայաստանի այն թշուառութեանց ժամանակ
ն՛վ ուզեց շայոց օգնել .

— Յունաց Առստանդին Պերսիսուսէն կայսրը,
որ շայոց խղճալի դրութեանը վերայ ցաւելով՝ իւր
կամքը թողթով խմացուց Յովհաննէս կաթողիկոսին,
յորմէ պատասխան առնելով՝ կայսրը գթացաւ շայ-
ոց վերայ, և իսկոյն թէոզորոս անունով իշխանը
յուզարիկեց ի շայաստան, որ եկաւ թագաւորն ու
կաթողիկոսը Առստանդինուպոլիս հրաւիրեց : Պնաց
Աշոտ քանի մի նախորարաց հեռ և մեծ սիրով
ընդունուեցաւ կայսրէն, ու քիչ ժամանակէն մեծա-
մեծ պարգևներով ու շատ զօրքով շայաստան
դարձաւ :

Աշոտ այնպիսի փառքով Հայաստանի դառնալէն վերջը կարողացան խողաղութեամբ թագաւորել .

— Այ՛ . վասն զի իւր Սոսանդնուստրոլիս գնացած ժամանակը՝ Յուսուփ ոստիկանը վախնալով որ Աշոտ Յունաց օգնութեամբը իրեն ֆլաստէ, սուտ բարեկամութիւն ձեւացուց, և Հայոց մէջ երկպառակութիւն ձգելու համար Աշոտ երկաթի հօրեղբոր որդին թագաւորեցուց՝ որ Աշոտ Բռնաւոր ասուեցաւ . այս պատճառաւ դարձեալ խռովութիւն ընկնելով Հայոց մէջ, երկու հօրեղբոր որդիք՝ իբրև երկու օտարածին թշնամիք սկսան մէկմէկու դէմ կռուիլ : Պատերազմը սաստկացաւ և երկու կողմէն սաստիկ կոտորած եղաւ, մինչև վերջապէս Յովհաննէս կաթողիկոսը մեծ դժուարութեամբ հաշտեցուց զիրենք :

Այս հաշտութենէն յետոյ Աշոտ երկրորդ որոնց դէմ պատերազմեցաւ .

— Նախ՝ Պուգարացւոց դէմ պատերազմեցաւ, — զորս Վասակ և Աշոտ Պնթունի վերակացուներն իւրեանց հետ միացընելով՝ ապստամբել էին թագաւորէն, — և կրկին նուաճեց զիրենք :

Երկրորդ, Աշոտ Բռնաւորին դէմ, — որ Աշոտ երկրորդի Պուգարաց երկիրն եղած ժամանակը հաշտութեան պայմանին դէմ՝ գնացել էր Վաղարշա-

պատի շրջակայքն եղած թագաւորական զիւղերն ու աղաթակները իւրեան զբաւել էր, — և քաջութեամբ յետ առաւ անկից :

Երրորդ, Աւսէացւոց Մովսէս վերակացուն դէմ, — որ նոյնպէս ապստամբել էր Աշոտէն, — և զոր բռնեց Աշոտ, կուրացընելէն վերջը իշխանութենէն զրկեց, և նորա տեղը Վախագ իշխանը նշանակեց, որ ուժեղութեամբ համար Յլիկ կը կոչուէր :

Չորրորդ, իւր եղբայր Արատին դէմ, — որ Աշոտ երկրորդի փառացը նախանձելով՝ գնաց իւր աներոջ հետ (Վփխաղաց Պուրգէն իշխանին հետ) միացաւ և կուզէր զԱշոտը սպաննել որ տեղը թագաւորէ : Աշոտ իմացաւ իւր եղբոր դաւաճանութիւնը, շատ զօրքով Վփխաղաց երկիրը մտաւ և մեծ աւերմունք արաւ, մինչև որ Վասակ Մանի (Աշոտի հօր քրոջ որդին) իշխանին միջնորդութեամբը պատերազմը դադարեցաւ :

Հինգերորդ, Յուսուփի Բըշր իշխանին դէմ, — որ իմանալով թէ Աշոտ Նար ոստիկանի յարձակմունքէն Վեանայ կղզին վախել է, զօրք ժողովեց ու Աշոտի վերայ գնաց, բայց արխաւիրա Աշոտը՝ բանի տեղ չընելով թշնամեաց բաղմութիւնը, 10 նա-

ւով ու 70 սպառազէն մարդով այնպիսի կոտորած արաւ որ Բըշը իշխանը ամօթով յետ դարձաւ :

Աշոտ կ'ըբ ելաւ Աւան կղզիէն .

— Բըշըին յաղթելէն վերջը՝ երբ տեսաւ որ հեազհետէ խաղաղացաւ Հայաստան, դարձաւ իւր թագաւորութիւնը ձեռք առաւ ու հաշտութիւն արաւ իւր Արաս եղբորը հետ . բայց մեղք որ այն խաղաղութիւնը չկարողացաւ վայելել, այլ իւր անդադար պատերազմներուն պատճառաւ հիւանդացաւ ու 14 տարի թագաւորելէն վերջը ցաւալի կենօք մեռաւ : Աշոտ իւր քաջութեանցը համար Շահնշահ⁽¹⁾ կոչուեցաւ այլազգիներէն :

Ա՛յլ անցաւ Աշոտ առաջնոյ տեղը .

— Իւր եղբայրը Աբաս առաջին, որ թագաւորելուն պէս աթոռը Աարս փոխադրեց և պրտերազմները դադրեցընելով Հայաստանը խաղաղացոյց : Պորա ժամանակ շատ տեղեր երևելի շինութիւններ եղան, եկեղեցիներ ու վանքեր աւելցան, որոց մէջ ծաղկեցան Յովհաննէս Այնական, Անանիա փիլի-

(1) Շահնշահ կամ արտայն արտայ կոչուելուն պատճառն ոյն էր որ Աշոտ քաջ ու անուանի էր քան թէ Հայոց միւս թագաւորները, այսինքն քան զԲաբէկ Աբծրուհէ որ (վասպուրականի մէջ կ'ըսուէր) և Աշոտ Բաւաւոր (գուրն քաղաքի մէջ) . այլ և քան զԱրաց, Ափխաղաց, Աշուանից և Եգերացոց թագաւորները :

սովայ, Գրիգոր նարեկացի ու Բարսեղ Ղոն ա- նուաններով գիտնական վարդապետները :

Հայաստանի այն խաղաղութիւնը ո՛վ վրդովեց .

— Ափխաղաց Բեք անուանով թագաւորը, որ առանց պատճառի Արասոյ դէմ պատերազմի ելաւ : Արաս զարմանալով մէկէն ղեսպան յուղարկեց որ իմանայ պատերազմին պատճառը . իսկ Բեք ծաղրելով պատասխանեց թէ « Աարսի նորաշէն եկեղեցիդ կուզեմ Արաց ծխով օրհնել աալ . վասն զի չեմ ուզեր որ Հայոց արարողութեամբն օրհնուի » : Արաս տեսնելով իւր հակառակորդին մեղի եռանդը, պատշաճ համարեց դարձեալ մարդ զրկել որ թագաւորն իւր երկիրը վերագոռնայ և ի զուր տեղը երկու կողմանէ արիւն չթափուի . բայց երբ Արասոյ առաջարկութիւնը արհամարհելով՝ չյօժարացաւ Բեք, Արաս զինացն ելաւ, սաստիկ ջարդ տուաւ նորա զօրքին, և զԲեքը բռնեց Աարս բերաւ ու ծանր շղթայի զարկած մայր եկեղեցոյն գիմնցը հանելով՝ « Ահա այն հոյակապ եկեղեցին որ կուզէիր օրհնել Արաց ծխով . տես այժմ նորա փառաւորութիւնը, վասն զի շուտով աչքիդ բոյսը պիտի պակսեցընեմ » ա- սայ, ու իսկոյն աչքերը հանել հրամայեց, իբրև նորա մեղեանդութեանը, մեծամտութեանն ու պարծենկոտութեանը արժանաւոր պատիժ :

Այս բանին վերայ Ափխաղներն ի՞նչ արին, ու երբ մեռաւ Մրաս առաջինը.

— Ափխաղները՝ իրրև երախտադէտ ժողովուրդք մեծամեծ բնծաներով ու սղաչանքով իւրեանց Բեր թագաւորը զերա թենէ աղատեցին. իսկ Մրաս 24 տարի թագաւորելէն յետոյ խաղաղութեամբ մեռաւ, որոյ արած զեղեցիկ շինութիւններն ու բարեկարգութիւնները երկար ժամանակ յիշատակ մնաց Հայաստանի ամենայն կողմերը:

ԿԱՅ ԼԲ.

Աշոօ էրբորդէն ինչևս պիւ-նացի թագաւորաց արշա-
-անքը.

Ո՛չ էր Աշոտ երբորդ ու ի՞նչպէս թագաւորեց.

— Մրասայ որդին էր, որ բազմաթիւ զօրքով զանազան քաջութիւններ անելով՝ Մաննիա կաթողիկոսին խորհրդով ու նախարարաց հաւանութեամբ բը Անի քաղաքին մէջ թագաւոր օծուեցաւ, և իւր բարեարտութեանն ու բարեպաշտութեանը համար Աշոօ ողորմած ատուեցաւ (951):

Աշոտ ի՞նչպէս արաւ իւր թագաւորութիւնը.
— Խաղաղասիրութեամբ, աշխարհաշինութեամբ և բարեպաշտութեամբ: Իւր Մուշեղ եղբայրը քանի մի նախարարներու հետ միացած՝ Մարտի մէջ թագաւորեց, բայց որովհետև միշտ Աշոտին կհպատակէր, վերջինս չընդդիմացաւ և թողուց որ թագաւորէ: Աշոտ մինչդեռ այսպիսի խաղաղութեամբ ազգը կառավարելու հետ էր, Համուտն ամիրան Հաղարացոց ամիրայտէն աղատամբելով Հայաստանի վերայ վաղեց. բայց Աշոտ բազմաթիւ զօրքով զինացնելով՝ զՀամուտնն սպաննեց ու այնպիսի սարսափելի կոտորած արաւ, որ նորա զօրքէն հազիւ քանի մի հողի վախչելով աղատեցան:

Այս յաղթութենէն յետոյ ի՞նչ բանի ձեռք զարկաւ Աշոտ.

— Առաջ Անի քաղաքին ներքին պարիսպը շինեց, և սոգա եկեղեցիներ ու ամրոցներ հիմնեց: Աշոտոյ բարեպաշտութեանը հետևեցաւ իւր Խորդու-Վանդ կինը, որ համեստ բնաւորութեամբն ու առաքինի վարքովը ամենուն զթառառ մայր կհամարուէր: Սա սղքատաց և հիւանդաց վերայ ունեցած խնամատարութենէն ի զատ՝ Սանահնոյ և Հաղբատոյ հռչակաւոր վանքերը հիմնեց, որ մինչև ցայ-

Ժամ իւրեանց հնութեամբն ու պատուականութեամբը անուանի են :

Ե՞րբ մեռաւ Աշոտ և ի՞նչ կ'պատմուի նորա յաջորդին վերայ .

— Քսանեվեց տարի սքանչելի կերպով թագաւորելէն վերջը մեռաւ : Նորա յաջորդն եղաւ իւր անդրանիկ որդին Մբօս ելիսորդ, որ իւր հօր դուքանի ընթացքին հեռեկրով՝ քաջութեամբք զօրացաւ, անունը մինչև հեռաւոր տեղեր տարածուեցաւ և Շահնշահ-Աբօն ու Տիեղէրախալ կոչուեցաւ :

Աւրիշ ի՞նչ նշանաւոր շինութիւններ արաւ Սմբատ .

— Անոյ արտաքին պարիսպը շինեց, որոյ վերայ ութը տարի հազարաւոր հողի աշխատեցան : Պարսպին երկայնութիւնը Ախուրեան կամ Արիաչայ գետէն սկսեալ մինչև Ծաղկոյցաձորը կ'հասնէր, որոյ վայրը խոր խրամ փորել տուաւ ո՞ւր քարաշէն և աղիւսադործ որմերով պատեց : Հիմնեց նաև Անոյ Աթոռիկէ մայր եկեղեցին՝ Տրբօս անունով Հայ ճարտարապետին ձեռքովը, և 13 տարի ամենայն յաջողութեամբ թագաւորելէն յետոյ 989-ին մեռաւ :

Սմբատայ Ժամանակ ջրուեալ Հայերն ի՞նչ արին .

— Անոյ խաղաղութիւնը լսելով՝ եկան դարձեալ իւրեանց հայրենակցաց հետ միացան, որով քաղաքին բնակչաց թիւը մինչև հարիւր հազարի հասնելով՝ Անին զանազան շինութեամբք ձօնացաւ, որպէս նաև հազար ու մէկ եկեղեցիօք պայծառացաւ, որով սովորութիւն եղաւ ուսման մէջ Անոյ հազար ու մէկ եկեղեցեաց անունովը երդնուլ :

Սմբատայ տեղն ո՞վ անցաւ և ի՞նչ կ'պատմուի նորա վերայ .

— Սմբատայ տեղն անցաւ իւր եղբայրը Վազէն առաջին, որ բարեպաշտութեամբն ու աշխարհաշէնութեամբը Բագրատունեաց երևելի ու զովելի թագաւորներէն մէկն եղաւ : Սորա կինը — Ասորաճիւղէ թագուհին ըննցուց իւր տաղեր՝ Սմբատ երկրորդի հիմնած կաթողիկէ եկեղեցւոյն հոյակապ շէնքը (993). իսկ Վազիկ Անոյ մէջ նորանոր եկեղեցական և աշխարհական բարեկարգութիւններ անելով՝ իւր հարատակաց վիճակը բարւոքեց, և 30 տարի թագաւորելէն վերջը՝ 1020 թուականին խաղաղութեամբ մեռաւ :

Վազիկայ յաջորդին վերայ ի՞նչ զիտելիք կայ .

— Վազիկայ յաջորդն եղաւ իւր անդրանիկ որդին Գովհամնէս առաջին, որ թէև հանդարտ բնակորու-

Թեան տէր ու խելացի մարդ էր, բայց իւր վախիտու-
տութեամբն ու անգործունէութեամբն մեծ խղճու-
թեան մէջ թողուց զՀայաստան՝ ոչ միայն իւր
կենդանութեան ժամանակ, այլ և մեռնելէն վեր-
ջը, ինչպէս որ պիտի տեսնեմք:

Աշտ ինչ՞ու ապստամբեցաւ իւր եղբայր Յով-
հաննէս թագաւորէն.

— Աշտ յաղթանդամ ու զօրաւոր մէկը լինե-
լով և իւր եղբոր թուրաթիւնները տեսնելով՝ ար-
համարհեց զինքը և ուղեց եղբորը տեղ թագաւո-
րել: Այս նպատակաւ՝ իւր համակամները ժողովե-
լով՝ գնաց Ատաղբականի Անեքիբիմ թագաւորէն
օգնական զօրք առաւ ու Մնի քաղաքին վերայ պա-
տերաշմի ելաւ, յորում թէև ի սկզբան յաղթող
զանուեցաւ, բայց դեռ կոխը չվերջացած՝ պետրոս
կաթողիկոսը, Հայոց նախարարներն ու Արաց Գոր-
զի թագաւորը մէջ մտան ու հաշտեցուցին զիրենք,
պայման գնելով որ Յովհաննէսը միայն Շիրակ գա-
ւառին թագաւորէ, իսկ Աշտ՝ իրրեւ թագաւորին
երկրորդը՝ Հայաստանի ուրիշ երկիրներուն իշխէ:

Այս հաշտութիւնը երկար տևեց.

— Այ՛ վասն զի Աշտ տեսնելով որ երկու կող-
մի նախարարները՝ անդադար մէկ թագաւորը միւսին

դէմ զրգռելու հետ են, և որ մեծն է՝ մէկմէկու
հետ ամենեւին չեն միաբանիր, Հայաստանը խաղա-
ղացնելու մտօք՝ որոշեց որ կերպով մի զիւր եղ-
բայրը կորուսանէ. բայց որպէս զի նոր խռովութիւն
չընկնի ազգին մէջ, մէկ օր ծանր հիւանդ ձևանա-
լով՝ անկողնոյն քովը մէկ որոզայթաւոր մեքենայ
գնել տուաւ, և երբ թագաւորը զինքը տեսնելու
եկաւ, որոզայթին մէջ բռնուեցաւ ու սկսաւ աղա-
չել որ կենացը խնայէ:

Այդ ստակալի վտանգէն ռ՛վ աղատեց զթա-
գաւորն.

— Ապերատ իշխանը, որ նոյն միջոցին Աշտի
մօտ էր: Նա Յովհաննէս թշուառութեանը մեղքը
նալով՝ կապեց զինքն ու այնպէս ձևացուց որ իբր
թէ մեռցնելու կտանի, բայց տարաւ նորէն թա-
գաւորեցուց. որով Աշտ ամթէն չկարողանալով՝
Հայաստանի մէջ մնալ, Աստանդունուպոլիս գնաց,
նսկից Ասիլ կայսեր օգնութեամբը վերադարձաւ
և իւր առաջին իշխանութեանը մէջ հաստատուե-
լով՝ ինքզինքը զեղխութեանց տուաւ մինչև իւր
մահը:

ԳՆԱ ԼԳ.

Սկիւթացի Թաթարաց արշաանէն ձեռն Գապէկ
երկրորդի Թաթարեւը.

Սկիւթացիք ինչո՞ւ արշաւեցին Հայաստան և
Ի՞նչ արին.

— Սկիւթացիք Հայաստանի ներքին խռովու-
թիւնները տեսնելով՝ Յովհաննու թագաւորութեան
երկրորդ տարին անթիւ բաղմութեամբ Հայաստան
մտան, որք Վասպուրական աշխարհէն անցած ժա-
մանակը սոսկալի արիւնհեղութիւններ արին այնտեղ,
այնպէս՝ որ Արծրունեաց Սենեքերիմ թագաւորն
այն զօրաւոր թշնամիներէն կրելու չարիքը երևա-
կայելով՝ թուղթ գրեց Վասիլ կայսեր, և Վաս-
պուրական աշխարհը՝ Սերաստիոյ հետ փոխելով՝
իւր բոլոր ժողովրդովը (որ չորս հարիւր հազարի
չափ էին) այնտեղ փոխադրեցաւ:

Սկիւթացիք Վասպուրականէն անցնելով ո՞ւր
գնացին, և ո՞վ ելաւ նոցա դէմ.

— Նոքա իւրեանց Տուղրիլ բէկ զօրավարին ա-
ռաջնորդութեամբը Հայաստանի ներսերը վաղեցին,
և Նասիջեան, Գուին ու Նիզ գաւառներուն վե-

րայ յարձակեցան, որոց մէջ շատեկեղեցիք այրեցին և
զբնակիչները յուրացութիւն ստիպեցին: Աս որով-
հետև Վասակ Պալհաւունի սպարապետը (Գրիգոր
մագիստրոսի հայրը) նոյն միջոցները Նիզ գաւառի
մէջ էր, Տուղրիլի բռնութիւնները տեսնելով՝ 500
մարդով այն ահագին բաղմութեան դէմն ելաւ ու
մեծ կոտորած անելով ջրուեց զիւրեք: Սակայն մե-
ղք որ մինչդէռ Վասակ այն յաղթութեանը վերայ ու-
րախացած՝ մէկ անանձին տեղ աղօթք կանէր Աս-
տուծոյ, այն տեղի պահուրած սկիւթացիներէն
զարնուելով մեռաւ:

Ի՞նչպէս եղաւ որ Յովհաննէս թագաւորը Ա-
նին Յունաց տալ խոստացաւ.

— Արք Յունաց տէրութենէն Վրաց Գորգի
թագաւորն ազատամբեցաւ (որուն ձեռնառու և խոր-
հրդակից էր այս գործին մէջ Յովհաննէս թա-
գաւորը) ու Վասիլ կայսրը մեծ զօրքով պատե-
րազմի հընելով յաղթեց նմա, Յովհաննէս թագա-
ւորն իւր բնական երկչոտութեամբը կասկածելով որ
կայսրը իւր վերայ ևս պատերազմի կուգայ, 1022
թուին Պետրոս կաթողիկոսը Տրսպիգոն զրկելով՝
թուղթ գրեց Վասիլ կայսեր և երգմամբ խոստացաւ
Անին բոլոր գաւառներովը կայսեր տալ, միայն թէ

ինքը (Յովհաննէսը) քանի որ կենդանի է՝ թագաւոր լինի, և կայսրը իրեն բարեկամ ու պաշտպան մնայ:

Վասիլ ընդունեցամ Յովհաննու առաջարկութիւնը.

— Մեծաւ ուրախութեամբ, որով պէտք եղած օգնութիւնն արաւ Յովհաննու. այլ և մեծ սէր ու պատիւ ցուցուց կաթողիկոսին: Եւ որովհետեւ նոյն միջոցը հանդիպեցաւ ջրօրհնեաց օրը, կայսրը կաթողիկոսէն խնդրեց որ Հայոց ծիսով կատարէ ջրօրհնեաց փառաւոր հանդէսը. ուստի և Պետրոս հայրապետը երբ կենաց փայտով գետի ջուրը խաշակիքեց, իսկոյն զեան իւր ընթացքէն դադրելով՝ ջուրը անշարժ մնաց և հրաշալի լոյս երևցաւ ջուրի վերայ, որով այն օրէն Պետրոս կաթողիկոսը **Պէտրոսայ** կոչուեցաւ:

Վասիլ կայսեր մահուանէն յետոյ երբ իւր Արտանդին եղբայրը թագաւորեց՝ այն թուղթն ի՞նչ արաւ.

— Արտանդին մեռնելու ժամանակ մեր ազգին մեղքընալով և Մնիին համար եղած անիրաւ և սպօրինի դաշնադրութիւնը տեսնելով՝ մէկ Արքակոս անունով հայ քահանայ կանչել տուաւ ու դաշինքին թուղթը յանձնեց իրեն որ տանի Յովհաննէս

թագաւորին սայ: Իսկ այն անմիտ ու ընչաբաղց քահանայն թուղթը իւր մօտը պահեց, և երբ 1034-ին Միքայել կայսրը թագաւորեց, տարաւ իրեն սուաւ և դրամական փոխարէն առաւ տեղը:

Եյս անարժան քահանային արածը ի՞նչ համարելու է.

— Պատմութեան մէջէն անհետ անելու դէպք և յաւիտենական դատապարտութեան արժանի մատնութիւն. վասն զի նորա այս հայրենալաճառութիւնն եղաւ Բագրատունեաց հզօր և բարեկարգ թագաւորութեան կործանելուն զլիսաւոր պատճառը:

Յովհաննէս երբ մեռաւ և ո՞վ կուգէր տեղն անցնիլ.

— Վասն տարի թագաւորելէն վերջը մեռաւ Յովհաննէս (1039), յետ որոյ Հայաստանն երկու ամբողջ տարի անտէր մնալով՝ Վեստ Սարգիս անունով Միւնեաց փառամու ու սղէտ իշխանը զօրացաւ և կուգէր Հայոց վերայ թագաւորել: Նոյն ժամանակները Յունաց Միքայել կայսրն իմանալով Յովհաննու մահը, իւր գետպանի ձեռքովը պահանջեց Մնին, բայց երբ նախարարները չյօժարացան տալ, մեծ զօրք յուղարկեց Մնուց բնակչաց վերայ: Եւ թէպէտ Հայ զօրաց պատրաստականութեամբն

ու անահնկալ յարձակմունքովը Յոյները յաղթուեցին, սակայն Վեստ Սարգիսը շատ բանի մէջ գաղտնի կերպով ձեռնտու եղաւ նոցա, որպէս զի կայսեր հաճոյանալով թագաւոր դրուի Հայոց վերայ :

Գաղիկ ի՞նչպէս թագաւորեց .

— Պահլաւունեաց Վահրամ անունով խոհեմ ու հայրենասէր սպարապետը՝ Սարգսի արածները տեսնելով՝ Գրիգոր մաղխատրոսին հետ մէկտեղ յորդորեցին զնախարարները, և Սարգսէն ծածուկ Պետրոս կաթողիկոսի մօտ գնացին ու միաբան հաւանութեամբ՝ Յովհաննու առաջնոյ եղբօրորդի Գաղիկը թագաւորեցուցին (1042), որ բազմատեսակ կատարելութիւններով զարդարուած՝ տասնևեօթը տարեկան պատանի էր :

ԳԱՍ ԼԻ.

Գաղիկ երկրորդէն մինչև Բագրատունեանց Ռաֆայելը Ռաֆայէան վերջանալը .

Գաղիկայ թագաւորելը ընելով Սարգիս ի՞նչ արաւ .

— Իւր խարդախութեանցը համար Գաղիկէն վախնալով՝ զնաց Անուոյ միջնաբերդին մէջ պահուրանեցաւ : Գաղիկ առանց երկիւղի մինակ Սարգսի մօտ գնաց ու խեղացի խօսքերով համոզեց զինքը որ ելնէ անկից : Սարգիս երաւ միջնաբերդէն ու Սուրմառի ամրոցը քաշուեցաւ . բայց երբ այնտեղ ևս իւր անհանգարտ բնաւորութեամբն սկսաւ յայտնի չարութիւններ անել, Գաղիկ զինքը բանաւ դրաւ, ուսկից նախարարաց անտեղի միջնորդութիւններէն ստիպուելով՝ շուտով ազատեց և դարձեալ սկսաւ բարեկամութեամբ վարուիլ հետը :

Գաղիկ որո՞ց դէմ պատերազմեցաւ .

— Նախ սկիւթացի Թաթարնոց և ապա Սննամախոս կայսեր զրկած յոյն զօրացը դէմ, և երկու պատերազմին մէջ ալ յաղթող դտնուեցաւ : Յետոյ խմանալով Սարգսի տիրանենդութիւնը, որ Յոյները իրեն դէմ կը զրգուէր, բռնեց զինքը և կուղէր

խեղդամահ անել. բայց նա յանցանքը Պրիգոր մագիստրոսին վերայ ձգելով՝ թագաւորին աչքէն հանեց զինքը, որ այս բաներուս մէջ ամենեւին չէր խառնուած. և ինքը (Սարգիսը) իւր քանի մի կուսակից իշխանաց վկայութիւններովն արդարացաւ:

Մնտմախոս Անին առնելու համար ուրիշ ի՞նչ հարք բանեցուց.

— Տեսնելով որ Անին պատերազմով չկրցաւ առնուլ, խորամանկութեամբ թուղթ դրեց Սարգիս և մեծամեծ պարզէներ տալ խոստացաւ իրեն, թէ որ կարողանայ համոզել զՎազիկ որ Անին Յունաց տայ: Սարգիս այն թուղթն առնելուն պէս՝ մտածեց սչմիայն Անին, այլև նոյն իսկ Վազիկը Յունաց ձեռքը մատնել. ուստի և պատասխան դրեց կայսեր, որ սիրոյ և հաշտութեան թղթով Ա. Պոլիս հրաւիրէ զՎազիկ, որպէս զի ինքը (Սարգիս) նոյն միջոցին Անին Յունաց մատնէ:

Վազիկ յանձն առան կայսեր հրաւերքը.

— Վազիկ վախնալով Մնտմախոսի և իւր թըրշնամեաց չարամտութենէն՝ ի սկզբան յանձն չառաւ երթալ, բայց յետոյ տեսնելով նախարարաց երգումները՝ որով կխոստանային Անին մինչև ի մահ պաշտպանելու, ելաւ գնաց՝ աւելի հարկադրուելով քան թէ համոզուելով:

Մնտմախոս ի՞նչպէս վարուեցաւ Վազիկայ հետ. — Յաճութեամբ ու խարդախութեամբ. վասն զի թէև ի սկզբան մեծ պատուով ընդունեց զՎազիկ, բայց վերջը Անին Յունաց չտարուն համար բանադրաւ զինքը: Այս բանս Ահստ Սարգիսն ու իւր անմիտ կուսակիցները լսելով՝ Անոյ բանալինները կայսեր յուրարկեցին, որ Վազիկ տեսնելով՝ յուսահատեցաւ ու անձարացած Անին Յունաց տուաւ (1046):

Վազիկ Պոլսէն ո՞ւր գնաց ու ի՞նչպէս անցուց իւր կեանքը.

— Վազիկ՝ կայսեր ընծայած Վապարդովիկոյ Պիլու քաղաքը գնաց, յորում սիրտը կմաշէր լսելով իւր ազգի խղճալի վիճակը, որուն պատճառ եղաւ իւր մատնիչներուն աննրելի չարութիւնը, և որով իւրեանց անձնական շահուն ու սնտոսի փառացը համար մարդկութեան օրէնքը ոտքի տակ առնելով՝ ամբողջ ազգ մի դերութեան մէջ ձգեցին:

Յունաց Մարկոս մետրապօլսէն Վազիկ ի՞նչ կերպով առաւ մեր ազգի նախատանաց վրէժը.

— Վազարատունեաց թագաւորութեան վերջանալուն վերայ Յոյները՝ Հայոց դէմ ունեցած ատելութիւնը սաստիկացրելով՝ սկսան ամենայն տեսակ նախատինք անել մեր ազգին, այնպէս՝ որ մինչև

Աեսարիոյ Յոյն մետրապօլիտը իւր շան անուէր Արմէն դրաւ : Գաղիկ այս բանս լսելով՝ յարմար միջոցի կազմակերպութեամբ որ այն նախատանաց վրէժը հանելու աստի մէկ օր իւր ծառաներովը մետրապօլիտին դրնաց, և մինչդեռ սեղանի վերայ էին, Գաղիկ խրնդրեց մետրապօլիտին որ շունը կանչէ : Մետրապօլիտըն ի սկզբան չուզեց կանչել այլևայլ պատճառներով, բայց վերջը հարկադրուելով Արմէն կանչեց և խոսքն շունն եկաւ : Գաղիկ այս անուանադրութեան պատճառը հարցուց, և մետրապօլիտը «Պրզտիկ լինելուն համար Արմէն կասեցք» պատասխանեց : Գաղիկ աւելի համբերել չկարողանալով՝ աչք արաւ իւր ծառաներուն, որք յանկարծ շունն ու Մարկոսը բռնեցին, մէկ պարկի մէջ ձգեցին, և ըսկսան շունը ծեծել, որ կատաղութենէն այնքան խաճխրճեց Մարկոսին՝ մինչև երկուքն ալ մեռան :

Գաղիկայ վերջն ինչպէս եղաւ :

— Յոյները Մարկոս մետրապօլիտի նախատական մահուանը վերայ իրաւամբ կատաղելով՝ աստիկ վրէժխնդրութեամբ հետևեցան Գաղիկն սպաննելու. ուստի և մէկ օր մինչդեռ Աղիտարա բերդի պարտիզին մէջ կը բռնուէր Գաղիկ, դարանակալ յոյները բռնեցին զինքը և սովակի չարչարանքով սպաննեցին (1079) :

ՔԱՂՈՒԱԾՔ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ՔԱԳՐԱՏՈՒՆԵԱՑ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ.

ԳԼԱՍ ԼԵ.

Բազրատունեաց թագաւորութիւնն ինչպէս սկսաւ .

— Սմբատ Խոստովանողի որդի Աւր Բաբարուանի իւր հաւատարիմ ծառայութեամբը եզրկատոսի ամիրապետն սերելի լինելով՝ նախարարները Գեորգ կաթողիկոսի հետ մասին խնդրեցին, և ամիրապետը թագ ու ծիրանի յուղարկեց Աշոտին, որով Բազրատունեաց թագաւորութիւնն սկսաւ : Աշոտ ինչքով ու հեռատեսութեամբ թագաւորեց, Հայ թագաւորաց առաջին կարգերը նորոգեց, Յունաց կայսեր հետ միշտ բարեկամ մնաց և 26 տարի լշխեց և հինգ տարի թագաւորեց յետոյ մեռաւ (890) :

Աշոտ առաջինն յետոյ քանի՞ անձնք թագաւորեցին .

— Աւթ, այսինքն՝ Սմբատ առաջին, Աշոտ երկրորդ, Արա, Աշոտ երրորդ, Սմբատ երկրորդ, Գաղիկ առաջին, Յովհաննէս և Գաղիկ երկրորդ կամ վերջին (885—1046), որոց ժամանակ Հայ ժողովրդոց մէջ ատելութիւնն ու նախանձը մարզպանաց ժամանակէն աւելի ծաղկելով՝ Հայաստանը թէև իւր քանի մի թագաւորաց խոհեմութեամբն ու քաջութեամբը երբեմն երբեմն բարօրութիւն տեսաւ, բայց շատ անգամ արտաքին և մանաւանդ ներքին թշնամեաց խռովութիւններովը սարսափելի թշուառութիւններ կրեց, որոց հետևանքն եղաւ իւր թագաւորութեան քիչ ժամանակէն կործանուիլը :

Արտաքին թշնամիները որո՞նք եղան .

— Պարսիկները, Յոյները, Հաղարացիներն ու Թաթարները, որք ոչ միայն Բազրատունի թագաւորաց ժամանակ, այլ և Արին Յունաց մահուանէն յետոյ ևս վեց անգամ մէկմէկու ձեռքէ յախընակեցին Բազրատունեաց մայրաքաղաքը, մինչև որ 1319-ին սաստիկ երկրաշարժին պատճառաւ բնակիչները զանազան երկիրներ գաղթելով՝ Արին բոլորովն աւերակ դարձաւ :

Կերբին թշնամիները որո՞նք եղան .

— Գլխաւորապէս երկու հոգի . առաջինը Վիրակոս անունով տմարդի քահանայն , որ արծաթ սիրութենէն աչքը մութ կոխած՝ 1034-ին իւր հայրենիքը Յունաց Վերայէլ կայսեր վաճառեց . և Երկրորդը Վեառ Սարգիս կոչուած տղեւս ու փառամոլ իշխանը , որ խարդախութեամբ մասննց Յունաց թէ՛ զԳաղիկ վերջինը և թէ իւր հոյրենիքը :

Բազրատունի թագաւորաց մէջ որո՞նք անուանի եղան .

— Իւրեանց ժամանակին նայելով՝ ամենքն ևս մեկմեկ նշանաւոր զոր-
ծողութիւններով անուանի եղան , որ համեմատելով նոցա ժամանակի տգէտ
իշխանաց արիանենդուցութիւններուն ու փառամոլութիւններուն՝ մեծ քաջու-
թեանց տեղ համարելու է : Մեղազրանաց արժանին է միայն Յովհաննէս
թագաւորը , որ իւր թուրութեամբ ժողովրդոց ներկայ և ազաւայ վիճա-
կին վերայ հոգ չտանելով՝ իւր կեանքը հանդատութեամբ անցնելու համար՝
մեռնելէն վերջը Անին Յունաց տալ խոստացաւ , որով այնքան անմեղ ար-
եանց թափուելուն պատճառ եղաւ :

Բազրատունեաց ժամանակ ուրիշ որո՞նք կ'ընդաւորէին .

— Վասպուրական աշխարհի մէջ Արծրունիք կ'ընդաւորէին , որոց վեր-
ջինը՝ Սենեբերիտ իւր շրջակայ թշնամեաց անոնց հետ յարձակումներէն յու-
սահատելով , 1021-ին Վասպուրականը Յունաց տուաւ . և տեղը Վերաստիա
գաւառն առաւ , յորում իւր երեք (Գաւիթ , Ատովմ և Աբուահէլ) յա-
ջորդքը նստան ընդ իշխանութեամբ Յունաց 59 տարի (1021—1080) , յետ
որոց բոլորովին վերջացաւ նաև Արծրունեաց թագաւորութիւնը :



Գ Լ Ո Ւ Խ Չ Ո Ր Ր Ո Ր Գ

Թ Ա Գ Ա Ւ Ո Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ո Ռ Ի Բ Ի Կ Ե Ն Ե Յ

Գ Ա Ս Լ Զ .

Ուր-բէն առաջինէն Ռնէ Լէան երկրորդ .

Ուրբինեանց թագաւորութիւնն ի՞նչպէս ըս-
կաւ .

— Գաղիկ վերջին թագաւորի Ուր-բէն անունով
ազգականը , որ Գաղիայ հետ Վիզու քաղաքը կը-
րնակէր , Գաղիայ բռնուելէն վերջը միտքը զրաւ որ
չայոց նոր թագաւորութիւն մի սկսէ , բայց տես-
նելով որ չայաստանի աւերակաց մէջ անկարելի է
իւր զիտաւորութիւնը յառաջ տաննել , իւր Ասու-
տանդ որդւոյն հետ Վիլիկիոյ կողմերը զնաց , այն-
տեղի չայոց սիրտը հայրենեաց սիրովը վառելով
իւր հետը միացուց ու քանի մի բերդերու և քա-

ղաքներու քաջութեամբ տիրելէն յետոյ սկսաւ անկախութեամբ կառավարել իւր ազգը (1080):

Երբ մեռաւ Ռուբէն և ո՛վ եղաւ նորա յաջորդը:

— Տասնէհինգ տարի իշխելէն վերջը մեռաւ Ռուբէն՝ եօթանասուն տարեկան հասակին (1095): Տեղն անցաւ իւր որդին Ասպանդըին առաջին, որ Ռուբենի բարեմասնութեանցը հետեւելով՝ իւր զոռչաւորութեամբը, պատերազմական յարմարութեամբն ու Բագրևնի և Օշին անունով հայ իշխանաց օգնութեամբը Յունաց ձեռքէն շատ անգեր նուաճեց և տէրութեան սահմանն ընդարձակեց: Սա իւր իշխանութեան ստաջին տարին, երբ Ատտինացիք առաջին խաչակիր զօրքը ժողովելով՝ Արուսագէմը Տաճկաց ձեռքէն ազատելու կերթային, ուտելեաց կողմանէ մեծ օգնութիւն տրաւ նոցա, որով ազնւորնձաներ ու ասպետութիւն ստացաւ: Վաստանդին հինգ տարի ազգը խոհեմութեամբ կառավարելէն յետոյ տէրութեան իշխանութիւնը իւր Թորոս որդւոյն թողլով՝ 1100 թուականին մեռաւ:

Թորոս առաջնոյն վերայ ի՞նչ զխելիք կայ:

— Թորոս անուանի եղաւ իւր զանազան քաջութիւններովն ու յաղթութիւններովր: Պարսիկներն

ու Ալիթացիքը որ շատ զօրքով Արիկիոյ վերայ եկած էին, իւր Վեոն եղբօր հետ միասին դիմացներն ելաւ ու երկու անգամ մեծ կոտորած անելով՝ հալածեց զիրենք: Յետոյ Յունաց հետ պատերազմելով զանազան քաղաքներ առաւ, որոց մէջ նշանաւորն էր Անարգարա քաղաքը, յորում իբրև Աստուծոյ յաջողելուն նշան՝ մէկ փառաւոր եկեղեցի շինեց «որք՝ Օջրավար» անունով:

Թորոս ի՞նչպէս առաւ Յոյներէն Վազիկ երկրորդի սպանման վրէժը:

— Որովհետև Վազիկ երկրորդը՝ Մանտիլեան յոյն իշխաններն սպաննել էին, Թորոս բաւական զօրքով պատերազմի ելաւ, բայց անանելով որ անառիկ է նոցա կեցած Արդիստրա բերդը զիշերուան ժամանակ դարանի դրաւ շատ մի քաջ երիտասարդներ ու ինքը բերդին քովէն հեռացաւ: Առաւօտը երբ Մանտիլեանք տեսան որ Թորոսն այնտեղ չէ, կարծեցին թէ յուսահատելով յետ դարձած է. ուստի բերդին դռները բանալով՝ սկսան համարձակ դուրս ու ներս անել, որով յանկարծ Թորոսի թողած դարանակալ Հայերը նոցա վերայ վազեցին ու ձեռքերնին ընկածը կոտորեցին: Այն միջոցին Թորոսն ալ հասնելով՝ բերդին օրեց, Մանտիլեան երեք

եղբարքը բռնեց ու հետզհետէ կտորեց, և այնպէս
սով մեր ազգին վրէժը հանեց Յոյներէն:

Թորոսի տեղն ո՞վ անցաւ.

— Թորոս որդի չունենալով՝ տեղն անցաւ իւր
եղբայրը Վէնն առաջին (1123), որ Մամեասիա և
ուրիշ քաղաքներ առնելով մինչև Տարսոն հասաւ:
Ընտիրքայ Պետեւին կամըր Վէննի քաջութեանցն ու
փառացը նախանձելով՝ խարէութեամբ կերակուրի
հրաւիրեց և զինքը բռնելով բանա դնել տուաւ:
Վէնն նորա խարդախութեանը դէմ՝ խորամանկու-
թիւն գործադրելով՝ քանի մի քաղաքաց հեռ իւր
որդին պատանդ տալով ազատեցաւ. յետ որոյ գնաց
զօրք ժողովեց ու այնպիսի քաջութեամբ պատերազ-
մեցաւ, որ Պետեւինը իւր խարէութեամբ առած
քաղաքներն ու պատանդը դարձրնելէն վերջը՝ ինքը
պատանդ տալով Վէննին՝ հազիւ կարողացաւ ապա-
տիւ նորա ձեռքէն:

Ուրիշ ո՞վ նախանձեցաւ Վէննի փառացը.

— Յովհաննէս Արմեննոս կայսրը, որ անհամար
զօրքով պատերազմի ելաւ, բոլոր Արիւիկոյ տիրեց և
Վէննը բռնելով Պոլսոյ մէջ բանա դնել տուաւ.
Երբ մ' քիչ ժամանակէն մեռաւ (1141):

Թորոս երկրորդ ի՞նչ կերպով իշխեց և ի՞նչ
կպատմուի վերան.

— Յունաց Արա Մանուէլ կայսեր ժամանակը
(1144), մինչդեռ Տորոս լերանց մէջ բնակող Հայ-
երը մեծ նեղութիւն կրելով Յոյներէն՝ իւրեանց
առաջին ազատութիւնը ձեռք ձգել կհնաճէին,
Վէննի որդի Թորոսը, որ հօրը մահէն յետոյ բան-
տէն ազատելով՝ Պոլիս կկենար, միտքը դրաւ որ կեր-
պով մի Արիւիկա անցնի ու ազգը գերութենէ ա-
զատի. ուստի և մէկ օր վաճառականի պէս Պոլսէն
ելաւ Ընտիրք երթալու, ուսկից Արիւիկա գնաց, ուր
իւր ազգայնոց միութեամբը զօրանալով՝ նորէն յետ
առաւ Արիւիկան: Արա Մանուէլ լսելուն պէս Ըն-
դրոնիկոս զօրավարը յուղարկեց, որուն յաղթեց Թորո-
ս և Յոյն իշխանաց շատերը գերի բռնելով՝ հաշ-
տութենէն վերջը ծանր գնով Յունաց վաճառեց:

Եյս հաշտութիւնը երկամբ ժամանակ տեւեց:

— Ոչ. վասն զի Թորոս երկրորդի Ատեփանէ եղ-
բայրը երբ ապստամբելով իրմէն ու շատ չարիք հա-
տուցանելով Յունաց՝ բռնուեցաւ ու եռացեալ ջրի
մէջ սարնուեցաւ ի Յունաց, Թորոս շատ տրամեցաւ.
և եղբօր վրէժն առնելու համար Յոյները նեղելով՝
և նոցա շատերուն քիթն ու ականջները կտրեց ու Ա.
Պոլիս յուղարկեց, որ Արա Մանուէլ կայսրը տես-

ներով՝ անձամբ՝ ելաւ պատերազմի. բայց Թորոս
Հաշտութիւն խօսելով՝ կայսեր հետ նորէն բարե-
կամեցաւ, և այնպէս 24 տարի ազգը քաջութեամբ
կառավարելէն յետոյ 1168 թուականին մեռաւ:

Թորոս երկրորդէն յետոյ որո՞նք իշխեցին.

— Նախ Թովմաս պայլ (1168—1169) որ Թորոսի
աներն էր և ազգաւ լատին, և ապա Թորոսին
եղբայրը Մլէհ (1169—1174), որ Հալէպի ամիրային
օգնութեամբը եկաւ Թովմաս պայլին ձեռքէն
Հայոց իշխանութիւնը յափշտակեց և 5 տարի իշ-
խելէն վերջը՝ իւր անկարգութեանցը համար սպան-
ուեցաւ:

Ռուբէն երկրորդն ո՞վ էր և ի՞նչ կպատմուի
վերան.

— Թորոս երկրորդի եղբոր Ատեփանէի որդին, որ
Մլէհէն յետոյ իշխելով՝ մեծ խնամք ունեցաւ իւր
երկրին բարեխառութեան վերայ: Սա Տարսնը երբ
Յունաց ձեռքէն առաւ, Լամբրոնի Հեթում իշխա-
նի (որ Յունաց կայսեր կողմանէ կառավարիչ և պա-
հասպան կարգուած էր քաղաքին) հետը թշնամու-
ցաւ, և երկու կողմէն պատերազմ բացուելով՝ Հե-
թում նեղուեցաւ ու Անտիոքայ կոմսին օգնութիւ-
նը խնդրեց. կոմսը խարդախութեամբ բարեկամու-

թիւն ցուցնելով՝ կոչուեցի հրաւիրեց Պուբէնը
և բռնեց բանա զրաւ:

Ռուբէն ի՞նչպէս ազատեցաւ բանտէն և ի՞նչ
արաւ.

— Իւր Ղևոն եղբայրը կոմսին արածը լսելով՝ մե-
կէն զօրք ժողովեց ու պատերազմի ելաւ. Հեթում
ձարահաստեալ Հաշտութիւն խօսեցաւ, որով Ռու-
բէնն ևս ազատեց ու բերաւ նորէն իւր աթոռը նըս-
տեցուց: Իսկ Ռուբէն 11 տարի իշխելէն յետոյ, ազ-
գին կառավարութիւնը իւր Ղևոն եղբորը յանձնեց
և ինքը Վարազդակ վանքը քաշուելով՝ քիչ ժամա-
նակէն սրբութեամբ մեռաւ:

ԴԱՍ ԼԷ.

Ղևոն երկրորդէն մեծ Հեթում երկրորդ.

Ղևոն երկրորդի վերայ ի՞նչ կպատմուի.

— Ղևոն իւր այլևայլ կատարելութիւններովն ու
Իկոնիոյ Ռոստոմ ամիրային յաղթելովը անուանի
լինելով՝ սկսաւ հետզհետէ իւր տէրութիւնը ծաղ-

կեցրնել և ընդարձակել: Աս աթոռը Տարսնէն Աիս փոխադրեց, և քաղաքին մէջ հիւանդանոց և ուրիշ բարեպաշտական շինութիւններ անելով՝ գրեթէ բոլորովին նորոգեց:

Վեոն ի՞նչպէս թագաւոր օծեցաւ.

— Իւր իշխանութեան երկրորդ տարին՝ երբ խաչակիր զօրքը երկրորդ անգամ գումարուելով Ալուսաղէմն ազատելու կերթար, Վեոն՝ խաչակրաց սոյի ժամանակ ոչ միայն առատ սրաշար յուղարկեց նուցա, այլ և առանձին թղթով իմացուց իւր սրատրաստականութիւնը ձեռքէն եկած օգնութիւնը չբխնայելու, ուստի Ղերմանացոց Փրեղերիկոս կայսրը թագ խոտացաւ Վեոնին. բայց որովհետև կայսրը քիչ ժամանակէն մեռաւ, նորա Հենրիկոս յաջորդն ու Աղեւտոխանոս սրայրը կատարեցին Փրեղերիկոսի խոտամունքը՝ թագ և գրօշ յուղարկելով, որով Վեոն Աիս մայրաքաղաքի Ատիա եկեղեցւոյն մէջ 1198 թուականին թագաւոր օծուեցաւ՝ Պրիզոր ապիրատ կաթողիկոսին ձեռքովը:

Վեոնի թագաւորութեան ժամանակ ի՞նչ պատահեցաւ ու երբ մեռաւ.

— Վատինացոց հետ բարեկամութիւն անելուն համար երկու թշնամիք յարձակեցան վերան, այս-

ինքն Ռոմիոյ և Բերիոյ ⁽¹⁾ ամիրաները, որոց Վեոն քաջութեամբ յաղթելով՝ մեծ աւարով Աիլիկիա դարձաւ. և ՅԷ տարի բարի անուամբ թագաւորելէն վերջը մեռաւ:

Ո՞վ յաջորդեց Վեոն երկրորդին.

— Իւր Օզպէլ (Իլպէէլ) աղջիկը, որ Անտիօքայ լատին կոնսի Փելլագոս որդւոյն հետ կարգուեցաւ, որ մօրը կողմանէ հայ էր. բայց երբ Փիլիպպոս երկու տարի թագաւորելէն յետոյ Սոյ հարստութիւններն Անտիօք կրել սկսաւ, Հայ իշխանները բարկացան, և մէկ օր Փիլիպպոսի Անտիօք գընալու ժամանակը ձանապարհին բռնեցին զինքն ու Բարձրբերդի զղեակին մէջ փակեցին, ուր քիչ ժամանակէն մեռաւ (1222): Արիւս տարիէն յետոյ Օզպէլ Արստանդին իշխանի Հելուս որդւոյն հետ կարգուեցաւ, որ Արշակունեաց ցեղէն էր և Ռուբինեանց հետ աղբակցութիւն ունէր. ուստի և 1224 թուականին մեծ հանդիսով թագաւոր օծեցին:

Հեթում առաջնոյ վերայ ի՞նչ դիտելիք կայ.

— Աս իւր Արստանդին հօրը խելացի խորհուրդներովն ու օգնութեամբը նորանոր բարեկարգու-

(1) Իկոնիա կամ Իկոնինը՝ Լիկայնիայի մայրաքաղաքն էր, այժմ Փոքր Ասիոյ գաւառներէն մէկը. իսկ Բերիան՝ Ասորոց մայրաքաղաքը, որ այժմ Հուլիո կասուի:

Թեամբք Արիկիկան զարդարելով՝ խաղաղութեամբ
կառավարեց տէրութիւնը, բայց Կիոնիոյ ամիրան,
որպէս նաև Լամբրոնի Աստանդին իշխանը ապստամբ
բերով՝ պատերազմի ելան, ու յաղթուեցան Հե-
թումէն: Նոյն միջոցները Ազիպոտոսի Փնտուխտար
ամիրան դեսպան յուղարկեց որ Ազիպոտոսը մէ
ուսած քանի մի քաղաքները յետ տայ. Հեթում
յանձն շահնելով՝ զօրքը իւր Աւոն և Թորոս որդ-
ւոցը յանձնեց և ինքը Թաթարներէն օգնութիւն
ստանելու գնաց, բայց մինչև իւր վերադառնալը Փրն-
տուխտար շատ զօրքով հասաւ Թորոսն ապաննեց,
Աւոնը գերի բռնեց և Սոյ հարստութիւնները կո-
ղտուեցով՝ Ազիպոտոս դարձաւ:

Հեթում երրոր Թաթարստանէն դարձաւ Խնչ
արաւ.

— Ամենայն բան տակնուվրայ եղած տեսնելով,
վարձած զօրքը յետ յուղարկեց և իւր որդւոց կո-
րրատեանն ու բազմութիւ գերիներուն համար մեծ
սուղի մէջ ընկղմեցաւ: Յետոյ իւր Աւոն որդին
գերութենէն ազատելու համար մեծազին ընծաներ
յուղարկեց ամիրային. բայց ամիրան՝ Հեթում Թա-
գաւորի՝ Թաթարաց խանի հետ ունեցած նիզակա-
կցութիւնը գիտնալով, Հեթմոյ միջնորդութեամբ
փոխարէն ուղեց իւր Աղուր որդին՝ որ գերի էր Թա-

թարստան: Հեթում ամենայն ջանք ի գործ դնե-
լով՝ Աղուրը Թաթարաց խանէն առաւ Ազիպոտո
հասուց, և նորա փոխարէն իւր Աւոն որդին գերու-
թենէն ազատեց, որուն և նոյն տարին իւր տեղը
Թագաւոր դնելով՝ ինքը Արազարկ վանքը քաշուե-
ցաւ և քանի մի ամէն վերջը մեռաւ (1269):

Աւոն երրորդ Խնչպէս Թագաւորեց և Խնչ
կպատմուի վերան.

— Հեթումի մահը Թէև ի սկզբան մեծ տխրու-
թիւն պատճառեց իրեն, բայց Ազիպոտոսի ամիրայի
և Թաթարաց խանի մտիթարական թղթերէն, որ-
պէս նաև Յակօր կաթողիկոսի հոգեշահ խրատներէն
խրախուսուելով՝ աթոռը Սիս քաղաքէն Տարսն փո-
խադրեց և մեծ հանդիսով Թագաւոր օծուեցաւ:
Յետոյ իւր հեռատեսութեամբը ազգին անցեալ և
ներկայ վիճակին խորերը Թախանցելով՝ ամենահար-
կաւոր տեսաւ ուսումնական դիտութեանց ծաղկեցը-
նելը. ուստի և մէկէն սկսաւ ամենայն տեղ զպրոց-
ներ բանալ, որ տղիտութեան, նախանձու և փա-
ռամնութեան արմատները չորցնելով՝ դիտութիւն,
սէր և միութիւն հաստատէ զԹ իւր ապագայ Ժո-
ղովրդոց մէջ. նոյնպէս հմուտ անձանց ձեռքով նախ-
նեաց շարադրած ու Թարգմանած գրեթէ բոլոր ձե-
ռագրերը օրինակել տալով՝ զանազան վանքեր յու-

զարկեց, և աշխատեցաւ որ պիտանի գրքեր շարաւ դրուին :

Խնչպէս եղաւ որ Ազիպտոսի ամիրան նորէն պատերազմի ելաւ Աւոնի դէմ :

— Աւոն մինչդեռ ամենայն բան հայրենեաց օգտին զոհեցաւ՝ տէրութիւնը բարեկարգելու հետ էր, իւր ազգականներէն ոմանք նախանձելով՝ Ազիպտոսի փնտուխտար ամիրան Աւոնի դէմ զրդուցին : Փրնտուխտար երբ ահազին զօրքով Աիլիկիոյ վերայ վազեց, Աւոն իւր իշխանաց մտտնութենէն ու զօրաց նենդութենէն վախնալով՝ զնոց յուսահատութեամբ մէկ բերդի մէջ ամրացաւ : Բայց աննելով որ թշնամիք առանց դիմադրութեան իւր աշխարհը մաննելով ուրբի տակ առին զժողովուրդը, չդիմացաւ, ելաւ բերդէն ու քիչ մի զօրք ժողովելով՝ իւր եղբոր Մեթատ սպարապետին հետ մէկտեղ թշնամեաց վերայ վազեց, ու սաստիկ պատերազմելով այնպիսի կոտորած արաւ, որ փնտուխտար հարկադրեցաւ հաշտութիւն խօսել :

Աւրիշ ինչ քաջութիւն արաւ Աւոն և երբ մեռաւ :

— Իկոնիոյ ամիրան, որ նոյն տարին երեք անգամ Աիլիկիա վազեց, Աւոն ամենայն անգամ քաջու-

թեամբ ու խոհեմութեամբ պատերազմելով՝ յաղթեց զինքը. և Թաթարաց հետ բարեկամ մնալով՝ քսան տարի թաղաւորելէն վերջը մեռաւ :

ԳԱՍ ԼԸ.

Հեթում երկրորդն յինչև Ռոբինեանց լուսագործութեան վերջանալը :

Հեթում երկրորդն ո՞վ էր և ինչպէս արաւ թաղաւորութիւնը :

— Աւոն երրորդի որդին էր Հեթում, որ սաստիկ կրօնատէր լինելով՝ չուզեց թաղաւոր օծուիլ. ուստի և չորս տարի իշխելէն յետոյ իւր եղբայր Թորոս երկրորդը թաղաւոր օծել տալով՝ ինքը վանք քաշուեցաւ : Բայց Թորոս ևս եղբորը պէս աշխարհիս անցաւ որ փառքը թողլով՝ թաղաւորութիւնը նորէն Հեթումին յանձնեց ու ինքը վանք երթալով՝ կրօնաւոր եղաւ :

Ո՞վ էր Մեթատ և ինչ արաւ :

— Հեթում երրորդի եղբայրը : Հեթումն ու Թորոսը երբ Աւոն երրորդի աջկան կամ իրենց քրոջ Մարիամ թաղուհւոյն խնդիրքը կատարելով

(որ Յունաց Անդրոնիկոս կայսեր Մեքայէլ որդւոյն կինն էր) Կ. Պոլիս գնացին տեսութեան (1296), Մեքատը, — որ տէրութեան ժամանակաւոր կառավարութիւնն իրեն յանձնուած էր, — իշխաններն ու կաթողիկոսը համոզելով՝ նոյն միջոցին թաղաւոր, օծուեցաւ. և երբ իւր եղբարքը տեղերնին կրտսնային, Մեքատ զօրքով զխնոցներն ելաւ բռնեց զիրենք, զԷթումը կուրցուց ու զԹորոսն սպանեց. այս պատճառաւ Վեոն երբորդի չորրորդ որդին — Աստանդինը բարկանալով շատ զօրքով Մեքատայ վերայ ելաւ, զինքը բռնեց բանադրաւ, և տեղը թագաւորեցին յետոյ Էթումը բանաէն հանեց ու նորա աջաց ցաւին դարմանն տանել հրամայեց:

Ի՞նչպէս եղաւ որ Էթումը երբորդ անգամ թագաւորեց.

— Աստանդին երկրորդի թագաւորութեան երկրորդ տարին Էթմոյ աչքերը լաւանալով, ժողովուրդը Էթմոյ կամքին հակառակ՝ երբորդ անգամ թագաւորեցուց զինքը, ընդ որ Աստանդին բարկանալով՝ աշխատեցաւ Մեքատը բանաէն հանելու որ հետը միացած Էթմոյ դէմ պատերազմին. բայց Էթում նոյա միտքը զխանալով՝ նոր խռովութիւն չբարեկու համար երկուքն ևս բռնեց ու Կ. Պոլիս յուղարկեց, ուր մինչև իւրեանց մահը կեցան:

Ուրիշ Խճնչ քաջութիւններ արաւ Էթում ու երբ մեռաւ.

— Էինդ անգամ պատերազմ արաւ Ազիպտացուց և Վիկայոնացուց հետ, որոց մէջ միշտ յաղթող գտնուելով՝ նախ Կամասկոսի Սուսամիշ ամիրան բռնեց ու թաթարաց Վաղան խանին ընծայեց, և սպա Ազիպտոսի Սուլթան Վաչին անուռով ամիրապետը Բաղդատ փախուց, որ վերջը հարկադրեցաւ հաշտութիւն խօսել Էթմոյ հետ: Էթում կուսակրօն լինելով՝ իրեն որդեգիր առաւ իւր եղբորորդի Վեոնը, որ յետոյ թագաւոր օծել տալով (1305) ինքը մէկ վանքի մէջ առանձնացաւ ու Բագարահայր կոչուեցաւ:

Վեոն չորրորդին վերայ Խճնչ զիտելիք կայ.

— Վեոն չորրորդը իւր ընտիր բարբոսն ու խոհեմութեամբը շատ լաւ սկսաւ կառավարել ազգը: Սա Գրիգոր Անաւարդեցի կաթողիկոսին յորդորանօքը մէկ եկեղեցական ժողով անել տուաւ Սոյ մէջ, յորում 41 եպիսկոպոսաց և ուրիշ քահանայից ու իշխանաց հաւանութեամբ շատ բան փոխուեցաւ ծէսերու, այսինքն եկեղեցական արարողութիւններու մէջ: Այս պատճառաւ ժողովրդոց մեծ մասը թաթարաց Պիլարդու իշխանին զխնելով (որ Արիկիոյ պաշտպանութեան համար հազար հողով Անարդարս

կկենար) Հեթմոյ ու Ղևոնի դէմ՝ զանազան ամբաստանութիւններ արին. բայց Պիլարդու տնանելով իւր զօրաց քիչութիւնը՝ անկարելի համարեց սրատերազմի ելնելը. ուստի ղթագաւորահայրն ու թագաւորը Անարզաբա հրաւիրեց խորախուժեամբ, իբր թէ մէկ ամենահարկաւոր խորհուրդ հարցնելու համար, և երբ Ղևոն իւր Հեթում հօրն ու 40 հայ իշխանաց հետ Անարզաբա գնաց, Պիլարդու զիրենք կեղծաւորութեամբ ընդունելէն վերջը՝ մէկ մէկ թրէ անցրնել տուաւ (1308) ու Արլիկիան յափշտակել ջանաց:

Այս կտորածէն յետոյ ո՞վ ելաւ Պիլարդուի դէմ.

— Հեթմոյ եղբայրը Օշն, որ թաթար իշխանին դաւաճանութիւնը լսելով՝ Հայ զօրքին զուտ կեցած Պիլարդուի դէմ ելաւ ու զինքը Արլիկիայէն հարածելէն յետոյ թագաւոր եղաւ: Սոյնպիսի քաջութիւն ևս Նզդիպտոսի Նասր ամիրային դէմ աւրաւ, և 12 տարի յաջողութեամբ թագաւորելէն վերջը մեռաւ:

Օշնի թագաւորութեան ժամանակ ի՞նչ պատահեցաւ Հայաստանի մէջ.

— Սաստիկ երկրաշարժ եղաւ Արարատ գաւառի,

Սիւնեաց աշխարհի և մանաւանդ Անի քաղաքին մէջ (1319), որով Հայաստանի արիւնարբու թրշնամեաց ձեռքէն ազատուած շինուածոց մեծ մասը կործանուելով՝ բնակիչքը բաղմուժեամբ այլևայլ երկիրներ, այսինքն Պարսկաստան, Թաթարստան, Խրիմ, Ինհաստան և ուրիշ տեղեր գաղթեցին:

Ղևոն հինգերորդ հօրը տեղն անցնելով՝ ի՞նչ պէս արաւ իւր թագաւորութիւնը.

— Շատ անգութ ու անկարգ կերպով. վասն զի իւր կինը, եղբայրն ու Օշն պայլ փեսան սպաննել տուաւ անիրաւութեամբ, և Ղաթինացոց հետ ունեցած անօրուտ յարաբերութիւններովը պատճառեղաւ Նզդիպտոսի սուղթանի, Թաթարաց և Թուրքաց խաներու խռովութեանցը, որք մէկմէկու ետեէ Արլիկիա արշաւելով՝ վերջին թշուառութեան հատուցին բնակիչները:

Ո՞վ էր Յովհաննէս պայլ և ի՞նչ կպատմուի վերան.

— Ղևոն երրորդի Ջաբլուն դստեր որդին (հօրը կողմանէ լատին), որ Ղևոն հինգերորդի մահուանէն վերջը հայ թագաւորաց ցեղէն մարդ չմնալով՝ իշխանները զինքը թագաւոր ընտրեցին և Ասպարանդին երրորդ անուանեցին: Սա խռովարար, ազգատեաց ու

ամբարտաւան բնաւորութիւն ունելով՝ հրաման հանեց որ Հայոց եկեղեցեաց մէջ լատինական արարողութիւն մտցուի, որով զօրքը զէմ՝ ելնելով սպաննեց զինքը: Իւր տեղն անցաւ իւր Գաւիթն եղբայրը, որ իւր եղբօր կամքը յառաջ տանել ուզելով՝ նորա վիճակին հանդիպեցաւ և 1345-ին սպաննուեցաւ:

Ո՞վ յաջորդեց Գաւիթնի.

— Լեոն հինգերորդի ազգականը՝ Ասպանդէն շրբարդ, որ թէև հօրը կողմանէ լատին էր, բայց ազգը 18 տարի խոհեմութեամբ կառավարելով՝ հաւածական արաւ Ազգիպտոսի ամիրային զօրքը, որ Հայերու Ատափնացոց հետ բարեկամութիւն անելուն պատճառաւ Վիլիկիոյ վերայ եկած էին:

Լեոն Լեցեբարդն ի՞նչպէս թագաւորեց և երբ վերջացաւ Ռուբինեանց թագաւորութիւնը.

— Առտանդինի մահուանէն վերջը Հայ իշխանները լատին ազգէ թագաւոր ընտրել չուզելով՝ երևք տարի աթոռն առանց թագաւորի մնաց. բայց յետոյ Ռուբանոս հինգերորդ պապի խորհրդովը Լուսինեան Լեոն վեցերորդը թագաւորեցուցին՝ տասնևմէկ տարեկան հասակին, որ միայն մօրը կողմանէ հայ էր: Սա թէև խելացի ու բարեպաշտ էր և Հայոց վի-

ճակը բարւոյեցաւ համար շատ դիտաւորութիւններ ունէր, բայց Ազգիպտոսոց սուլթանի անդադար յարձակմունքէն ժամանակ չունեցաւ զործադրելու. ուստի և նորա անթիւ զօրացը բաւական ժամանակ դիմադրելէն յետոյ սովի պատճառաւ անձնատուր եղաւ և իւր բնասնեօքը գերի տարուեցաւ Ազգիպտոս, որով Հայոց թագաւորութիւնը բոլորովին վերջացաւ (1375):

Լեոնի վերջն ի՞նչ եղաւ.

— Լեոն հաւատար չուրանալու համար եօթը տարի բանալ կենալէն յետոյ՝ Ապանիացոց Յովհաննէս թագաւորին խնդրանօքը գերութենէն ազատեցաւ (1382), և գնաց նախ՝ ընտանեօքն յԱրուսացի մ ի շնորհակալութիւն Աստուծոյ, ուր Մարիամ կինն ու Փիննա աղջիկը թողուց՝ իրենց ուզելովը, և ապա Աւրոպա անցնելով՝ Հռոմ գնաց, ուր մեծապէս պատուեցաւ Ռբբանոս Օ պապէն. անկեց Ապանիա անցաւ ու Ազգիպտոսոց գերութենէն ազատուելուն համար շնորհակալութիւն արաւ թագաւորին, որով թագաւորը Մարիատու մէջ բնակութիւն տուաւ Լեոնի ու 6000 Քրանկ տարեկան սոճիկ նշանակեց նմա: Լեոն քանի մի տարիէն վերջն ալ Գաղղիա ու Անգղիա գնաց, և միշտ

աշխատեցաւ օգնութիւն գտնելու Հայոց Թագաւորութիւնը վերականգնելու համար, բայց Փարիզումէջ հիւանդանարով 1393-ին նոյեմբերի 22-ին վախճանեցաւ ու փառաւոր հանդիսիւ Աղեասինեան վանքին մէջը Թաղուեցաւ :



ՔԱՂՈՒԱԾՔ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ՌՈՒՐԻՆՆԵԱՆՑ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ.

ԴԱՍ ԼԹ.

Ռուբինեաց Թագաւորութիւնն ի՞նչպէս սկսաւ .

— Ռուբէն, որ Գագեկ երկրորդ Թագաւորի ազգականն էր, Գագեկի լոնուելէն վերջը՝ Ալեկիոյ կողմերը գնաց, այնտեղի Հայերը բովը ժողովեց և Յունաց ձեռքէն քանի մի բերդեր առնելով՝ սկսաւ իրենազուտ սիրել բնակիչներուն :

Ռուբէնէն մինչև Լեոն Ի որո՞նք իշխեցին .

— Կնորանքին առաջին, Թորոս առաջին, Լեոն առաջին, որք իւրեանց զանազան քաջութիւններովն անուանի եղան : Ի սոցանէ վերջինը Յունաց Յովհաննէս Կոմնենոս կայսրէն յաղթուելով լանտին մէջ մեռաւ : Լեոնի տեղն անցաւ Թորոս Երկրորդ, որ զարմանալի քաջութեամբ զարձեալ վերականգնեց Ռուբինեանց իշխանութիւնը, և Յունաց կայսր հետ բարեկամութիւն հաստատելով՝ ազգը խաղաղութեամբ կառավարեց : Յետոյ իշխեցին Թովմա Պայլ և Մէհ, որք յիշատակի արժանի պատմութիւն չը թողին : Մէհին յաջորդն եղաւ Ռաբէի Երկրորդ, որ Տարսնը Յունաց ձեռքէն առաւ, Հեթում անունով ապստամբ իշխանը հնազանդեցուց ի ձեռքէն, և տերութեան իշխանութիւնը իւր Լեոն եղբորը յանձնելով՝ վանք քաջուեցաւ ու սրբութեամբ մեռաւ :

Լեոն երկրորդն ի՞նչպէս հասաւ Թագաւորական փառքի .

— Լեոն սովի ժամանակ լատինացւոց խաչակիր զորացն օգնելով՝ Գերմանացւոց Հենրիկոս կայսրէն թագ և զբօշ ընդունեցաւ և 1198-ին թագաւոր օծուեցաւ :

Լեոնէն յետոյ որո՞նք Թագաւորեցին .

— Չաբէլ Խաբուհէն, Փելեպոս և Հիւսամ առաջին, որոց վերայնչա-

նաւոր պատմութիւն չկայ : Հեթումին յաջորդեց իւր որդին Լեւոն երրորդ , որ ազգը ուսումնական դաստիարակութեամբ կրթելու համար մեծ վայժ ունեցաւ , և հին ու աւրուած ձեռագիրներն օրինակել տուաւ :

Լեւոն երրորդին որոնք յաջորդեցին .

Հեթումի երկրորդ , թորոս երրորդ և Սմբատ , որը միմեանց դեմ ստակալի անդթութիւններ արին : Յետոյ թագաւորեց Հեթումի երկրորդի որդին Լեւոն չորրորդը , որոյ ժամանակ եղած եկեղացական քանի մի ծէսերուն փոփոխութիւնը ոչ միայն նորա քաղաքական պարսոյմանցն արգելք եղաւ , այլև իւր և Հեթումի թագաւորահօր կորստեանը պատճառ :

Օշին ի նշուէս թագաւորեց .

— Մնարզարա քաղաքի թաթար իշխանին Լեւոնի և Հեթումոյ դեմ աւրած դաւաճանութիւնը լռելով՝ նորա դէմ չեղաւ , հալածեց և սկսաւ ինքը թագաւորել : Մորա ժամանակը (1319) սաստիկ երկրաշարժութիւն եղաւ . Հայաստանի մէջ , որով բնակիչքն օտար երկիրներ դառնեցին :

Օշինէն յետոյ որոնք թագաւորեցին .

— Լեւոն հինգերորդ , Յովհաննէս Պայլ , Գուրգոն , Կոստանդին չորրորդ և վերջապէս Լեւոն վեցերորդ : Վերջինս խելացի ու բարեպաշտ լինելով՝ շատ լաւ սկսաւ կառավարել ազգը , բայց մեղք որ ժամանակին հանդամները շթողուցին իւր բարի դիտաւորութիւններն յառաջ տանելու :

Լեւոնի վերջն ինչ եղաւ .

— Հազարացոց պատերազմին ժամանակ սովի պատճառաւ անձնատուր լինելով՝ գերի տարուեցաւ յԵգիպտոս , ուսկից եօթը տարիէն յետոյ Սպանիացոց թագաւորին խնդրանքն ազատուելով՝ Եւրոպա դնաց և 1393 թուականին Փարիզու մէջ վախճանեցաւ :

Ռուբինեանց տերութիւնը քանի՞ տարի տևեց , որքան իշխանապետներ ու թագաւորներ ունեցաւ և երբ վերջացաւ .

— Ռուբինեանց տերութիւնը 295 տարի տևեց , 8 ինքնազուլ իշխանապետներ ու 16 թագաւորներ ունեցաւ և 1375 թուականին բոլորովին վերջացաւ :

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՊԱՐՍԻՑ, ՏԱԺԿԱՑ ԵՒ ՌՈՒՍԱՑ

ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ .

ԴԱՍ Խ .

Ռուբինեանց թագաւորութենէն յետոյ Սիւլիկան ու Հայաստանը որոնց ձեռք մնացին .

— Սիւլիկան ի սկզբան Նզդիպասացոց և ապա Մահմէտ սուլթանի ժամանակ՝ Տաճկաց ձեռքը մնաց . իսկ բուն Հայաստանը ժողովց արդէն բաժնուած էր Պարսից և Յունաց մէջ :

1397-ին ո՞ր բռնաւորն եկաւ Հայաստան .

— Եւզբէկ թաթարաց Լանկթամուր բռնաւորն եկաւ Հայաստան , ուր երեք ամիս կենալով՝ բոլորովին քանդեց ու աւերակ դարձուց , և շատ դերիներ ու ձեռագիր մատեններ տարաւ Միջագետք քաղաքը :— Լանկթամուրի բռնութեանց ժամանակ նշանաւոր եղաւ Կարէնէ անունով Մշեցի հայուհին , որ թշնամեաց ձեռքը չընկնելու համար՝ ձեռքը սուր առած մեծ քաջութեամբ պատերազմեցաւ , բայց տեսնելով որ կարելի չէ ազատիլ , նախ իւր

ութ տարեկան որդին սպաննեց և յետոյ ինքզինքը լեռնէն վար ձգելով մեռուց :

Աւրիշ ի՞նչ բռնաւորներ յարձակեցան Հայաստանի վերայ .

— Պարսից Շահթամազ (1551) և Շահարաս (1605) թագաւորները : Աւերջինս Օսմանեաց դէմ պատերազմած ժամանակ, Հայաստանը անմարդաբնակ թողելու մտքով 14 հազար տուն Հայ տաւաւ Պարսկաստան, որք տասը տարիէն յետոյ Նոր Զուղա քաղաքը շինեցին Ասպահանայ մերձակաքը :

Այս սոսկալի խեղճութեանց միջոցին ո՞վ օգնեց Սիւնեաց աշխարհի Հայերուն .

— Վաւիթ անունով քաջ ու խելացի սպարապետը, որ իւր Մխիթար օգնականին աջակցութեամբը շատ քաջութիւններ արաւ, յորոց նշանաւորն այս է . Երբ 1722-ին Տաճիկները 70 հազար հոգւով Սիւնեաց աշխարհին վերայ եկան, Վաւիթ իւր 453 զօրականներովը բերդին մէջ ամրացաւ և վեց օր թշնամեաց դէմ քաջութեամբ ու խորագիտութեամբ պատերազմեցաւ : Իրեն յաղթութեան սպահով միջոցն էր բերդին բարձր ու յարմար դիրքը, ուսկից իրենք դրախ եղածները կտեսնէին, իսկ զբխնները զիրենք չէին տեսներ . ուստի և Տաճիկ-

ները յուսահատելով՝ երբ սկսան բերդին քանի մի տեղերը բարձր գործիքներ դնել որ պարխապնեւուն վերայ ելնեն, Վաւիթ բերդին վերէն պատերազմեցաւ, իսկ իւր Մխիթար օգնականը, Հալի ձորոյ Տէր Աւետիքն ու 200 զօրականը գաղանի ճամբով բերդէն դուրս յուղարկեց, որք թշնամեաց ետէն սկսան պատերազմիլ, և որով մէկ օրուան մէջ 13 հազար մարդ ջարդեցին ու մնացեալները փախցընէլէն յետոյ 48 դրօշ ու շատ աւար առած Վաւիթի մօտ դարձան :

Վաւիթէն յետոյ ո՞վ իշխեց Սիւնեաց Հայերուն .

— Իւր Մխիթար անունով անպարտելի օգնականը . բայց մե՞ղք որ շատի չքշեց . վասն զի վերոյիշեալ տէր Աւետիս քահանայն ևս շատերուն նման տղէտ ու փառասէր լինելով՝ Մխիթարայ հետ խռովեցու և ժողովուրդը երկուսի բաժնեց, որ Տաճիկները լսելով՝ նորէն Սիւնեաց աշխարհին վերայ յարձակեցան, ու բերդը պաշարելով՝ մէջինները նեղեցին : Բայց որովհետև այդ բերդին մէջ ևս եղբայրատեցութեան սոսկալի ախար տեղիք գտած էր, ուստի տէր Աւետիսին կուսակիցները՝ Մխիթարէն ծածուկ անձնատուր լինել մտածեցին, որոյ մասին պատգամաւոր գնաց նոյն տէր Աւետիսը :

Բերդը մանեկէն յետոյ Տաճիկներն ի՞նչ արին.
 — Ի սկզբան երգմամբ յանձն առին վաս չանել
 Հայոց, բայց երբ բերդը մասն՝ ժողովրդոց մեծ մա-
 սը թրէ անցուցին. իսկ Մխիթար՝ աէր Աւետիաին
 միաքը վաղուց իմանալով՝ Տաճիկները չհասած՝ մեծ
 զգուշութեամբ փախաւ բերդէն. բայց և այնպէս օ-
 տար թշնամիներէն ազատուելով, ընտանի գաւա-
 ճաններէն ազատիլ չկարողացաւ. վասն զի Խնձորէս
 կոչուած բերդը պաշարած ժամանակ, մինչդեռ պա-
 տերազմէ յոգնած՝ քիչ մի քնանալու պառկեցաւ,
 քովի մարդիկը Պարսից հաճոյանալու համար գլու-
 խը կտրեցին ու Վապուէժ նստող Պարսիկ բղէշխին
 տարին, յորմէ փոխանակ պարզելի՝ իւրեանց անզգա-
 մութեան արդար հատուցումն առին: Վասն զի
 բղէշխը Մխիթարայ քաջութիւններուն սեղեակ
 լինելով՝ արդարութեամբ դատեց, ու «Վուք, որ
 »այդպիսի քաջ անձին կեանքը անպիտան ու վա-
 »սակար համարեցիք ձեզի, ուրեմն ձերը ի՞նչ բանի
 »պիտի հարկաւորի մեզ, ո՞վ անզութ ու գաւա-
 »ճան մարդիկ՝ ասելով՝ զամէնքը մէկէն սպաննել
 սուլաւ:

Մխիթարայ հաւատարիմ մարդիկն ի՞նչ եղան.
 — Յովհաննէս իշխանին քովը գնացին որ Տաճ-

կաց դէմ Աւտէացոց աշխարհին մէջ մեծ քաջու-
 թիւններ կանէր: Սա Մխիթարայ գլխուն եկածը
 լսելով՝ սխաւ կասկածել իւր մարդկանց գաւաճա-
 նութենէն, և ինքիւմէ Աւտէացոց աշխարհը Տաճ-
 կաց յանձնելով՝ երաւ Ռուսաստանի Մտէրիսան
 քաղաքը դնաց, ուր մեծ պատուով ապրեց ու խա-
 զաղութեամբ մեռաւ:

Յովհաննէսէն յետոյ ո՞վ անուանի եղաւ Շի-
 րակ գաւառին մէջ:

— Աղասի անունով քաջ երիտասարդը (1820—
 1827), որ պարսիկ ու քիւրա պէյէրու յարձակ-
 մունքէն՝ Անի քաղաքն ու նորա մերձակայ գեղերը
 պաշտպանեց: Սա երբ 1827-ին Պարսից և Ռուսաց
 պատերազմին մէջ մեծամեծ քաջութիւններ անե-
 լէն վերջը՝ մէկ դարանակալ պարսիկէ վարնուելով՝
 մեռնելու վերայ էր, արիւնը ձեռքին մէջ առաւ
 դէպ ի Մասիս երկընցուց ու «Բնդունէ՛ Հայաստան,
 քու սիրոյդ համար թափած արիւնս» ասելով՝ հո-
 գին փչեց ու հայրենասիրաց կարգն անցաւ:

Պարսից և Ռուսաց պատերազմն ինչո՞վ վեր-
 ջացաւ.

— Այսու, որ Հայաստանի մէկ մասն ևս 1827
 թուականին վերջերը Ռուսաց ձեռքն անցաւ:

Ռուսաց տէրութիւնը ի՞նչպէս վարուեցաւ իւր հպատակ Հայոց հետ .

— Ամենայն մարդասիրութեամբ : Սորա յայտնի ապացոյցն է բոլոր Ռուսիարեանի Հայոց խողաղ վիճակը, որք հեաղհեառէ զանազան արտօնութիւններ ընդունելով Ռուսաց կայսրներէն, ամեն ատիճանի մարդիկ, ամենայն ժամանակէն աւելի պատուոյ մէջ են, և այժմ զիտութեամբ ու կրթութեամբ յաւաքանալու վերայ են :



ՃԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Ի Շ Խ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն Հ Ա Յ Կ Ա Ջ Ա Ն Ց

Քրիստոսէն յառաջ .

2107	Հայկ 50 տարի .	1197	Հօրոյ 3.
2026	Արմենակ 46.	1194	Զարմայր 12.
1980	Արամայիս 40.	1180	Շաւարշ Բ, 44.
1940	Ամասիա 32.	1137	Պերճ Ա, 35.
1908	Գեղամ 50.	1102	Արրուն 27.
1858	Հարմա 32.	1075	Պերճ Բ, 40.
1827	Արամ 58.	1035	Բաղուկ 50.
1769	Արայ 26.	985	Հոյ 44.
1743	Կարդոս 18.	941	Յուսակ 31.
1725	Անուշաւան 60.	910	Ամբակ Բ, 27.
1662	Պարէտ 50.	883	Կայսակ 45.
1612	Արբակ 40.	838	Փառնաւաղ Ա, 17.
1568	Զաւան 37.	805	Փառնակ Բ, 40.
1531	Փառնակ Ա, 53.	765	Սկայորդի 17.
1478	Սուր 25.	748	Պարոյր 5.
1433	Հաւանակ 30.	743	Պարոյրը Թադաւոր կը պատկուի 44.
1403	Վաշտակ 42.	700	Հրաշեայ 42.
1381	Հայկակ Ա, 18.	678	Փառնաւաղ Բ, 13.
1363	Ամբակ Ա, 14.	665	Պաճոյճ 35.
1349	Առնակ 17.	630	Կոռնակ 8.
1332	Շաւարշ Ա, 6.	622	Փաւոս 17.
1326	Նորայր 24.	605	Հայկակ Բ, 36.
1302	Վստամ 14.	569	Երուանդ Ա, 4.
1289	Կար 4.	565	Տէգրան Ա, 45.
1285	Գոռակ 18.	520	Վահագն 27.
1267	Հրանտ Ա, 27.	493	Առաւան 18.
1242	Ընձակ 15.	475	Ներսէհ 35.
1227	Գղակ 30.		

410 Զարեհ 46.
394 Արմոզ 9.
385 Բայդամ 14.

371 Վան 20.
351 Վահե 23.

ԿՈՒՍԱԿԱԼՔ.

325 Միհրան 5.
319 Նեպոտոգոմեոս 2.
317 Ադուարդ 35.
284 Հրանտ Բ, 45.

239 Արտաւազ 50.
189 { Արտաշէաս } 30.
 { Զաւրատ }
159 Արտաւազդ 10.



ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԱՐՇԱԿՈՒՆԵԱՅ

Քրիստոսէն յառաջ.

149 Վաղարշակ Ա. 22 տարի.
127 Արշակ Ա. 13.
114 Արտաշէս Ա. 25.
89 Տիգրան Բ, 54.

55 Արտաւազդ Ա. 5.
30 Արշամ 40.
1 Արգաթ 38.

Քրիստոսէն յետոյ.

30 Արգաթ քրիստոսնեայ կմիրտուի.
34 Անանէ 4.
38 Սանատրուկ 30.
68 Երուանդ Բ, 20.
88 Արտաշէս Բ, 41.
129 Արտաւազդ Բ, 2.
131 Տիրան Ա, 21.
152 Տիրքրան Գ, 22.
194 Վաղարշ 20.
214 Խոսրով Ա, 45.
257 Ս. Գրիգոր Լուսաւորիչ և կճնանի.
(259 Արտաշէր Հայաստանի կտիրէ 25.
283 Շապուհ կտիրէ 2.)
286 Տրդատ 56.

301 Ս. Հռիփսիմեանք կընահատուի.
302 Տրդատ ազգովիւր կմիրտուի և քրիստոսնեայ կլինի.
341 Տրդատ կմեռնի.
344 Խոսրով Բ, 9.
353 Տիրան Բ, 11.
363 Արշակ Բ, 18.
381 Պապ 3 կամ 7.
383 Մեծն Ներսէս կապանուի.
384 Վարազդատ 2.
386 { Արշակ Գ, 3.
 { Վաղարշակ Բ, 1.
388 Խոսրով Գ, 4.

392 Վրամշապուհ 21.
406 Ս. Մեթրոպոլիտ Զեոքոյը Հայոց
 Նշանադրերը հնարուեցան .

415 Շապուհ 4.
422 Արտաշէր (Արտաշէս) 6.

ՄԱՐԶՊԱՆՔ.

428 Վեհապետապետ 14.
442 Վասակ 10.
451 Վարդանանք նահատակուեցան.
452 Ատորոմիզդ 12.
464 Ատրվշնասպ 17.
481 Սահակ Ա, 1.
483 Շապուհ 6 ամիս.
484 Անդեկան 7 ամիս.
485 Վահան 26.
511 Վարդ 4.

515 Բուրդան 3.
518 Մէթ Գնունի 30.
548 Գեղապետ 4.
542 Վշնասպաշրամ 6.
558 Վարազդատ 6.
564 Սուրէն 7.
571 Վարդան 7.
578 Միհրան 15.
593 Սմբատ 8.
601 Գաւիթ 24.
625 Վարազդատիւրց 7.

ԿԻՒՐԱՊԱՂԱՏՔ.


632 Գաւիթ 4.
636 Թէոդորոս 7.
643 Վարազդատիւրց 8 ամիս.
644 Սմբատ 10.
654 Համազասպ 5.
659 Գրիգոր 24.

685 Աշոտ 4.
690 Ներսէհ 4.
695 Սմբատ 9.
743 Աշոտ 15.
760 Սահակ Բ, 6.
835 Բաղարատ 14.

ՈՍՏԻԿԱՆՔ.

693 Արդւլա 2.
704 Վաշմ 13.
717 Վելիթ 10.
727 Մահմա 5.
732 Արդւլաիզ 10.
742 Մրուան 1.
758 Եղիտ Ա, 2.
766 Սելէյման 3.

769 Պէքիբ 9.
778 Հասան 3.
786 Եղիտ Բ, 12.
798 Խուզիմայ 20.
818 Հոլ 17.
848 Արուսէթի 1.
850 Բուշայ 5.
855 Շեխի 4.



ԹԱԳԱԻՈՐՈՒԹԻՒՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՅ.

889 Աշոտ Ա, 26 տարի.	977 Սմբատ Բ, 12.
885 Աշոտ Ա թագաւոր կգտանկուի ու Հինգ տարի կթագաւորէ.	989 Գագիկ Ա, 29. 1020 Յովհաննէս 20.
890 Սմբատ Ա, 23.	1042 Գագիկ երկրորդ կամ վերջին 3.
914 Աշոտ Բ, 14.	1046 Բաղրատունեաց աերուծիւնը վերջացաւ.
928 Աբաս 24.	
952 Աշոտ Գ, 26.	1079 Գագիկ Բ սարսուեցաւ.

ԿԱՍՊՈՒՐԱԿԱՆԵՒ ԵՒ ԿԱՐՍԻ ԹԱԳԱԻՈՐՆԵՐԸ.

908 Գագիկ Արծրունի 29.	972 Սենեքերիմ 55.
921 Աշոտ Շապուհեան 15.	1022 Սենեքերիմ Սեբաստիա գնաց, 59 տարւան մէջ երեք յա- ջորդք ունեցաւ (1022—1080), ու յետոյ իշխանութիւննին գաղտնեցաւ:
937 Դերենիկ Աշոտ 16.	
953 Աբուսահալ 19.	
962 Մուշեղ 23.	
972 { Աշոտ Սահակ 14. Գուրգէն Խաչիկ 32.	

ԹԱԳԱԻՈՐՈՒԹԻՒՆ ՌՈՒԲԻՆԵԱՅ.

1080 Ռուբէն Ա, 15 տարի.	1224 Հեթում Ա, 45.
1095 Կոստանդին Ա, 5.	1269 Լեոն Գ, 20.
1100 Թորոս Ա, 23.	1289 Հեթում Բ, 4.
1123 Լեոն Ա, 15.	1293 Թորոս Գ, 2.
1144 Թորոս Բ, 24 տարի.	1296 Սմբատ 2.
1168 Թովմաս սպայ 1.	1298 Կոստանդին Բ, 2.
1169 ՄԼԿ 5.	1300 Հեթում Բ, վերստին 5.
1174 Ռուբէն Բ, 11;	1305 Լեոն Գ, 3.
1185 Լեոն Բ, 14.	1308 Օշին 12.
1198 Լեոն Բ թագաւոր կո- ծուի և 21 տարի կթա- գաւորէ.	1320 Լեոն Ե, 22. 1342 Կոստանդին Գ, 1. 1343 Գուրգէն կամ Վիտ 2. 1345 Կոստանդին Գ, 18. 1365 Լեոն վերջին 11.
1219 Զապէլ 1.	
1220 Փիլիպպոս 2.	

ՅԱՆԿ ՆՆՈՒԹՈՅ

ԳՆՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Ի ՇԽԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԶԱՆՅ.

Խոս Ա. Հայկէն մինչև Արմենակ.	5—8
— Բ. Հայկայ յաջորդներէն մինչև Արամ	9—11
— Գ. Արամ և նորա քաջութիւնները	12—15
— Դ. Արայէն մինչև Պարոյր.	15—18

ԹԱԳԱԻՈՐՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԶԱՆՅ.

— Ե. Պարոյրէն մինչև Երուանդ Ա	18—20
— Ջ. Տեղբան Ա-էն մինչև Հայկազանց թագաւորութեան վերջանալը.	20—23

ԿՈՒՍԱԿԱԼԻ.

— Ե. Միհրանէն մինչև Արտաւազդ վերջին	23—25
-------------------------------------	-------

ՔԱՂՈՒԱԾՔ.

— Ը. Հայկէն մինչև Պարոյրի թագաւորելը	26—27
— Թ. Պարոյրէն մինչև Հայկազանց թագաւորութեան վեր- ջանալը	27—28

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԱՐՀԱԿՈՒՆԵԱՑ

Դաս ժ. Վաղարշակէն մինչև Արշակ Ա 29—32

— ժԱ. Արշակ Ա-էն մինչև Տիգրան Բ. 32—35

— ժԲ. Տիգրան երկրորդ և նորա զաջութիւնները 35—38

— ժԳ. Արտաւազդէն մինչև Արգար 39—41

— ժԴ. Արգար և նորա գործերը 42—45

— ժԵ. Մանէէն մինչև Արտաշէս Բ. 46—48

— ժԶ. Արտաշէս Բ-էն մինչև Տրդատ 49—52

— ժԷ. Մեծն խոսրով և նորա գործերը 52—55

— ժԸ. Տրդատ և խոսրով երկրորդ 55—59

— ժԹ. Տերան և Արշակ 59—62

— Ի. Պապ և Վարդադատ 62—66

— ԻԱ. Արշակ երրորդ, Վաղարշակ երկրորդ և խոսրով երրորդ 67—69

— ԻԲ. Վրամշասպուհ և նորա գործերը 70—72

— ԻԳ. խոսրով Գ-էն մինչև Արշակունեաց թագաւորու-
թեան վերջանալը 72—74

ՄԱՐԶՊԱՆՔ.

— ԻԴ. Վէհմիհրապուհ և Վարդանանց պատերազմը 75—80

— ԻԵ. Ատրորմիզդ, Ատրվինասպ և Վահանայ պատերազմը 81—84

— ԻԶ. Վարդան Բ-էն մինչև Սմբատ Բազմայաղթ 84—91

— ԻԷ. Սմբատայ կիւրապաշտութեանէն մինչև Բագրատու-
նեաց թագաւորութեան սկիզբը 92—95

ՔԱՂՈՒԱԾՔ.

— ԻԸ. Վաղարշակէն մինչև Մեծն խոսրով 96—98

— ԻԹ. Մեծն խոսրովու թագաւորիւնէն մինչև Արշակուն-
եաց թագաւորութեան վերջանալը 98—100

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՑ.

Դաս Լ. Աշոտ Բագրատունի և Սմբատ առաջին 101—106

— ԼԱ. Աշոտ երկրորդ և Աբաս 106—112

— ԼԲ. Աշոտ երրորդէն մինչև Սկիւթացի թագաւորաց ար-
շաւանքը 112—117

— ԼԳ. Սկիւթացի թագաւորաց արշաւանքէն մինչև Գագիկ
երկրորդի թագաւորելը 118—122

— ԼԴ. Գագիկ երկրորդէն մինչև Բագրատունեաց թագա-
ւորութեան վերջանալը 123—126

ՔԱՂՈՒԱԾՔ.

— ԼԵ. 127—128

ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՌՈՒԲԻՆԵՆԱՆՑ.

— ԼԶ. Ռուբին առաջինէն մինչև Լեոն երկրորդ 129—135

— ԼԷ. Լեոն երկրորդէն մինչև Հեթում երկրորդ 135—141

— ԼԸ. Հեթում երկրորդէն մինչև Ռուբինեանց թագաւո-
րութեան վերջանալը 141—148

ՔԱՂՈՒԱԾՔ.

— ԼԹ. 149—150

— Խ. Հայաստանը Պարսից, Տաճկաց և Ռուսաց իշխա-
նութեան տակ 151—156

ժամանակագրութիւնք 157—160

Յանկ նիւթոց 161—163



1870

1870

1870

1870

1870

1870

1870

1870

1870

1870

1870

1870

1870

1870

1870

1870

1870

1870

1870

1870

1870

1870

ՀՀ Ազգային գրադարան



NL0685903

